

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՍՈՑԻԱԼԻՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր Յ Ե Վ Ր Ո Պ Ա Կ Ա Ն ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ VI ԽՄԲԻ, ԿՊ
ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Պ Ր Ա Կ Դ.

ԿԱԶՄԵՑ՝ ՅԵ. ԶԱՐԵՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

8-82
3-79

ՆՄՈՒՇՆԵՐ
ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՊՐԱԿ Դ.

ԿԱԶՄԵՑ՝ ՅԵ. ՉԱՐԵՆՑ



2773

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1929

Վ. ՌԵՅՄՈՆՏ

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ

Գլուղական անտառը կտրում են:

Մի վայրկյանում լուրը տարածվեց ամբողջ գլուղում, բռնկվեց վորպես հրդեհ, ամենքն էլ համակվեցին խոր վշտով և սարսափելի զայրույթով: Խրճիթների դռներն էլ չեղին փակում, բոլորն էլ վազում էին՝ նորոթվումը բերանում:

Յեվ ահա բոլորը միասին, խմբով գնացին Կլեմբյակի մոտ, նրանց հետևեցին բազմաթիվ տղամարդիկ, կին ու չերեխա: Դռները փակվեցին և վոչ վոքի ներս չեղին թողնում: Վոչտկա Կլեմբյակին պատվիրեցին հսկել մուտքի մոտ... Վոստիկանը չերևար թե չե...

Տան առաջ, բազում, նույնիսկ ճանապարհին բազմաթիվ մարդիկ էլին հավաքվել: Բոլորն էլ հետաքրքրվում էին, թե ի՞նչ են վորոշելու ավագները, վորոնք չերկար էին խորհրդակցում: Յեվ վոչ վոք չգիտեր, թե ի՞նչ են ասում, ի՞նչ են վորոշում: Պատահանից չերևում էին վառարանին հենած նրանց գլուխները: Մի կողմի վրա կանգնել էր Կլեմբը: Նա նրանց ինչ-վոր բան եր ասում, կռանում եր և շուտ շուտ բռունցքով սեղանին խփում:

Սպասողների համբերությունը ըստի առ ըստի աճում եր: Վերջապես Կոբուսը, Կոզլովան և չերիտասարդներին միջանիսն սկսեցին տրանջալ և հարձակվել խորհրդակցողների վրա, վոր նրանք իբր թե ժողովրդի համար լավ բան չեն վորոշել, վորովհետև իրենց հոգսն են տեսնում, ով գիտե, գուցե թե տեղն ընկած ժամանակ հաշտվեն կալվածատիրոջ հետ և մյուսներին խորտակեն...

Կոբուսը հողագործերին և չքավորներին հետ միասին զայրացել էր, խորհուրդ եր տալիս չլսել ծերունիներին, իրենց գլխի ճաբը տեսնել, քանի ժամանակ կա՝ մի բան վորոշել, քանի դեռ նրանք չեն դավաճանել...

Բաց չերևաց Մատեուշը, կանչեց ժողովրդին դեպի միկիտանի կողմը, վորպեսզի աջատեղ ազատ համարձակ խորհրդակցեն և վոչ թե շների պես հաչեն ուրիշի ցանկապատի մոտ: Ժողովրդին այդ բանը դուր չեկավ, և բազմութունը շարժվեց դեպի միկիտանը:



2026-54

Հրջան ճրագները հանգցրել եր, բայց ստիպված եր դուռը բաց անել և չերկյուղով նայել ներս մտնող ամբոխին: Նրանք գալիս էին լուռ ու մռայլ, գրավում նստարանները, անկյուններն ու սեղանները, սակայն վոչ վոք չեր խմում և բոլորը, բաժանված փոքրիկ խմբերի, կամացուկ փսփսում էին ու սպասում, թե ով է լինելու առաջին խոսողը:

Շատերն էին ուզում առաջինը խոսել, բայց դեռ զսպում էին, իրար նայում: Վերջապես Անտեկը դուրս թռավ, կանգնեց մեջտեղում և միանգամից սկսեց հարձակվել կալվածատերերի վրա:

Վերջում ինչքան ուժ ունեւ՝ գոռաց:

— Յեղբայրներ, չտաք, չթողնեք մեզ նեղացնեն: Այսօր ձեր անտառն են խլել, չեթե չպաշտպանվեք, վաղը ձեր հողը կխլեն, ձեր տունը և ինչ վոր ունեւք: Ո՞վ կարգելի նրանց, ո՞վ կդիմադրի նրանց:

Ժողովուրդը խռնվեց հանկարծ, խուլ բողոք անցավ խրճիթի մեջ, հուզվեցին, աչքերը վայրենի կատաղությամբ փայլեցին, հարյուր բռունցք միանգամից վեր բարձրացան, և հարյուր կրծքից, վարպես վորոտ, դուրս թռավ:

— Ձենք տա... Ձենք թողնի, — գոռում էին նրանք և շենքը ցնցվում եր:

Ղեկավարները հենց դրան էին սպասում: Մատեուշը, Կոբուսը, Կոզլովան և մյուսները մեջտեղ անցան և սկսեցին գոռալ հայհոյել... Յեվ միկիտան իսկույն լցվեց աղմուկով, կանչերով, սպառնալիքով ու անեծքով, վրաբերով դուրս էին, բռունցքով զարկում սեղանին և անեղ ու կատաղի դարձավ զայրացած ամբոխի բողոքը:

Ամեն մեկը մի բան եր կանչում, ամեն մեկն իր զայրույթն եր արտահայտում, մի միջոց առաջարկում, և դեռ ու դեն էին ընկնում, մի չեղք փնտռում, ինչպես գոմում փակած շները, վորոնք զգում էին թշնամու մոտենալը: Աղմուկն ու աղաղակը սաստկացավ: Ժողովուրդը զայրացել եր, զգում եր, վոր նեղութուն են տալիս, բայց չեր կարողանում մի բանի հանգել: Մեկը չկար, վոր իր ուժով հաղթեր նրանց և դեպի հատուցում առաջնորդեր:

Նրանք խմբերով էին հավաքվել: Ամեն մի խումբ իր տաքացած խոսողն ուներ, վոր ամենից բարձր եր խոսում և հայհոյում, բազմության մեջ շատերը դեռ ու դեն էին ընկնում, խոսքեր առնում սրան նրան, թելադրում, — և վերջում մեկը մյուսին չեր լսում, վորովհետև բոլորն ել միասին էին կանչում:

— Անտառի կեսը կարել են, իսկ ենտեղ ենալիսի կաղնի կա, վոր հինգ մարդով չես խտտի...

— Կլեմբյակը տեսել ե, Կլեմբյակը:

— Մնացածն ել կկարեն, մնացածն ել: Մեզնից թուլտվութուն չեն հարցնի, — կանչում եր Կոզլովան, բոթելով սրան նրան:

— Նրանք չերե ել կարողացել են, մեզ նեղել են:

— Յեթե դուք վոչխարի նման հիմար եք, թող ով ուզում ե ձեզ ծախի:

— Անձնատուր չենք լինի, չենք լինի... Ամբողջ համայնքով կդնանք, անտառը կխլենք...

— Կապանենք, — գոռացին բոլորը և նորից անեղ բռունցքները բարձրացան, սոսկալի ճիչ լսվեց և ամբոխը պոռթկաց ատելութունից ու վրեժի ծարավից: Յերբ հանդարտեց, Մատեուշը դարձավ լուրալիսներին և կանչեց:

— Բոլորիս համար ել նեղ ե, ինչպես ցանցի մեջ... Ամեն տեղ կալվածատիրոջ հողն ե, ամեն կողմից հուպ են տալիս գյուղին: Ուզում ես կովդ արոտ ուղարկել գյուղի մոտ, — ընկնում ե կալվածատիրոջ արտը, ձին ես արձակում, — միջնակից աջ կողմնա հողն ե: Քար ել չենք կարող քցել, աղալի հողը կընկնի: Յեվ իսկույն կբռնեն կոռ անելու համար, իսկույն դատարան ու տուգանք:

— Ճշմարիտ ե, ճշմարիտ ե... Լավ արտը աղալինն ե, լավ վարելահողը նրանն ե, անտառն աղալինն ե, մի խոսքով ամեն ինչ նրանն ե, — ասում էին այս ու այն կողմից:

— Իսկ դու, ժողովուրդ, տանդ նստի չոր հողի վրա, աղբով տաքացի և սպասի աղալի վորորմությանը:

— Խլել անտառը, հողը խլել... Մերը չենք տա...

Այդպես չերկար ժամանակ կանչում էին, դեռ ու դեն ընկնում, հայհոյում ու սպառնում: Յեվ վորովհետև բարձրաձայն էին խորհրդակցում և այն ել այդքան զայրացած, — դրա համար ել միքանիսն ողի էին խմում՝ ուժ առնելու համար, միքանիսը՝ զարեջուր, վորպեսզի հանդարտվեն, վոմանք ել մտաբերելով, վոր չեն ընթերել, ձայն տվին հրջային, վոր հաց ու ձուկ տա:

Յերբ կերան ու խմեցին, նրանց զայրույթը հանդարտեց, նրանք առանց մի բան վորոշելու, սկսեցին կամացուկ ցրվել:

Մատեուշը Կոբուսի և Անտեկի հետ միասին (Անտեկն ամբողջ օրը լուռ եր և մի բան եր մտածում) գնացին Կլեմբի մոտ, և այնտեղ տեսնելով մյուսներին, վաղվա համար վորոշում հանեցին և ցրվեցին, ամեն մարդ իր տունը:

Յեվ հենց լուսաբացին, չերբ մարդիկ իրենց քնաթաթախ աչքերն էին արթնում և քնից ծանրացած գլուխը վեր հանում, — Անտեկը վաղեց դեպի դանդաղատունը, սկսեց զանգերը քաշել, ասես թե հրդեհի չեր կանչում...

Ձանգերը դանդաղ ելին դարկում, անընդհատ և այնքան մոռալ՝
վոր շատերի սրտը ան մտավ, և յերկյուղած մարդիկ հուզմունքից,
կիսատ հագնվելով, դուրս ելին վազում, վոր հարցնեն, թե ինչ է
պատահել: Դուրս ելին վազում և խրճիթների դռներ քարացած սպա-
սում, լսում զանգերի ձայնը: Իսկ զանգերը հուսահատ և բարձր
ելին դարկում, առավոտյան կիսամութում դողում եր գետինը, վա-
խեցած թռչունները հեռանում ելին դեպի անտառը, իսկ հուզված
ամբոխը, խաչակնքում եր և սրտապնդում: Մատենուշը, Կորեուսը և
մյուսները վազվզում ելին գյուղի փողոցներով, փախով զարկում
դռներին և կանչում:

— Դեպի անտառը, դեպի անտառը, — ով վողջ է, թող դուրս
դա... դեպի անտառը, — և մարդիկ գլուխները կորցրած հագնվում
ելին, շատերը քայլում ելին և կոճակները քցում, կիսատ թողած
աքոթքը վերջացնում: Վազում ելին դեպի միկիտանը, ուր Կլեմբը
մի քանի հոգու հետ վաղուց սպասում եր:

Մեղրաճանձի պես խառնվեցին իրար. բակերում ու խրճիթնե-
րում ամեն ինչ լեռաց, յերեխաները պակաս աղմուկ չելին բարձ-
րացնում, կանաչը այգիներում իրար ձայն ելին տալիս, խառնաշփոթ
եր և վազվզոց, կարծես թե գյուղում հրդեհ կար:

— Դեպի անտառը... Ով ինչով կարող ե... Գերանդի ունեցո-
ղը թող գերանդի առնի, յեղան, կացին, ցցեր, — բոլորը, բոլորը
թող դուրս գան:

— Դեպի անտառը, — այդ կանչից ողն եր դողում, ամբողջ
գյուղը գվկում եր:

Լուսը բացվեց: Խաղաղ և պայծառ ուր եր, մի քիչ ամպած ու
ցուրտ, ծառերը չեղյամով ելին պատել, ասես փաթաթվել ելին սար-
դի վոստանով: Բարակ սառուցով պատած գետինն ամեն բալա-
փոխի ձուռում եր, գուբերում յեղած ջուրը սառել եր, ճանապարհի
վրա մեկը կարծես ապակու կտորտանք եր շող տվել: Ողն այնքան
մաքուր եր, պարզ և սառը, վոր ամենուրեք տարածվում ելին ձայ-
ներն ու կանչերը: Սակայն գնալով ամեն ինչ հանդարտվեց, համա-
ռութունն ու ատելութունը համակեցին սրտերը, մի ինչ-վոր դա-
ժան, ինքնավստահ և ամեն ինչ ջարդող ուժ սրտերը քար դարձրեց,
համակեց նրանց գործի լրջության գիտակցությամբ: Նրանք լռել
ելին, ամեն մարդ քաշվել եր ներս և իր միտքն եր անում: Ամբոխը
մեծանում եր, զբաղվում ամբողջ հրապարակը, — միկիտանից մինչև
ճանապարհը, կանգնել ելին խիտ շարքերով, ուսը ուսին: Ուշացող-
ները գալիս ելին, միանում: Բարևում ելին լուռ, մի տեղ կանգնում,
նայում չորս կողմը և սպասում ավազներին, վորոնք գնացել ելին
Բորինյայի հետևից:

Գյուղում առաջինն եր նա, նա չել պիտի ժողովրդին առաջնոր-
դեր, առանց նրան վոչ մի գյուղացի տեղ չեր շարժվի:

Համբերությամբ և հանդարտ սպասում ելին նրանք, անտառի
նման, և ասես լսում ելին այն ձայները, վոր ներսում են հնչում՝
առվակների խոխոջը, վոր կորչում է ծառերի արանքում: Յերբեմն
թրթռալով մի խոսք եր հասնում, մեկը բռնացքը վեր եր հանում,
աչքերն ավելի ելին փայլատակում, գլխարկներն որորվում ելին,
յերբեմն մեկի դեմքն ավելի չեր կարմրատակում, — և ապա նորից
ելին հանդարտում, կանգնում անշարժ, ինչպես արտում շարքով
կիտած խուրճեր:

Մոտ վազեց դարբինը, հրելով առաջ անցավ, սկսեց վախեցնել
ժողովրդին, վոր նրանց մտածածի համար վողջ գյուղը բանտ կնստի
և կվոչնչանա: Ջաղացական ել նույնն եր կրկնում, բայց վոչ վոք
նրանց չեր լսում, ուշադրութուն չեր դարձնում, ամենքն ել քաջ
գիտեցին, վոր նրանք յերկուսն ել ծառայում են կալվածատերերին
և ոգուտ ունեն գյուղի գործը խափանելուց:

Ռոխն ել յեկավ, արցունքն աչքին սկսեց համոզել, բայց չոգնեց:

Վերջապես կսենձը յեկավ, սկսեց իր առածը կրկնել, — նրանք
չելին լսում, կանգնել ելին անշարժ: Վոչ վոք նույնիսկ գլխարկը
չհանեց, նրա աջը չհամբուրեց, մեկը նույնիսկ բարձրաձայն կանչեց.

— Նրան փող են տվել, դրա համար է խոսում...

Ամենքն ել այնպես թշնամաբար ու մոռալ նայեցին, վոր կսենձը
լաց յեղավ, բոլոր սրբերի անունով անիծելով նրանց, յեթե խելքի
չգան և տուն չդառնան: Սակայն նրա խոսքը թերի մնաց: Բորին-
յան յեկավ և ամբոխը յերեսը նրա կողմը դարձրեց:

Մատվեյ Բորինյան գունատ եր պատի նման և դաժան. նրա-
նից սառնութուն եր փչում, բայց աչքերը գալլի աչքերի նման
փայլում ելին: Նա քայլում եր գլուխը վեր պահած, մոռալ և ինք-
նավստահ, ծանոթներին գլուխ եր խոնարհում, մյուսներին աչքի
տակով նայում: Նրանք հետ ելին քաշվում, և ազատ ճանապարհ
բացում: Բորինյան բարձրացավ միկիտանի առաջ ընկած գերանի
վրա: Բայց նախքան նրա խոսելը, ամբոխը գոռաց.

— Մատվեյ, առաջնորդիր մեզ...

Յեվ յերբ հանդարտվեց, նա մի քիչ առաջ յեկավ, ձեռքերը մեկ-
նեց և հուժկու ձայնով ասաց.

— Քրիստոնյա ժողովուրդ, հավատացյալ լեհեր, բատրակներ
ու տերեր... Բոլորիս են նեղացրել, բոլորին հավասար և այնքան,
վոր ել չի կարելի վոչ գիմանալ և վոչ ել համբերել: Կալվածատերը
մեր անտառն է կտրում, մեզնից վոչ մեկին աշխատանք չի տալիս,

նա միշտ ել մեզ դեմ ե գնում, մեզ դեպի կործանումն ե տանում: Զի կարելի մեկ-մեկ հիշել բոլոր նեղությունները, բոլոր զրկանքներն ու տուգանքը, վոր կրել ե ժողովուրդը նրանից: Մենք դատաբանին ենք գանդատվել, բայց վոչինչ ել չենք ստացել: Իդուր տեղն ենք բողոքել: Մեր համբերության բաժակը լցվեց, վորովհետեւ նա մեր անտառն ե կտրում: Միթե մենք թույլ կտանք:

— Վոչ, վոչ, թույլ չենք տա... կքանդենք, կսպանենք, — բոլորն ելին կանչում, և գորշ, մռայլ դեմքերը հանկարծ բոցավառվում ելին, աչքերից կայծ եր թռչում, հարյուր բռունցք ելին բարձրանում ողում, և սոսկալի զայրույթից հարյուր կոկորդ եր վռնում:

— Իրավունքը մերն ե, բայց վոչ-վոք մեր իրավունքը չի ճանաչում: Անտառը մերն ե, բայց կտրում են... ել մենք ինչ անենք, չեք աշխարհի յերեսին մեկը չկա մեր հոգսը բաշի, բոլորն ել մեզ նեղացնում են: Միւրելի մարդիկ, քրիստոնյա լեհեր, յես ասում եմ, վոր ուրիշ չեւք չկա: Մեր ունեցածը մենք պետք ե պաշտպանենք, ամբողջ համայնքով գնանք ու չթողնենք, վոր մեր անտառը կտրեն: Բոլորս գնանք, ով կենդանի ե, ով կարող ե վտաքերը շարժել, ամբողջ գյուղով, մինչև վերջին մարդը: Վոչնչից չվախենաք, իրավունքը մեր կողմն ե, մեր կողմը կլինի և՛ ազատությունն ու արդարությունը: Ամբողջ գյուղին չեն պատժի, հետևեցեք ինձ, շուտ, դեպի անտառը, — ուժգին կանչեց նա:

— Դեպի անտառը, — պատասխանեցին բոլորը: Ամբոխը հուզվեց, ալեկոծվեց, ցրվլ յեկան, ամեն մարդ իր տունը գնաց պատրաստություն տեսնելու: Մարդիկ հագնվում ելին, ձիերն ելին լծում, սահնակները դուրս հանում: Լսելի չեր ձիերի վրնջոց, յերեսաների կանչ, հաչոյանք, կանանց հորդորներ: Ամբողջ գյուղը պատրաստություն եր տեսնում ու գողում: Միքանի ըոպե չանցած՝ նրանք, ովքեր պատրաստվել ելին, գնում ելին ուռիների ճանապարհով, ուր նրանց սպասում ելին Բորինյան, Պոշկան, Կլեմբը և մյուսները:

Շարք կազմեցին, ով ինչպես կարողացավ, և տղամարդիկ, կանայք, նույնիսկ մեծահասակ յերեխաները ճանապարհ ընկան, վոմանք սահնակով, վոմանք ձիավոր, վոմանք սալակի մեջ նստած, իսկ մնացածները, համարյա վողջ գյուղը՝ վոտքով: Նրանք գնում ելին խիա շարքերով և նման ելին յերկար արտի, վորի հասկերն ալիքանման հուզվում են: Տեղ-տեղ կարմրին ելին տալիս կանանչ զգեստները: Բարձր բռնել ելին յեղաններ, ժանգոտ ցցեր, շղթաներ, տեղ-տեղ կայծակի նման փայլատակում ելին գերանդիները, կարծես թե դաշտ ելին գնում: Զեր լսվում վոչ ծիծաղ, վոչ կատակ և

վոչ ել ուրախ կանչ: Նրանք հանդարտ ելին, մռայլ, ամեն բանի պատրաստ՝ յեթե ժամանակը գա: Բորինյան սահնակի մեջ կանգնեց, նայեց ժողովրդին և խաչակնքելով, կանչեց.

— Հանուն հոր և վորդո և սուրբ հոգույն, ամեն... Շարժվենք:

— Ամեն, ամեն, — կրկնեցին նրանք, և հենց այդ ժամանակ յեկեղեցու փոքրիկ զանգակները հնչեցին: Կսենձը պատարագն եր սկսում: Մարդիկ խաչակնքում ելին, գլխարկները հանում, կուրծք ծեծում, մերթ ընդ մերթ մեկն աղիողորմ հառաչում եր: Յեվ նրանք քայլում ելին լուռ, շարքերով, համարյա վողջ գյուղը: Միայն դարբինն եր հետ մնացել, պահվել մի բակում, աջտեղից տուն գնացել ու ձին նստել, ծածուկ ճանապարհով շտապել դեպի կալվածքը: Անտեկը, հորը տեսնելուց հետո, թաք եր կացել միկիտանում, և յերբ ժողովուրդն սկսել եր շարժվել, հրեստի հրացանն առել եր, պահել չուխալի տակ և ուղիղ դեպի անտառը վազել, առանց նայելու ամբոխին:

Իսկ ամբոխը Բորինյային հետևում եր արագ քայլերով:

Դիշերային սառնությունը պատել եր յերկիրը, մշուշ կար և խաղաղ լուռություն:

Յուրտը ծակծկում եր, լուռությունը համակել եր անտառը և դժգույն արշալույսը փայլում եր կատարների վրա և տեղ-տեղ սպիտակ ձյունը պսպղում եր:

Միայն Գալլի Փոսերի մոտ լսվում եր ընկնող ծառերի աղմուկ, կացնի հարվածներ և սղոցի սուր զրնգոց: Անտառը կտրատում ելին:

Քառասունից ավել գյուղացիներ լուսաբացից աշխատում ելին: Փայտփորների յերամի նման նրանք հարձակվել ելին անտառի վրա, կպել ելին ծառերին և կատաղությունը ու սառնասիրտ զարկում ելին ծառերին: Մեկը մյուսի հետևից ծառերը զլորվում ելին, բացուտը լայնանում եր, կտրած հսկաներն ընկնում ելին թևատարած, վորպես կոխկրտած հասկեր: Միայն տեղ-տեղ մնում ելին սերմնակալ ծառերը, վորոնք մայրերի պես լալիս ելին ընկած վորդիների վրա: Տեղ-տեղ տխուր սոսափում ելին թուփերը, մի թշվառ ծառ, վորին կացինը չեր կպել, յերկուղից գողում եր, և ամենուր կոխկրտած ձյան վրա ընկած ելին ջարդված ծառեր, ճյուղերի կույտ, թառամած կատարներ և վիթխարի բներ, վոր նման ելին պատռոտած, ջարդված մեռելների: Տաշեղների դեղին կտորները, վորպես անտառի արյուն, ընկած ելին ձյան վրա:

Կտրած տեղի չորս կողմը, ինչպես բաց գերեզմանի առաջ, խիտ, հզոր, հպարտ և անթափանց պատի նման կանգնել եր ան-

տառը: Կարծես ջարդվածները նրանց մտերիմն էլին, հարազատն ու ծանոթը, և հուզմունքից լուրով, զսպում էլին նրանք հուսահատության ճիչը և լուծում էլին, թե ինչպես են ընկնում, նալում էլին այդ սոսկալի և անխնա հունձին:

Փայտհատներն առանց հանգստանալու առաջ էլին շարժվում, հսկա զանգվածի նման և դանդաղ ու լուռ ներս էլին մխրձվում անտառի խորքը: Իսկ անտառը կողք-կողքի բուսած ծառերի բարձր ու մուգլ պատով ասես աշխատում եր նրանց ճանապարհը փակել և կախվում եր նրանց վրա վիթխարի ու ծանր, այնպես վոր փայտհատները կորչում էլին ճյուղերի մեջ և կիսամութում փայտա-կում էլին կացինները, զարկում անխնա: Միայն սղոցի զրնգոցն եր լսելի: Ծառը չերերվում եր և հանկարծ, թուշունի նման, թևը վիրավոր, բաժանվում եր չուրայիններից, ճյուղերը թափահարում և մահվան հառաչով գետին փոխում: Նրա յետևից չերկրորդը, չեր-րորդը, տասերորդը... Ընկնում էլին սոսինները, վոր ծերուկությունից կանաչել էլին, չեղենները, վորոնք կարծես քաթանի շապիկ էլին հագել: Ընկնում էլին սև կաղնիները, վորոնց վրա գորշ մամուռը մերուք եր կպցրել, — ասես ծերեր էլին, վորոնց վոչ հարյուր տարին ե հեղաջրել և վոչ ել կաշմակն ե հաղթել... Այժմ կացինը նրանց մահ ե բերում: Իսկ ո՞վ կարող ե ասել, թե մյուս ծառերից քանիսն ընկան...

Անտառը հառաչելով եր մեռնում, ծառերն ընկնում էլին ծան-րությամբ, ինչպես սեղմ շարքով պատերազմի դուրս չեկած գյու-ղացիներ, վորոնք իրար են սեղմում, ամուր են և դիմացկուն, սա-կայն ընկնում են անհաղթ մի ուժից: Ընկնում են և չեն կարողա-նում ճշալ, ամբողջ պատով են ընկնում դաժան մահվան գիրկը:

Անտառում հառաչ կար, ընկնող ծառերից գետինը դողում եր, կացինները զարկում էլին անընդհատ, սղոցների զրնգոցը չեր հան-դարտվում և ճյուղերի սուլոցը, վորպես վերջին հառաչ, ոգն եր ճեղքում:

Յեվ այսպես ժամերն անցնում էլին իրար հետևից: Աշխատանքը չեր վերջանում և նորանոր ծառեր էլին գլորվում:

Սերմնակալ ծառերի վրայից կաշաղակները կանչում էլին, մահվան դաշտի վրայով չերբեմն ագռավների մի չերամ եր անցնում և կոնչում, անտառի խորքից չերբեմն մի գազան գլուխը հանում եր և պսպղան աչքերով նալում խարուկներից բարձրացող ծխի քուլաներին, ընկնող ծառերին և մարդկանց տեսնելով՝ ձգրտոցով փախչում եր:

Իսկ գյուղացիները կատաղությամբ էլին ջարդում, մտնում ան-տառի խորքը, ինչպես գալերն են մտնում հոտի մեջ... վոչխարը

մահվան դեղով կուչ ե գալիս, աղիողորմ մկկում և սպասում, վոր վերջին վոչխարն ընկնի ժանիքների հարվածից:

Յեվ միայն նախաձաշից հետո, չերը արեն այնքան բարձրա-ցավ, վոր չեղյալն սկսեց ճյուղերից կաթկթալ, և լույսի վոսկե սար-դերն սկսեցին փայլել անտառում, մեկը լսեց հեռավոր աղմուկ:

— Ինչ վոր մարդիկ են գալիս մեծ խմբով, — ասաց մեկը, ա-կանջը մոտեցրեց ծառի ընկն:

Աղմուկը գնալով մոտենում եր, շուտով լսելի չեղան հատ ու կենտ ձայներ և անհամար վոտքերի դոփշուն: Միքանի ըոպե չան-ցած գյուղից չեկող ճանապարհի վրա չերեաց սահնակը, վորի վրա կանգնած եր Բորինյան: Իսկ նրա հետևից՝ ձիավոր, վոտքով ու սահնակով չերեխանների, տղամարդկանց ու կանանց բազմութունը դուրս թափվեց և բոլորն ել բարձր կանչերով հարձակվեցին փայտ-հատների վրա: Բորինյան թռավ սահնակից և ամենից առաջ վազեց: Նրա հետևից վազեցին մյուսները, վորը փայտով, վորը չե-ղանով, վորը գերանգիով, վոմանք ել փայտերով, իսկ կանաչը՝ բուռնցքներով ու ճիչով: Յեվ բոլորն ել հարձակվեցին վախեցած փայտհատների վրա:

— Դուրս կորեք անտառից... Չկտրեք: Անտառը մերն ե, թույլ չենք տա, — կանչում էլին բոլորը միասին և վոչ-վոք չեր հասկա-նում, թե ինչ ե հարկավոր: Վերջապես Բորինյան մոտեցավ շփոթ-ված փայտհատներին և այնպես կանչեց, վոր ամբողջ անտառն ար-ձագանք տվավ:

— Ինչ վոր ձերն ե, առեք և գնացեք: Թույլ չենք տալիս, վոր անտառը կտրեք: Իսկ ով չի լսի, ժողովրդի հետ գործ կունենա:

Նրանք չնդդիմացան: Կովի պատրաստ, զայրացած բազմության անեղ ղեմքերը, փայտերն ու չեղանները նրանց սարսափի մեջ քցե-ցին: Նրանք սկսեցին համոզվել և իրար ձայն տալ, կացինները խրել գոտկատեղում, սղոցները հավաքել, և խուլ բողոքով խուժը-խուժը բաշվել: Իսկ ժողովուրդը գոռում եր անեղությամբ, հետևում եր նրանց ու դուրս անում անտառից:

Վոմանք վազեցին խարուկները հանգցնելու և քանդելու փայ-տի դարսած կիտուկները, իսկ կանաչը, Կողովաչի գլխավորությամբ տախտակներից շինած վրանները տեսնելով, հարձակվեցին, սկսե-ցին քանդել, ցրել տալ անտառում, վորպեսզի հետքն ել չերեա:

Յերը փայտհատները քաշվեցին, Բորինյան հավաքեց ավազ-ներին և սկսեց համոզել նրանց, ամբողջ համայնքով կալվածատի-րոջ մոտ գնալու և նրան հայտարարելու, վոր չհամարձակվի ան-տառին ձեռք տալ, մինչև դատարանով գյուղացիք հետ կստանան:

ան, ինչ իրենց սեփականությունն եւ Բայց նրանք դեռ չէին վերջացրել խոսակցությունը, դեռ չէին վորոշել, թե վոր միջոցն ընտրեն, յերբ կանաչ աղաղակ բարձրացրին, փախան վրանները: Տասը տասնհինգ ձիավորներ դուրս լեկան անտառից և նրանց վրա քշեցին:

Կալվածքը վաղուց եր տեղեկություն ստացել, և ձիավորները փախտահարներին ոգնություն ելին շտապել:

Բանվորների առաջից գնում եր կալվածքի կառավարիչը: Մոտենալով կտրված տեղին նրանք հանկարծ հարձակվել ելին կանանց վրա. սկսել ելին մտրակներով ծեծել: Կառավարիչը, վոր լեզան պես առողջ եր, առաջինը խփեց և գոռաց.

— Գողեր, վոջլոտներ... Մտրակով, մտրակով... Կապեք դրանց: Տարեք բանտը...

— Ինձ մոտ հավաքվեք, անձնատուր չլինեք,— կանչեց Բորինյան: Ժողովուրդը վախից փախչել սկսեց, բայց նրա ձայնը լսելով, տեղում կանգնեցին և ուշք չդարձնելով անընդհատ տեղացող մտրակի հարվածներին, վաղեցին ծերունու մոտ, ձեռքերով ծածկելով գլուխները:

— Շան վորդիններին փախտերով... Յեղաններով ձիերին,— գոռաց գազազած ծերունին և մի ցից ձեռքը բցելով, առաջինը հարձակվեց կալվածքից լեկած մարդկանց վրա: Պատահածին հարվածում եր, իսկ նրա հետևից, գալուստով բռնկված անտառի նման գլուղացիներն ուսը ուսին, լեղանը լեղանի կողքին, գերանդին գերանդու մոտ սարսափելի ճիչով վրա տվին, ծեծելով նրանց, ով ինչով կարող եր:

Յեվ զրնգաց անտառը: Մարդկային ճիչ չեր, վոր բարձրացավ. անեծք, աղմուկ, վիրավոր ձիերի խռոց, վիրավորների հառաչ, ցցերի խուլ հարվածներ, խռպոտ կանչեր և ծեծի վայրենի աղմուկ:

Կալվածքի մարդիկ ամբողջ ուժով ելին պաշտպանվում, հայհոյում ելին և կռվում գլուղացիների նման, բայց խառնվեցին իրար, հետ նահանջեցին, վորովհետև լեղանի հարվածներից ձիերը ծառս ելին լինում, հետ փախչում և տանում ձիավորին: Կառավարիչը տեսավ, թե ինչ ե կատարվում, իր ձիուն մտրակեց և մխրձվեց ամբոխի մեջ, ձին քշեց դեպի Բորինյան: Բայց նրա տեսներն լեղավ... Միանգամից տասնյակ հարվածներ թափվեցին նրա վրա, բազմաթիվ ձեռքեր ձգվեցին նրա կողմը և վեր քաշեցին ձիուց: Արմատախիլ արած թփի նման նա թռավ ողի մեջ և ընկավ ձյան վրա: Բորինյան հաղիվ կարողացավ նրան պաշտպանել և ուշաթափ վիճակում քարշ տվավ մի ապահով տեղ:

Հանկարծ ամեն ինչ խառնվեց իրար, կարծես քամին խփեց, իրար զարկեց ամեն ինչ: Սոսկալի ճիչ բարձրացավ, առաջ լեկավ ջրապտույտ և վոչինչ չեր կարելի ջոկել, բացի իրար գլխի հավաքված մարդկանց խմբերից, վոր թափվում ելին ձյան վրա, բացի բռունցքներից, վոր կատաղի հարվածներ ելին տալիս: Միայն լերբեմն մեկը դուրս եր գալիս ամբոխից և խելագարի նման վազում եր, բայց նորից եր հետ գալիս և նոր կատաղություն խառնվում կռվին:

Մարդիկ կռվում ելին խմբերով ու մեկ-մեկ, իրար կոկորդից բռնում, մազերից, ծնկներով կրծքին սեղմում և գետին գլորում, իրար միս ելին պոկոտում ու չէին կարողանում հաղթել: Կալվածքից լեկած մարդիկ իջան ձիերից և վոչ մի բայ հետ չէին նահանջում: Նորանոր ուժեր միանում ելին նրանց, վորովհետև փայտահատները միացել ելին նրանց և ամբողջ ուժով վրա ելին տալիս: Վերջին ըոպելին լեկավ և անտառապահը՝ հաղթանդամ մի մարդ, վորի ուժի մասին շրջակա գլուղում առասպելներ ելին պատմում: Նա առաջինը հարձակվեց, և սկսեց հրացանի կոթով զարկել գլուխներին:

Նրա դեմ դուրս լեկավ Պլոշկան, փորձեց բռնել, վորովհետև ժողովուրդն սկսեց փախչել նրա ահից: Անտառապահը բռնեց Պլոշկայի կոկորդից, վեր բարձրացրեց և գետնով զարկեց, ինչպես ծեծած դարմանի խուրձ: Պլոշկան ուշաթափ ընկավ: Մատենուշը չհամբերեց, հարձակվեց նրա վրա և թեկուզ նրա ուժը միայն Անտենին եր հավասար, բայց և այնպես մի ըոպե լե չլիմացավ: Անտառապահը նրան ել հաղթեց, ծեծեց և փախուստի ստիպեց: Ապա մոտեցավ Բորինյային, վորն այդ ըոպելին մեկի մազերից բռնել եր ու քաշում եր: Բայց մինչև նա կհասներ Բորինյային, կանաչ վրա տվին և լեղուններով սկսեցին քերծել, մազերից բռնեցին և գետնին կռացնելով, սկսեցին գետնով քարշ տալ:

Ժողովուրդը հաղթում եր, տերևների պես խռնվել ելին իրար, ամեն մեկը բռնել եր մի թշնամու, խեղդում եր, նրա հետ գլորվում ձյան մեջ, իսկ կանաչ վրա ելին վազում, ընկնողի մազերից քաշքշում: Այնպիսի ճիչ եր, այնպիսի հարաչ-հրոց, վոր չուրալիները դժվար ելին ճանաչում իրար: Վերջապես ժողովուրդը հաղթեց կալվածքի մարդկանց: Նրանցից մի քանիսը պռնկել ելին արնաթաթախ, իսկ մյուսները ջարդված, թուլացած, ծածուկ փախչում ելին անտառից,— և միայն փախտահարներն ելին վերջին ճիգը թափում պաշտպանվելու: Բայց նրանցից վոմանք ազդեն խնդրում ելին ներել իրենց: Ժողովուրդը նրանց վրա ավելի գազազած եր և

վոչ վոք չեր լսում նրանց աղերսը, ու ծեծում էին կատաղությամբ:

Դեն քցեցին փայտերը, չեղանները և կոխի բռնվեցին ուժը ուժի, բռունցքը բռունցքի դեմ: Իրար տրորում էին, խեղդում, ճնշում, գետնին գլորվում: Աղմուկը հանդարտվել եր, լսելի չեր միայն ծանր խռոց, անեծք և հառաչ: Մի խոսքով անեղ դատառաանի որն եր:

Մարդիկ համարյա խելագարվել էին: Կատաղությունը պատել եր նրանց և ամենից ավելի Կոբուսին ու Կոզլովսին: Նրանք մոլեգին էին, սոսկալի չեր նայել նրանց՝ վոտից մինչև գլուխ արյան մեջ, ծեծված, բաց և այնպես մեն-մենակ հարձակվում էին խմբի վրա: Այդպես կովեցին մարդիկ, շատերն արդեն փախի ճանապարհն էին բռնել, տեղ-տեղ տասը մարդով վրա էին սալիս մեկի վրա: Հանկարծ անտառապահը դուրս պրծավ կանանց ձեռքից և սաստիկ ջարդված և ավելի կատաղած, սկսեց կանչել յուրաքանչյուրին և Բորինյային նկատելով, հարձակվեց նրա վրա: Նրանք իրար բռնեցին, արջերի նման թաթերն իրար վզով տարան և սկսեցին հրել, դեմ անել ծառին: Իրար գլորելով մտան անտառը: Այդ բոլորից մոտ վազեց Անտեկը՝ նա ուշացել եր: Մի վայրկյան կանգնեց անտառի ծայրին, շունչ քաշեց և իսկույն նկատեց, թե ինչ է կատարվում հոր հետ:

Անտառապահը հրացանի կոթով Բորինյայի գլխին այնպես դարկեց, վոր արյունը դուրս ցայտեց, ծերունին ճչաց, ձեռքերը վեր բարձրացրեց և փայտի նման գետին ընկավ:

Անտեկը հրացանը թողեց և վազեց հոր մոտ: Հայրը միայն խռոցեցում եր, արյունն աչքերի մեջ եր լցվել, գլուխը ճեղքվել եր: Նա կենդանի չեր, բաց աչքերն արդեն մթնում էին և վոտքերը ցնցվում էին:

— Հայր, հայր... Աստված իմ, — կանչեց նա սոսկալի ձայնով, սեղմեց կրծքին և գոռաց ինչքան ուժ ունեց:

— Հայր, սպանեցին նրան... Սպանեցին, — վոռնում եր նա:

Վերջապես մի քանի հոգի լսեցին նրա ձայնը և ոգնություն հասան: Վերավորին դրին ձուղերի վրա, ձյուն ածեցին գլխին փրկելու համար: Անտեկը նստեց գետնին, մազերն սկսեց քանգել ու գոռալ:

— Սպանեցին նրան, սպանեցին...

Շատերը կարծում էին, վոր նա ցնդվել է: Հանկարծ նա հանդարտեց, միանգամից մտաբերեց ամեն ինչ և այնպիսի սոսկալի կանչով վազեց անտառապահի վրա, աչքերը խելագարությունից այնպես էին փայլվում, վոր անտառապահը վախեցավ, սկսեց

փախչել, բաց զգալով, վոր Անտեկը հասնում է իրեն, հանկարծ հետ դարձավ և ճիշտ կրծքին նշան բռնեց ու կրակեց, բաց վրիպեց, ու միայն դեմքը խանձեց: Անտեկը կայծակի արագությամբ նրա վրա հարձակվեց:

Իզուր եր նա պաշտպանվում, իզուր եր փորձում փախչել, մահվան դողը սրտում իզուր եր նա աղերսում ներումն: Անտեկը կատաղած չեղան նման ձեռքերով բռնեց նրան, կոկորդը սեղմեց, վեր բարձրացրեց և սկսեց ծառին խփել ախքան, մինչև նա շունչը փչեց:

Իսկ հետո, կարծես ինքնամոռացության մեջ, կարծես չգիտակցելով, թե ինչ է անում, նա խառնվեց կովին և վորտեղ ել հայտնվում եր, սրտները դող եր ընկնում, մարդիկ անից փախչում էին: Նա սարսափելի չեր, առանց գլխարկի, հոր և իր արյունով թաթախված, խռնված մաղերով, դիակի նման կապույտ և գերմարդկային ուժով: Նա համարյա մեն մենակ ջարդեց նրանց, վորոնք դեռ պաշտպանվում էին, այնպես վոր նրան հանգստացնում էին և ձեռքից խլում մարդկանց, չեթե վոչ՝ նա կսպաներ նրանց:

Կռվել վերջացավ: Գլուղացիք, թեկուզ ջարդված ու վիրավոր, ուրախ աղաղակներով լցրին անտառը: Կանաչ ծանր վիրավորներին էին խնամում: Մեկի թևն եր ջարդվել, մյուսի վոտքը՝ վոմանք չեցին կարողանում քայլել և ցավից բղավում էին: Կոբուսին այնքան էին ջարդել, վոր չեր կարողանում տեղից շարժվել: Մատեն ուշն արյուն եր թքում և մեջքից եր գանգատվում: Մնացածներն ել էին հարված ստացել. համարյա առանց վնասվածքի վոչ-վոք չկար: Բաց և այնպես նրանք հաղթել էին և այժմ ուրախ կանչում էին ու պատրաստվում տուն վերադառնալու:

Բորինյային դրեցին սահնակի մեջ և դանդաղ տարան, վախենալով, վոր նա ճանապարհին չմեռնի: Նա պառկել եր ուշաթափ, ցնցոտիների միջից արյունը կաթկթում եր և ծածկում աչքերը, դեմքը, վոր քաթանի պես սպիտակ եր, ասես մեռելի դեմք եր:

Անտեկը սահնակի կողքով եր քայլում և սարսափով լի աչքերն ուղղում եր հորը, դար ու փոս տեղերում հոր գլուխը բռնում և տխուր, աղիոգորմ ասում.

— Հայր... Աստված իմ...

Մարդիկ գնում էին անկարգ խմբերով, ով ինչպես ուզում եր: Վոմանք բարձրաձայն հառաչում էին, տնքում, մյուսները ծիծաղում էին և ուրախ իրար ձայն տալիս: Սկսեցին գանազան մանրամասնություններ պատմել, պարծենալ և ծիծաղել պարտվածների վրա: Մի քանի տեղից չերգի ձայն եր լսվում. մեկը գոռում եր և ամբողջ անտառում արձագանքը զրնգում եր: Բոլորը հարբել էին

հաղթանակից, շատերն որորվում ելին, վոտքով դիպչում կոճղերին:

Համարյա վոչ վոք չէր զգում վոչ հոգնածութուն և վոչ ել ծեծի տեղեր, բոլորի սրտում ել հաղթութեան անասելի ուրախութուն կար, բոլորն ել լցված ելին աջնալիսի հրճվանքով և աջնքան ուժ ելին զգում, վոր յեթե մեկը փորձեր նրանց հանդիման կանգնելու, փոշի կգարձնելին և ամբողջ աշխարհի դեմ դուրս կգային:

Նրանք աղմկելով ելին գնում, հաստատ քայլերով, և բոցավառ աչքերով նայում գրաված անտառին, վոր որորվում եր նրանց գլխավերևը, քնի մեջ որորվում և նրանց վրա չեղյամ թափում, իբրև արցունք...

Վ. ՊՈԼԵՆՑ

ՎԱՍՏԱԿԻ ՀԱՄԱՐ

Գետինը ծածկված եր մշուշի թանձր շղարշով: Տարուբեր էր լինում շղարշը, ասես ձգտում եր վերև բարձրանալ, իսկ գետինը պահում եր ու չէր թողնում: Ծփացող այդ սպիտակ ծովի վրա չերևում ելին միայն բարձր առնարկաները՝ ծառերի կատարները, խճուղու չերկանքով ընկած հեռավորացումների ծայրերը և այդ բոլորից ել վեր՝ ողու գործարանի կարմիր ծխնելույզը:

Արևը դեռ չէր ծագել, բայց արևելքում գիշերային աստղն արդեն վոսկեգուն էր դարձել: Յերկնակամարի վրա տեղ-տեղ չերևում ելին նուշնիակ բաց-վարդագուն շերտեր:

Վերջանում եր ամռան մեղմ գիշերը: Գետնին ցող եր իջել, բայց աջնքան քիչ, վոր ճանապարհի փոշին համարյա չէր խոնավացել: Այժմ, լուսաբացից առաջ, մի քանի բոպելով սառնութուն իջավ:

Թռչունները զարթոնցին: Ծառերի կատարների մեջ ցատկոտելով, անհանգիստ չըտչտացնելով, նրանք ողի մեջ անհամբեր պլատոյաներ ելին անում, սակայն վերադառնում առանց վորսի. մոծակներ դեռ չկային: Գործարանի կողմից լսելի չէր արթնացող բանավորական կյանքի թույլ աղմուկը:

Բայց ահա, բարձր-բարձր, չերկնակամարի գենիտում հանկարծ մի փոքրիկ ամպ կարմրին տվեց: Նա նման եր վարդագուն մանկան, վոր հենց նոր ե զարթոնել չերկնային կապույտ մահիճի մեջ և կոտրատվելով, նա նորից ե աչքերը փակում: Հետո ողային մանուկը ծավալվեց և ամպն ընդունեց այլ ձևեր:

Մշուշի շղարշն անհանգիստ ալեկոծվում եր: Մի քանի տեղ ասես անտես ձեռքեր բարձրացնում ելին նրան: Ավելի և ավելի պարզ ելին չերևում տների և ծառերի մութ խմբերը: Մշուշի մեջ թվում եր, թե չերևում են ինչ-վոր վիթխարի կենդանիներ: Հանկարծ փայլ-փայլ շանթարգելի սուր ծայր... Մի քանի պատուհաններ վառվելին արյունոտ փայլով, կարծես տների ներսում հրդեհն եր ալեկոծվում և մշուշի վարդագույնի լեռնից դուրս չեկավ հուրհրան արևը:



Գորշ ալիքները խառնվում էին իրար, անկարգ հրում և փախ-
չում մի կողմ: Հողն ազանությամբ կլանում էր նրանց, գետինը՝ ծծում:
Յեվ հանկարծ մշուշն անհետացավ: Մինչև հորիզոնը հեռուն բաց-
վեց, թափանցիկ ու մաքուր, ասես նոր ելին լվացել... Արևը շաց-
նող փայլով լուսավորում էր բնությունը և արտացոլում ցողի մի-
լիոն կաթիլների մեջ: Տեղ տեղ, սաղարթի մեջ գեռ ուրորվում էին
մշուշի խճճված փաթիլները և շտապում էին անհետանալ, պահվել
պայծառ շոգերից Կարտոֆելի թմբերի վրա գոլորշու բարակ շի-
թերը վեր էին բարձրանում, ասես գետնի տակ անտանելի խոհա-
նոց էր ու գոլորշի չեր բարձրանում: Մարդու հայացքն անկաշկանդ
ու ազատ թափանցում էր ամեն տեղ, մինչև հեռու հորիզոնը: Վոչ
մի տեղ չեր չերևում վոչ սար, վոչ անտառ և վոչ էլ ապառաժի
պատեն: Չորս կողմն ընդարձակ տափարակ էր, հարթ, վորպես ա-
նապատը, սակայն արգավանդ:

Վոչ մի թիզ հող այստեղ իդուր չի կորչում: Ամեն տեղ խնամ-
քով մշակված է: Գարին նոր էր ծաղկաթափ չեղել, վարսակը հաս-
կավորվում էր: Ծաղկում էր կարտոֆելը, կանաչին էին տալիս
արմտիքները: Սև ֆոնի վրա ձգվում էին չերկար ու կանաչ շեր-
տեր՝ ձախդեղ ելին տնկել: Ամեն տեղ ուղիղ ու ձիգ գծեր էին,
շատ ճիշտ վորոշած քառանկյունիներ:

Հողի մանր սեփականատեր չկար այստեղ չկային տկոթ ու
չքավոր գլուղացիներ, վորոնցից լուրաքանչյուրն իր մի թիզ հողում
միբանի տեսակ բույսեր է մշակում: Այստեղ մեծ տնտեսություն է
և ամեն մի մշակույթի համար հատկացված է առնվազն մի հեկտար:

Ցանած դաշտերի միորինակութունը խախտում էր շենքերի
մեծ խումբը՝ վոր գտնվում էր գետահովտում: Մպիտակ պատերի
վրա կղմինդրի կարմիր տանիքներն էին: Շենքերից մեկի գլխին
զանգակատունն էր, կանաչ կտուրով և չերևացող փայլուն ու մեծ
ժամացույցով: Շենքերի մի մասը ծածկված էր ծառերի չետե,
վորոնց վրա չերևում էր գործարանի ծխնելուղը:

Գլուղը տանող ճանապարհը սլաքի նման ուղիղ էր, կողքին
շատ խնամքով շինած առուներով, փոքրիկ կամրջակներով և պու-
րակներով, անկված լուրաքանչյուր վերստի վրա: Իրարից հավասար
հեռավորության վրա շարդած բազալտի կույտեր էին, վոր պատ-
րաստել էին ճանապարհի նորոգության համար: Սյունից-սյուն հե-
ռագրաթեղն էր կապած:

Պողատու ծառերի վրա խնամքի և հոգատարության հետքեր
էին չերևում: Բները կրաշրով պատած, վորպեսզի միջատներն ու
նապաստակները չվնասեն, արմատների մոտ՝ փոսեր, գեպի ուր ա-

ռուներին՝ մանրիկ առվակներով հոսում էր ջուրը: Վտաքով գնա-
ցողներին համար ճանապարհի աջ կողմն ընկած արահետը ծածկված
էր դեղին ափագով:

Ջանդակատան գլխին հնչեցին հինգ անգամ: Ժամը հինգն էր:
Գլուղից ճանապարհ ընկան մի խումբ մարդիկ՝ գլուղական բան-
վորներ:

Նրանք ուղադրություն չեյին դարձնում արթնացող հնության
գեղեցկության վրա, նրանք չեյին լսում, թե ինչպես չերեքնուկի
արտի մեջ թագնված փոքրիկ արտուտը գլի դալալում է: Մարդիկ
քայլում էին և բուլթ, անշարժ հայացքով նայում փոշոտ ճանա-
պարհին:

Կորացած ծերունիներ, մանրիկ աչքերով, սևացած մորթու վրա
բիզ-բիզ ցցված սպիտակ մագերով: Միջահասակ մարդիկ, վորոնցից
շատերի դեմքին անջնջելի չեր ալկոհոլի հետ ունեցած մոտ ծանո-
թության դրոշմը: Տեղ-տեղ չերևում էին զինվորական մաշված զը-
խարկներ և մուշտակներ:

Անատամ կանաչը, վորոնց կաշին նման է հնորչա մագաղա-
թին, կոշտացած թաթերով, նիհար, թխագուշն և ծանր աշխատան-
քից ալանդակված ձեռքերով...

Նրանք քայլում էին, վորտքերն արագ ու լայն փոխում, իրանը
միքիչ առաջ թեքում: Շորերի կեսը տղամարդու չեր. քնքշության
գեղեցկության ու նրբության վոչ մի հետք... Ծանր աշխատանքը
վոչնչացրել էր նրանց կանացիության վերջին հետքերը:

Դրանք չեկվոր բանվորներ էին: Յեկել էին Պողնանից, Գի-
մանիայի զանազան վայրերից, մի կտոր հացի՝ աշխատավորական
վաստակի համար:

Ամենից առաջ քայլում էր ծերունի Նովարչիկը: Նա մի սմբած
ծերունի չեր, համարչա առանց մսի, ինչպես ասում էին, միայն
վոսկոր էր ու ջղեր, վորոնք պատած էին թխագուշն մորթով: Նա-
յոզը կկարծեր, թե նրա մորթին հանել են հին թմբուկի վրայից:
Դուրս ընկած ուսերի վրա գորշ ու սևավուն գլուխն էր, նրա փոք-
րիկ ու սրտես աչքերը մռայլ փայլում էին: Բերանի մի անկյունը
կախ ընկած էր և կարծես հենց այդ անկյունում էլ դիտմամբ մի
ատամը չկար, վորպեսզի հանգած մուշտուկը կախ ընկնի: Այդ մուշ-
տուկը դարմանալիորեն ներդաշնակ էր նրա անկենդան ու մաշված
դեմքի հետ:

Նովարչիկը կանգնեց ընդարձակ դաշտի մոտ, ուր ձախդեղ էր
ցանած, և լեհերեն կարգադրություններ արավ: Այստեղ չերի շատ
որերի համար աշխատանք կա. մոլախոտերը պատել էին ձախդեղի
շարքերը:

Այդ կալվածքի տերը շատ լավ գիտեր իր գործը: Նա ասում էր մոլախոտերը և գիտեր կովեր նրանց դեմ:

Այդ ամառ բանվոր ձեռքի պակաս չէր չեղել: Նա բանվորական միջնորդ գրասենյակի միջոցով Լեհաստանից քսան բանվոր էր կանչել և նրանք բոլորն էլ չեկել էին վորոշված ժամանակ: Կին ու տղամարդ. ճիշտն ասած կանայք, վորպես բանվորական ուժ, տղամարդկանցից ձեռնառու էին: Նրանց աշխատավարձը մի չերրորդով պակաս էր, ասինքն տղամարդկանց հետ հավասար աշխատում էին և շատ քիչ դեպքում էին հարբում:

Ընդհանրապես չեկվոր բանվորների հետ գործ ունենալը քիչ հոգսի հետ էր կապված: Նրանք հյուս և հնազանդ էին: Յեթե պատահում էր, վոր գանգատվում էին, կամ դժգոհություն էին հայտնում, նրանց վոչ վոք չէր հասկանում, վորովհետև խոսում էին լեհերեն: Նրանց կերակրելն ավելի էժան էր: Նրանք զոհ էին, չերբ ամենախեղճ ու աղքատիկ անկյունն էլ ստանում էին: Բայց ամենից լավն աչն էր, վոր հարկ չկար ձմեռը նրանց կերակրել: Աչնանը, չերբ բերքը հավաքում էին, չերբ դաշտը պատրաստ էր զարնան ցանքի համար, նրանց դուրս էին անում և հետ ուղարկում չեկած տեղը:

Յեկվոր բանվորների մեջ մի չերիտասարդ գույգ կար: Ամուսինը չերևում էր, վոր նոր էր թողել զինվորական ծառայությունը, նրա զինվորական գլխարկը դեռ մաշված չէր: Նրան կարելի չէր գեղեցիկ տղամարդ հաշվել: Սև մազերը խճուճներ էին կազմում, թուխ բեղերի տակ չերևում էին մսոտ շրթունքները: Աչքերը մեծ էին ու թուխ: Սակայն բուժ ու պղտոր հայացքը, կաշվի մանիշակագույն բծերը և ընդհանուր թմրությունը ցույց էին տալիս, վոր նա հարբեցող է:

Կինն սպիտակ ու գանգրահեր լեհուհի չէր, մազերը բոլորովին շեկ, նուխիսկ մի քիչ գեղնավուն: Գունատ դեմքի վրա չերևում էին կապտավուն աչքերը: Յերևում էր, վոր նա դեռ չերիտասարդ է և դեռ չի կորցրել կանացիությունը: Յեկ թեկուզ առավոտից մինչև իրիկուն նա աշխատում էր արևի կիզիչ ճառագայթների տակ, բայց և այնպես արևը նրա մորթը չէր վառել:

Յերիտասարդ կնոջ մեջքին կապած էր մի փոքրիկ, գորշ պարկ: Կարելի չէր կարծել, թե պարկի մեջ ուտելիք է, բայց աչն ուշադիր ու հոգատար վերաբերմունքը, վոր ուներ կինը պարկի հանդեպ, կասկած չէին թողնում, վոր պարկի մեջ թանգագին բան կու: Յեկ իրոք, գորշ պարկի մեջ կինը տանում էր մի փոքրիկ մարդու: Այդ նրա չերեխան էր, վոր չերեք շաթեկան էր: Տղան ծնվել էր հենց կալվածքում:

Յերը կալվածատերն առաջին անգամ տեսավ հղի կնոջը, շատ բարկացավ: Նա հայտնեց, վոր միջնորդ գրասենյակի կողմից խաբեբայություն է կատարված, և ցանկանում էր այդ կնոջը չետ ուղարկել: Բայց կինն աղերսում էր՝ թողնել իրեն. նա համոզում էր, վոր շուտով ամեն ինչ կանցնի, հա հավատացնում էր, վոր վոչ-վոք այդ չի նկատի:

Յեկ կինը կատարեց իր խոստումը: Ամեն ինչ արագ և աննկատելի կատարվեց: Ծննդաբերությունից մի ուր առաջ նրան տեսել էին աշխատելիս: Վոչ բժիշկ կանչեցին և վոչ էլ տատմայր: Ծանր ժամին նրան ոգնություն չեկավ նրա ընկերուհին՝ պառավ Նեպոմուկենան: Յերեխան լույս աշխարհ չեկավ գոմի մեջ և գոմի կտուրի արանքից ներս թափանցող բարակ շողը տեսավ: Յերբ փոքրիկ թոքերն առաջին անգամ շնչեցին, նրանք ծծեցին գոմի ու չոր խոտի հոտը: Կովերը զարմանքով իրենց գլուխները դարձրին դեպի աչն անկյունը, վորտեղից լսվում էր անսովոր ճիչ:

Ծննդից միքանի ուր հետո չերիտասարդ մայրը դաշտ դուրս չեկավ, աշխատանքի գնաց: Յերեխային հետն էր առնում: Փաթաթում էր մեծ թաշկինակի մեջ, ծայրերը բերում և իր կրծքի վրա հանգույց անում: Աշխատելիս նա չերեխային թողնում էր ակոսի մեջ և կամ վորևե ծառի տակ: Արևի ճառագայթներից ու ճանճերից փոքրիկին պաշտպանելու համար մայրը թաշկինակով ծածկում էր դեմքը և տեղ թողնում միայն շնչելու համար: Անծանոթ մարդը չերեք չէր կարծի, թե ցնցոտիների այդ կույտի մեջ ջերմանում է մարդկային մի կյանք:

Յերեխան քիչ հոգս էր պատճառում: Նա համարյա չէր բղավում: Ընդհանրապես նա շրջապատից քիչ բան էր պահանջում և հենց առաջին որերից սակավապես էր: Նա համառորեն հրաժարվում էր աչն աննդից, վոր մայրն էր տալիս:

Մայրը ջերմեռանդ աղոթում էր և խոսք էր տալիս մոմ վառելու, չերբ ձմեռը հայրենիք վերադառնա: Իսկ պառավ Նեպոմուկենան խորհուրդ էր տալիս գանազան բույսերից չեփել և ջուրը խմացնել: Սակայն այդ միջոցներից վոչ մեկն էլ չոգնեց: Յերեխան ծիծը քիչ էր ուտում, և աչն էլ կարճ ժամանակով: Մայրը կշեռք չունեք, բայց առանց կշեռքի չել նա տեսնում էր, վոր չերեխան հավվում է: Նա շատ էր տանջվում, չերբ տեսնում էր, վոր իր առատ կաթը կորչում է գուր տեղը:

Փոքրիկն որեցող ավելի չէր թուլանում, բայց գնալով ավելի չէր մորից խլում ժամանակ և ուժ: Նա հագիվ էր կարողանում աշխատանքի գնալ: Ամբողջ մարմինը ցավում էր: Յերեկով ջարդված էր իրեն զգում, իսկ գիշերները համարյա չէր քնում:

Վարվառեն (այդպես եր յերիտասարդ կնոջ անունը) գիշերները ժամերով նստում եր և որորում յերեխային: Իսկ փոքրիկը հաճախ եր տանջվում անքնությունից: Յերբեմն պառկում եր, աչքերը լայն չուում և հանդարտ հեծկլտում կամ թե վախեցած ցնցվում:

Այդպիսի ժամերին ինչպիսի մտքեր ելին ծնվում թշվառ կնոջ հոգնած ուղեղի մեջ... Աղոթքներ, ցնորք, հույսեր, հիշողություններ...

Գիշերով գալիս եր ամուսինը, չորս կողմը տարածելով ողու հոտ, քթի տակ փնթփնթալով հարբածի խոսքեր: Նա հայհոյում եր, հանդիմանում եր նրան և կամ սկսում եր շոյել: Կինն այդ շոյանքից եր վախենում: Այդ չափաի լինելը դրա մասին նրան բոլոր կանաչք ել զգուշացնում ելին: Ավելի լավ ե թող ծեծի, ինչպես առաջ եր ծեծում:

Միքայելը շատ եր փոխվել: Առաջ ինչքան սիրելի յեր... ինչ նամակներ եր ուղարկում գնդից... Իսկ յերբ արձակուրդով տուն եր գալիս, նա այնպես եր սիրում և իր սերն ապացուցում եր այնպիսի անխելք արարքներով... Յերիտասարդ կինը դառնությամբ եր հիշում անցած յերջանիկ ժամերը:

Ժամերով նստում եր, յերեխային գրկում, մտածում ու յերազում: Նեղիկ պատահանից լուսնի շողերը ներս ելին ընկնում և գոմի հատակին կազմում սպիտակ քառակուսի: Զանգակատան ժամացույցն ամեն քառորդ ժամ անցնելուց, նրան անընդհատ ասում եր, թե ինչքան դանդաղ ե ընթանում ժամանակը:

Կես գիշերն անց եր, իսկ Միքայելը դեռ չեր վերադարձել միկիտանից, ուր ամեն գիշեր ընկերների հետ ողի յեր խմում: Միկիտանը հեռու չեր, նույն բակի մեջ եր: Ամեն իրիկուն Միքայելն իր ընկերների հետ միասին արշուճով և քրտինքով վառատակած կոպեկները տանում ելին այնտեղ:

Անխնա ճշտապահությամբ յուրաքանչյուր քառորդ ժամին զանգերը զարկում ելին: Սպիտակ քառակուսին դանդաղ սահում եր և անհայտանում: Կովերը զընգացնում ելին կապերը, մնչում ելին: Լուսանում եր, հասնում եր կիթի ժամանակը:

Մանուկն անհանգիստ լաց յեղավ և նրա նիհար գլուխը թեք ընկավ: Այդ վիճակում մանուկը յերբեմն քառորդ ժամ եր մնում: Մայրը դիմեց միակ միջոցին՝ ծիծը մոտեցրեց մանկանը, բայց նա չթունքներն ամուր սեղմած շարունակում եր գլուխն որորել:

Վարվառեն լալիս եր: Շատ անգամ ելին կանաչք նրան ասել, թե յերբ յերեխան չի ուզում ծիծ ուտել, հարկավոր ե նրան ուրիշ բան տալ: Այդ մտքի հետ նա դժվարությամբ եր հաշտվում: Նա կարծում եր, թե ուզում են յերեխային խլեն իրենից և ուրիշ կը-

նոջ տան: Բայց և հասկանում եր, վոր յերկար ժամանակ այդպես տևել չի կարող: Դաժան սոսկումով եր նա հիշում պառավ Նեպոմուկենի խոսքը:

— Նա ձեռքերիդ վրա մոմի պես կհալչի, յեթե նրան լավ չըկշտացնես ..

Իսկ պառավ Նեպոմուկենն այդ բանը լավ եր իմանում: Յեղել և ժամանակ, յերբ յոթ յերեխա յե թաղել...

Հարկավոր ե այլ սնունդ՝ կովի կաթ ե հարկավոր:

Կովի կաթ... Դրանից ել առատ բան: Ամեն որ հարյուրավոր դուլերով կաթ ելին ուղարկում քաղաք: Հենց կալվածքումն ել կարելի յեր կաթ գնել: Կես լիտր, նույնիսկ որեկան քառորդ լիտր, ջրի ու շաքարի հետ խառնած, — և հերիք ե: Կանաչք ասում ելին, վոր յերեխան ագահությամբ կուտի այդ սնունդը:

Վերջապես Միքայելը վերադարձավ: Բարեկեղծ փոխարեն կուպիտ հայհոյեց և վայր ընկավ: Նա ուզեց հարդի մեջ մտնել ու քընել, բայց այս անգամ կինը նրան խանգարեց: Նա տաք տաք սկսեց խոսել, պատմել իր ծրագիրը և ամուսնուց փող խնդրել: Նա ուզում եր յերեխային հենց այդ սուսվոտից ել սկսել կովի կաթով կերակրելու: Միքայելը պղտոր աչքերով նայում եր նրան, լսում եր, բայց վոչինչ չեր հասկանում: Նա տեղից վեր կացավ և զայրացած բշտվեց կնոջ վրա: Յերեխան նա յե բերել, ինքն ել թող մտածի նրան կերակրելու մասին: Բայց կինը չեր հրաժարվում իր մտքից: Նա համոզում եր նրան, վոր յերեխան կմեռնի, յեթե ծիծն ուտի:

Միքայելը պատասխանեց, թե թող յերեխային մեռցնի, վոր նա յերեխա չի, այլ մի դե, և դեռ հայտնի չի չի, թե ով ե յերեխայի հայրը: Կինն ուշադրություն չեր դարձնում նրա հայհոյանքներին և շարունակում եր խնդրել, վոր նա իրենց ընդհանուր վատալից յերեխայի կաթի ու շաքարի համար բաժին հանի:

Այդ խոսքի վրա ամուսինը փրփոաց, աչքերը փալառակեցին և կատաղությամբ բռնեցը բարձրացրեց: Կինը յերեխային գրկած սեղմվեց գոմի անկյունում: Միքայելը նորից տեղը պառկեց, անհանգիստ նրան և հայտնեց, վոր յեթե մի անգամ ել փող կխնդրի, սպանելու յե նրան: Ասաց ու սկսեց խոսվալ:

Անսահման վշտով լցվեց յերիտասարդ կնոջ սիրտը: Ահա նա պառկել ե... Ողու հոտից շնչել չի լինում: Ինչ վոր միասին աշխատում են, ողու յե տալիս և խմում նովարչիկի ու մյուսների հետ: Զմեռն ապրելու համար մի կոպեկ ել չեն ունենա և յերեխան սովամահ կլինի...

Անարդարությունը շատ մեծ եր... Նրա նիհար մարմինը դուրս եր, հեծկլտանքը կոկորդն եր սեղմում...

Գոմում առուրյա կյանքն արթնացավ: Կողքի սենյակում կով կթողներն արդեն պատրաստում էին ամանները: Կովերի կերը պատրաստ եր: Շուտով կիթը պիտի սկսեն:

Վարվառեն մտքում նկարեց մի պատկեր... Նա տեսնում եր պատկերը շատ մանրամասն, ասես շոշափում եր: Ահա մեծ կաթ սան... կթողները կաթը դատարկում են կաթսայի մեջ: Կաթսան ներքին է և ամեն առավոտ աշխատանքի գնալիս նա անցնում է կաթսայի մոտով: Կաթսան մեծ է և խոր... Փրփուալով ամեն կողմից լեցնում են կաթը: Նրա չերեակալության մեջ այդ պատկերները գերբնական և հրեշավոր չափերի էին հասնում... Կարծես մեջքի վրայով տաք ու սառը ջրի հոսանք եր անցնում: Նա շնչում եր արագ զարկերակը տենդոտ եր զարկում: Այդ պատկերը նրան գալթակվեցնում եր, գրավում եր, կանչում, քաշում իրեն...

Այդ կաթսայից կարելի չե լեցնել մի փոքրիկ սրվակ: Միթե այդ նույնը չե, լեթե մարդ գետից բռնվ լի ջուր վերցնի:

Նա չերեխ սլին նայեց... Նիհար, մաշված, տանջված չերեխան պառկել եր: Նա ավելի նման եր ծերունու, կնճռոտ դեմքով, վորի վրա դժգոհության և տանջանքի արտահայտությունը բարացել եր: Յերեխան միջանի անգամ շրթունքները շարժեց, կարծես մի բանից ուզում եր դժգոհել: Հետո աչքերը բաց արեց...

Վարվառելի համար հանկարծ ամեն ինչ փոքրվեց. վճիռը միանգամից հասունացավ: Նա չերեխային դրեց հարդի վրա, ցնցոտիների միջից հանեց շիշը: Ապա կամացուկ բաց արեց դուռը, մի պահ կանգնեց ու շունչը պահած, սկսեց լսել... Կանալը կթում էին, ամեն մարդ իր գործին եր: Ամեն ինչ նպաստավոր: Գողեզող և անձա՛ն նա մոտեցավ կաթով լի կաթսային:

Բանվորները կանգ առան ճակնդեղի ընդարձակ դաշտի մոտ: Կալվածատերը դեռ չկար... Նրանցից չուրաքանչյուրն անցավ սովորական աշխատանքին: Ծնկաչոք կամ կռացած, նրանք շարվեցին և այդ շղթան սկսեց դանդաղ առաջ գնալ. ձեռքով կամ հողուրազով մոլախոտերը պոկելով:

Դաշտի մի ծայրին դատարկ սալակն եր: Պոկված մոլախոտերը կողովներով տանում էին, լցնում սալակի մեջ: Սալակը դեռ դատարկ եր, բանվորներից միջանիսն իրենց շորերն ու հացի կապոցները քցել էին սալակի վրա:

— Դիր ախտեղ, Վարվառե, — ասաց ծերունի Նովարչուկը նրան, և կեղտոտ պինջակներից չերեխայի համար անկողնու պես մի բան սարքեց. — բո տղան ախտեղ իշխանի պես կըճի...

Յերե խանձարուրը բաց արեց, մայրը վախից հետ քաշվեց: Նա չերեք իր փոքրիկին այդքան նիհար ու թշվառ չեր տեսել:

— Շատ ել մի չարչարվի նրա համար... — ասաց Նովարչուկը շոշոյ ժպիտով. — դարդ մի անի... Մեկ ել տեսար չերկրորդը հասավ...

Յեվ նա ծիծաղեց իր հանաքի վրա... Հետո կռացավ, մի ծաղիկ պոկեց ու մոտեցրեց չերեխայի բերանին:

— Տես, դեռ շնչում ե... Յես բեզ ասում եմ դարդ մի անի... Թե նա ուզում է քեզանից հեռանալ, մի պահի: Միկնույն է, դարդից ու հոգսից բացի, նրանից ուրիշ բան չես տեսնի... Դե հիմա գործիդ գնա, Վարվառե... Խաղեյինը գալիս է:

Խճուղու վրա չերեաց կալվածատերը: Բանվորները հենց նրան տեսան թե չե, սկսեցին ավելի արագ բանել:

— Ե՛, վերջապես դու նրան կովի կաթ պիտի տա՞ս, թե չե, — հարցրեց պառավ Նեպոմուկենը, վոր նստել եր գետին, Վարվառելի կողքին:

— Հա՛, կփորձեմ, — կամացուկ պատասխանեց Վարվառեն:

— Խելքդ չթոցնես ու փողով կաթ չառնես... — ականջին շշմեց պառավը, զգուշությամբ նայելով կալվածատերին:

Վարվառելի գունատ աչտերը կարմրեցին: Մի քիչ տատանվելուց հետո նա ասաց.

— Յես արդեն մի շիշ կաթ ունեմ...

— Վերցրի՛ր, — հարցրեց պառավը և նրա աչքերը փայտատակեցին:

Վարվառեն գլխով արեց, ավելի կարմրեց. սկսեց արագ աշխատել, առանց աջ ու ձախ նայելու:

Պառավն ուրախությունից քրքջաց:

— Լավ ես անում, Վարվառե... Յեթե կարելի չե ձրի ստանալ, ինչո՞ւ փող տալ... Այստեղ ինչքան ուզես կաթ կա: Իմացմի, փող չտա՞ս... Կտեսնես ինչքան կլավանա... Հաստիկ է լինելու, գնդիկ... կտեսնես...

Կալվածատերը մոտենում եր: Նրա առջևից վազում եր շունը, և անճուռնի շարժումով թմբերի վրայից ցատկում: Կալվածատերն աչքի տակով նայում եր արած աշխատանքին: Նա իր ձեռնափայտի չերկաթե ծայրով տեղ-տեղ փորփրում եր հողը, չերեքին արմատներն եր դուրս հանում և այդ գեպքում ստիպում եր, վոր բանվորը հետ դառնա և մեկ ել քաղհանի մարդը:

Շունն ել այլ կերպ եր զվարճանում: Տանձի ծառի մոտ բանվորների հացի կապոցներն էին ընկած... Շունը տեսավ և սկսեց արագություն հատոտել:

— Կորի՛ր, կորի՛ր, — բղավեց տերը շան վրա և փայտով սպառնաց: Սակայն շունն անքան ել չվախեցավ: Նա ճանաչում եր իր տիրոջը և գիտեր, վոր նա անասունների հետ խիստ չի վարվում:

Շունն ատամներով բռնեց մի փոքրիկ կապոց և սկսեց թափահարել... Տերը հետաքրքրությամբ նայում էր շանը: Կարող է ատամներով կապոցը քանդել:

Յեվ քանդեց... Այլ քեզ հունարով շուն:

— Բայց... այս ի՞նչ է: Կաթով լի շիշ... Կաթ. տարորինակ է... Յեթե ողի լինեք, կհասկանալի...

Նա կռացավ և շիշը վերցրեց: Կաթ է, վոչ մի կասկած: Քառորդ կամ կես լիտր: Յերևում է, վոր կաթը թարմ է, յուղի վոչ մի հետք... Հըմ... Կաթի շիշը ձեռքին նա մոտեցավ բանվորներին և բառերը հատ-հատ շեշտելով, հարցրեց...

— Ձեզնից ո՞վ է կաթ գողացել:

Բանվորները սարսափով ելին նայում կալվածատիրոջ ամեն մի շարժումին: Փսփսոցի մի ալիք անցավ նրանց շարքերով: Քիչ հետո նրանք, գլուխները կախ, սկսեցին քաղհանել ավելի յեռանդոտ: Վոչ վոք չպատասխանեց:

Կալվածատիրոջ կարճիկ վիզը կարմրեց:

— Ինչո՞ւ չեք անմեղ ձևանում... Ի՞նչ է, իմ լեզուն չե՞ք հասկանում... Նովարչիկ, ձեզնից ո՞վ է կաթը գողացել... Դե շուտ, լեզուդ...

— Վողորմած տեր չգիտեմ, — պատասխանեց ծերուկը:

— Ձկարծեք, թե ինձ կարող եք խաբել... Իմ ուզած մարդուն չես կգտնեմ, — գոռաց կալվածատերն ու անցավ շարքով, շատ ուշադիր նայելով յուրաքանչյուր բանվորի դեմքին:

Հանկարծ Վարվառեն գունատվեց: Յերը կալվածատերը մոտեցավ նրան, նա ամբողջ մարմնով սարսռաց, յերեսը շրջեց: Կալվածատերը տեսավ յերիտասարդ կնոջ գունատ դեմքը և հանկարծ վերհիշեց:

— Ըհը... Ըհը...

Նրա դեմքին փայլեց հաղթության ժպիտը: Միքանի վայրկյան նա դիտեց շփոթված կնոջը, ապա հաղաց, և ինքնագոհ ժպտաց: Այժմ նա ցույց կտա այդ խուժանին, թե ինչքան նա վեր է ու խելոք:

— Վորտե՞ղ է ձեր յերեխան, Վարվառե, — հարցրեց նա կեղծ փաղաքշական ձայնով:

Վարվառեն չպատասխանեց գլուխը խոնարհեց կրծքին և շրփոթկոտ, սկսեց մատներով հողի կոշտուկները տրորել:

— Լավ, չես նրան շուտ կգտնեմ, — ասաց կալվածատերը, նախեց չորս կողմը և գնաց տանձենու մոտ ընկած սալակի ուղղությամբ:

Նա ցնցոտիները բաց արեց:

— Նո՛ւ, իհարկե... Ահա կաթի սիրահարը... Այդպես ելչես գիտելի...

Այդ պահին կալվածատիրոջ դեմքին տարորինակ արտահայտություն չերևաց: Նա մի անգամ ել նայեց ցնցոտիներին և ճնշված ձայնով ասաց:

— Սատանան տանի...

Անսովոր ակնածանքով նա մատը մոտեցրեց փոքրիկի մարմնին, Յերկյուղով և դողացող ձայնով նա ասաց:

— Յեկեք այստեղ, Վարվառե... Մոտ յեկեք...

Դանդաղ քայլերով և ամաչկոտ մայրը մոտեցավ սալակին, գիտակցելով իր հանցանքը: Նա դեռ գլխի չեր:

— Ձեր յերեխան... Ինձ թվում է... Մի տեսե՛ք:

Մայրը մոտեցավ, նայեց, շոշափեց մարմինը և սառը սոսկումը քարացավ նրա դեմքի վրա: Նա չկանչեց: Նա միայն հեծկլտաց, հանդարտ հեծկլտաց, գլուխն անընդհատ ուրորելով, կարծես չեր հասկանում, թե ինչ է պատահել...

Կալվածատերն զգաց, վոր իր հոգու խորքում մի անսովոր բան է կատարվում: Մի անորոշ ցանկություն եր զգում թշվառ կնոջը փաղաքշական ու միթիթարիլ խոսք ասելու, բայց հաշոյանքի սովոր լեզուն չեր դառնում: Նա շփոթված կանգնել էր, կաթով լի շիշը ձեռքին:

Այդ ժամանակ ուրիշ բանվորներ ել մոտեցան սալակին: Նրանք սեղմ ողակով շրջապատել ելին Վարվառեյին և նրա մեռած փոքրիկ վորդուն:

Միքանի կանայք սկսեցին լալ: Միքայելը կանգնել էր նրա մոտ, բերանը բաց, դողում էր և հազիվ արցունքը զսպում: Նա զգայուն էր, բացի այդ ել հարբեցողությունից ջղերը լարված ելին: Նա սրտանց ափսոսում էր ինքն իրեն, և այդ ափսոսանքը հանկարծ դարձավ արցունքի վարար հեղեղ:

Այդ ժամանակ ծերունի Նովարչիկը բոթեց նրա կողքը և ասաց:

— Հիմար ես, Միքայել... Դու պիտի ուրախանաս, վոր այլևս աշխարհում նա չկա...

ԳՅՈՒՂԱՅԻ ՊԻՏՈՅԻ ՎԵՋՏԸ

1.

Գյուղացի Պիտոն գոմում ձիերի սարքն եր հավաքում և պատ-
րաստվում եր դաշտ գնալու: Նա աշխատում եր, բայց և թոնթո-
րում, ուշունց տալիս, թքոտում: Կեղտոտ ապակիով ճրագը հազիվ
եր լուսավորում, և աղոտ լույսի տակ չերևում ելին առաստաղի
տախտակների արանքից կախ ընկած խոտի ծղնոտները: Անասուն-
ների սովերները, ահեղի չափ ընդունելով, շարժվում ելին կեղ-
տոտ ու աղբաշրից սևացած գոմի պատերի վրա:

Գոմի դռանը չերևաց Պիտոյի նոքարը՝ Լուիզան:

— Խաղելին, էյ, — կանչեց նա, — խաղելին...

— Հը՞, ինչ ե, — հարցրեց Պիտոն, հավաքելով պարանները և
հանգուց կապելով, — հը՞, ինչ ե պատահել...

— Շուտ եստեղ արի... Ձեռն իմանում, թե ինչ ե պատահել
Նարգիզի հետ... վեր չի կենում... վոտքով ինչքան տալիս եմ, տե-
ղից չի շարժվում... Յեվ շնչում ե, շնչում ե... Աստված եմ, ինչ-
պես ե նա շնչում...

— Ի՞նչ... ի՞նչ ե պատահել... Ասում ես, վեր չի կենում:

— Այո՛, չի ուզում:

— Ի՞նչ... Սպասիր, գալիս եմ...

Պիտոն ճրագը վերցրեց և հետևեց Լուիզային:

Նոր եր լուսանում, Ֆուրտ և ամպած առավոտ եր, դեռ մշուշ
կար, նույնմբերի ծանր աչն մշուշը, չերը չի չերևում վոշ չերկինքը
և վոշ ել գետինը, մշուշ, վորի միջից հազիվ կարելի չե նշմարել ծա-
ռերի ու տների կոնտուրները:

Պիտոն Լուիզայից առաջ անցավ, մտավ բաց դռնով և ահա, թե
ինչ տեսավ... Գոմի մի անկյունում, ուր կիսամութ եր, տաք եր,
ինչպես վառարանի վրա, կաթի ու աղբի ծանր և կծու հոտով լի
գոմի անկյունում կեղտոտ հարդի վրա պառկել եր կովը: Նրա սպի-
տակ և խոշոր կողքերն ուռչում ելին և նստում, ինչպես դարբնոցի
փուքս: Ազդերերի վրա շեկ բծեր կային, մեզի և կանաչ թրթրի բծեր:

Լսելի չեր ընդհատ և խռպոտ շնչառություն: Լուիզան ճրագը վեր-
ցրեց, իսկ Պիտոն կռացավ կովի վրա, ուշադրությամբ դիտեց, իր
կարմիր ձեռքերով տնողից մարմնի գանազան մասերը, նայեց կովի
աչքերին, վոր վառվում ելին տենդոլի փայլով:

— Նարգիզ ջան, — ասաց նա քնքշությամբ, — նախշունս... Եդ
ի՞նչ պատահեց... վորտեղդ ե ցավում, հը՞...

Մսուրից բազուկ հանեց, կիսեց, մոտեցրեց կովին: Բայց կովը
գլուխը շրջեց:

— Ի՞նչ ե պատահել... ինչի՞ց ե վոր... — շնչաց նա:

Նրա դեմքը, վոր հողի կոշտուկի չեր նման, հանկարծ մտա-
զբաղ դարձավ: Միքանի անգամ ականջը քորեց, ծանր մտքերը պա-
շարեցին նրան: Իսկ Լուիզան նայում եր գոմի այուններին, կանգնած
տեղը մեկ մի վոտին հենվելով, մեկ՝ մյուս: Պիտոն ձեռքի բազուկը
մի տեղ դնելով, չոգեց աղբի վրա, ականջը մոտեցրեց կովի կրծքին և
վզը պեսզի ավելի լավ լսի, աչքերը փակեց:

— Տեր աստված, վո՞նց ե շնչում... — բացականչեց Պիտոն, տե-
ղից վեր կենալով: — Զիգլարի մեջ խզող կա... Հիվանդ ե, հա, հի-
վանդ ե և աչն ել ծանր... Ի՞նչ ե պատահել, հը՞, Լուիզա, ինչի՞ց
կարող ե լինել...

— Հը՞, ի՞նչ ես ասում:

— Գնա կարտոֆելի հին պարկերը, մեկ ել են բրեզենտը...
Գիտե՞ս վորտեղ ե... Տակառի վրա... Տեր աստված, ինչպես ե շնչում:

Լուիզան ճրագը տվեց Պիտոյին, դուրս չեկավ գոմից:

Պիտոն, ունքերը կիտած և մտքատար, սկսեց կովի չորս կող-
մին նայել: Փորը դարձյալ մեկ ուռչում եր, մեկ հանգստանում: Պի-
տոյի սիրտը վախից կուչ եր գալիս, չերը մտածում եր, թե կարող
ե Նարգիզից զրկվել և շուտով կտեսնի, թե ինչպես նրա շունչը
կկտրվի, հենց աչքտեղ ել կմեկնի իր սառած վոտքերը: Սարսափը
պատում եր նրան, ասես մեջքն ասեղներով ծակծկում ելին: Այդ-
քան սիրուն կովը, նախրի ամենալավ կովը, վոր որեկան տասնվեց
լիտր կաթ եր տալիս, տարին մի հորթ: Ինչո՞վ ե հիվանդ, Ինչո՞ւ
նա պիտի զրկվի իր չեկամուտից, վորին նա սպասում ե: Մի՞թե
վատ ե խնամել, մի՞թե քիչ ե տվել գազար ու բազուկ, թարմ խոտ:

Պիտոն ինքն ել չգիտեր, թե ինչ անի: Տնտղում եր մեջքը փո-
րը, կուրծը աչքերին եր նայում և չգիտեր գալրանա, թե խղճա:
Վախենում եր, վոր գալրանալուց հիվանդությունը կսաստկանա,
դրա համար եր մեղմ եր խոսում, շոյում եր:

— Նախշունս, Նարգիզս... իմ ջանս...

Բայց սրտանց ուզում եր ասել «անիծյալ հայվան», աղոթելից
ամուր քաշել, կամ շներին հո՛ւյ տալ, վոր զգեն նրան:

Լուսիզան վերադարձավ, բերեց բրեզենան ու պարկերը: Յեր-
կուսով շատ զգուշութեամբ կովին փաթաթեցին, ինչպես չերեխայի:
— Իմ խեղճ Նարգիզ, — ասում էր Պիտոն:

2.

— Լուսիզ, չես թե չե, լակոտ, — կանչում էր Պիտոնի կինը: Նա
չորեք էր մեծ կաթսայի առաջ և թևերը վեր քաշած, մաքրում էր
կարտոֆելը, կլպում ու տրորում: — Տես գամ, քեզ ինչպես եմ հաս-
ցնելու... Սովոր ես գոռալու...

Ճիշդ լսվում էր ուռենու ճյուղերից գործած որորոցից, վոր
դրված էր չերկու մահճակալի միջև: Յերեխայի ճիշդ չեր կտրվում:
Հանկարծ լսվեց ինչ-վոր խռոց, ասես չերեխային խեղդո՞ւմ են...

— Ախ, անիրավ լակոտ, — կանչեց Պիտոնի կինը, — սուս ես ա-
նելու, թե չե:

Վառարանի մոտ նստել էր շունը, գլուխը դրել թաթերի վրա,
նայում էր կրակին: Տաք մոխրի վրա պառկել չին չերկու կատու:

Պիտոնի կինը մոտեցավ որորոցին: Ծանր էր նայել մանկան
նիհար և գունատ դեմքին: Նրա աչքերը փակ էին, չերեխան հազիվ
էր կանչում: Նրա մարմինը ցնցվում էր քաթանե սավանի տակ:

— Սուս ես անելու, թե չե, — ասաց մայրը: Հետո տեղը շտկեց,
անկողինը փափկացրեց ձեռքով և կողքին պառկեցնելով, ասաց. — Դե
քնի... Հենց մեկը պիտի բան ու գործ թողնի, քեզ հետ լինի:

Նա մոտեցավ վառարանին, կրակը թեթացրեց: Շունը վեր կա-
ցավ, սկսեց սենյակում քայլել, գետինը հոտոտելով: Կատունները
զարթնեցին Հենց այդ ընկերին ներս մտավ Պիտոն, նրա հետևից՝
Լուսիզան:

— Ասես Նարգիզը հիվանդ է, — ասաց նա, գլուխն սրորելով, —
հիվանդ է, այո:

Կինը, վոր կրակին էր փչում, տեղը շտկվեց:

— Ի՞նչ ես ասում... — հարցրեց նա, մի քիչ գունատվելով:

— Ասում եմ, Նարգիզը հիվանդ է:

— Բա ի՞նչ արի:

— Չեմ իմանում: Ցավը ջրգլարի մեջ է: Բան չի ուտում: Ուռել է:

— Ծանր է շնչում, — ավելացրեց Լուսիզան:

— Մի խոսքով՝ ծանր հիվանդ է, — ասաց Պիտոն և գլխակը
շարժեց սեղանին:

Պիտոնի կինն այնքան զարմացած էր, վոր խոսք չգտավ ասե-
լու: Նրա համար ծանր էր լսել, վոր ամենից շատ կաթնատուն,
ամենալավ կովը, Նարգիզը հիվանդ է: Բայց հետո ուշքը հավաքեց
և դարձավ Պիտոնին:

— Ասում ես հիվանդ է և միայն գլուխը ես քորում: Գուցե
կարծում ես թե անասնաբուժը միայն շների համար է: Կովը սատ-
կում է, իսկ գուռ տեղիցդ ել չես շարժվում:

Յերեխան նորից ճչաց: Որորոցը ճռում էր, չերբ չերեխան
ճիգ էր անում, պալքարում ցավի դեմ: Նրա ճիչն ոգնության հա-
մար էր: Սակայն վոչ հայրը և վոչ ել մայրն ուշադրութուն չեցին
դարձնում այդ կանչին: Պիտոնի կինը ձեռքերը դալրուկից իրար
խփելով կանչում էր:

— Բերանդ բաց վոր սպասես եստեղ, կովին ոգնած կլինես...

Յեվ Լուսիզային դառնալով, բղավեց

— Մեղավորը դու չես, անիրավ... Տարել ես, չերեխի, փչացած
խոտ ես տվել:

Յերեխան սկսեց պինդ և խոր հազալ: Ասես հիմա շունչը բե-
րանից դուրս է գալու: Պիտոն գլուխը վեր հանեց և նայեց որորո-
ցի կողմը:

— Ես ի՞նչ ե... Յերեխան է, — հարցրեց նա, — ինչու չե նա
այդպես ճչում:

— Վոչ մի տեղը չի ցավում: Ասամ է հանում... Իմ խեղճ
Նարգիզս:

— Դե, չես գնամ անասնաբուժին կանչեմ:

— Խեղճ Նարգիզ, ել վերտեղից կճարենք այդպիսի կով: Սուս
ես անելու, թե չե, խոզի ճուտ: Տես քեզ վոնց եմ ծեծելու:

Լուսիզան մոտեցավ, չերեխային գրկեց, հանեց որորոցից: Պիտոն
պիշակն էր հագնում, իսկ Լուսիզան չերեխան գրկած նստել էր վա-
ռարանի մոտ, կաթնապուր էր տալիս: Փոքրիկը չեր ուտում, դեռ ու
դեն էր ձգվում: Նրա սիրտը խառնում էր, նա խռոցնում էր:

3.

Բժիշկին ինքն էր քշում սալակին լծած ձին: Ճանապարհն ան-
հարթ էր, քարքարոտ, և ինչքան նա աշխատում էր լավ տեղով գնալ,
սանձն աջ ու ձախ էր քաշում, բայց և այնպես անիվը չերբեմն քա-
րի վեր դեպչում կամ ընկնում փոսի մեջ: Բարակ անձրև էր մա-
ղում: Ամպած չերկնակամարի վրայով թռչում էին ագռավները:

— Բարև, պարոն Ռոզեն, — ասաց մի հաստ մարդ, վորը ցան-
կապառն անցավ և հանկարծ չերեխաց ճանապարհի վրա:

Բժիշկը ձին պահեց:

— Ա, պարոն Տորել, — ասաց նա: — Բարև ձեզ... Ես ի՞նչ կանուխ
եք վեր կացել:

Տորելը մի ընդե սպասեց, շունչ առավ և արձակելով վզին
փաթաթած շորի կապը, պատասխանեց:

— Այո, բժշկ... Յես գնում եմ Պիտոյի մոտ: Նրա կովը չորս
որ է՝ հիվանդ է թոքերի բորբոքումով: Չորս որ է՝ բժշկում եմ...
Հիմա անասունները շատ են հիվանդանում թոքերի բորբոքումով:

— Բա... Յես ել եմ գնում Պիտոյի մոտ:

— Այո, այո, յես գիտեմ... Յերեխայի համար: Յես եմ խորհուրդ
տվել ուղարկել ձեր հետևից: Յես կարծում եմ, վոր նրա յերեխան
շատ լուրջ հիվանդ է:

— Նստեք, միասին գնանք:

— Կոշիկներս կեղտոտ են պարոն Ռոզեն:

— Վոչինչ, նստեք...

Մի քիչ անց՝ յերեխայ Պիտոն:

— Բարե Պիտո... Կովն ինչպե՞ս է, — հարցրեց անասնաբուժը:

— Սատկեց այսօր, առավոտյան... Աստված իմ... սատկեց...
Յես հենց գալիս ելի ձեզ հայտնելու, վոր Հանհանգստանաբ: Սատ-
կեց... Յեվ ինչքան դժբախտություն միջանի տարում: Յերեք տա-
րի առաջ յերկու ձիս սատկեց և մի հորթ: Անցյալ տարի մի մա-
տակ, — չգիտեմ պատճառն ինչ էր, — հետո հավերս սատկոտեցին:
Հիմա յել կովս... Շատ լավ կով էր, շատ... Աչքով են տվել, այո,
աչքով են տվել:

Պիտոն դարձավ իր վոտը գետնով աճավ, մազերը քաշելով:

— Իսկ ինչքան փող արժի այդ բոլորը: Յորենը չի ծախվում,
կարտոֆելին գին չեն տալիս: Տարին յերաշտ էր, խոտը պակաս:

Ինչքան փող է կորչում... Տեր աստված, ո՞վ է մեզ աչքով տվել:

— Իսկ ձեր յերեխան, — հարցրեց Ռոզեն:

Պիտոն նայում էր բժշկին և կարծես չէր հասկանում, թե ինչ
է ասում նա:

— Ինչ էլիք հարցնում, — ասաց նա:

— Ձեր հիվանդ յերեխայի առողջությունն ինչպե՞ս է: Յես
նրա մոտ եմ գնում:

— Դուք մեր փոքրիկի մասին եք հարցնում...

— Այո:

— Ա... Գիտեք ինչ: Նա յել մեռավ...

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԱԺԻՍԱՀԱՏՆԵՐ» ՎԵՊԻՑ

1. ԾԵՐՈՒՆԻ ԱԾԽԱՀԱՏԸ

Մի մութ, անլուսին գիշեր Մարշենից դեպի Մոնսու տանող
մեծ ճանապարհով քայլում էր մենավոր մի անցորդ:

Սուր քամին ծակում էր մարմինը, ու նա քայլում էր արագ՝
բարակ, չթե բաճկոնի ու ծալավոր անդրավարտիկի մեջ դողալով:

Նա կոնստատկին տանում էր մի փոքրիկ կապոց, վորը, ըստ
յերևույթին, նրան շատ էր նեղում, այդ պատճառով հաճախ տե-
ղափոխում էր այն մի թևի տակից մյուս թևի տակը ու սեղմում
արմունկով, վոր կարողանա մրսած ու ցրտից ճաքճքված արյուն-
լվա ձեռները խորունկ տեղավորել անդրավարտիկի զրպանների մեջ:

Անապաստան ու անհաց մնացած այդ բանվորի գլխում միայն
մի միտք էր պտտվում. «Հալբաթ, լուսադեմին կտաքանա»:

Այդպես նա քայլում էր մոտ մի ժամ, յերբ հանկարծ, ճանա-
պարհից դեպի ձախ, Մոնսուլից յերկու կիլոմետր հեռավորության
վրա, յերևաց կարմրագույն մի կրակ, կարծես թե յերեք խարույկ-
ներ կախված էլին ողի մեջ: Հուսահատ անվճռականությամբ կանգ
առավ, բայց գոնե մի փոքր տաքանալու անգուսպ ցանկությունն
ստիպեց նրան շարժվել դեպի կրակը...

Դա ամխահանքերն էլին:

Բանվորին տիրեց ամոթի և տխրության ճնշող զգացմունքը՝ ել
ինչու շարժվել առաջ, քանի վոր աշխատանք չի գտնելու...

Նա սկսեց բարձրանալ ավազե թմբի վրա, ուր յերեք խոշոր
վառարաններում ալրվում էր ածուխը, լուսավորելով ու միաժա-
մանակ տաքացնելով այնտեղ աշխատող մարդկանց: Հեռվում սևին
էլին տալիս մարդկանց ստվերներ, վորոնք սալակներով դուրս ե-
լին բերում անպետք հողն ու թափում կրակի առաջ:

— Բարե ձեզ, — ասաց նա, մոտենալով խարույկներից մեկին,
վորի մոտ կանգնած էր մի ծերուկ մորթե գլխարկով:

Մի մեծ, դեղնագույն ձի կանգնել էր առանց շարժվելու և սպասում էր քարացած, մինչև վոր կդատարկեն իր բերած վեց սալակները: Շեկ, նիհար մի լերիտասարդ ծուլ ու քնատ շարժումներով կատարում էր իր գործը:

— Բարև,— պատասխանեց ծերուկը:

Տիրեց լուսթյուն: Բանվորը, նկատելով, վոր իրեն կասկածով են նայում, շտապեց ավելացնել.

— Իմ անունն Ետյեն Լանտյե չե, չես մեքենավար եմ... աշխատանք եմ փնտռում... կճարվի աչտեղ:

Կրակը լուսավորել էր նրան: Յերիտասարդ էր, քսան տարեկան, գեղեցիկ, դուրեկան դեմքով: Նա ուժեղ էր չերևում, չնայած կարճ հասակին ու նուրբ կազմվածքին:

Ծերուկը բացասաբար թափահարեց գլուխը:

— Մեզ մոտ գործ չկա: Յերեկ ել չերկու մեքենավար աշխատանք ելին փնտռում... վոչինչ չկա...

Քամու ուժեղ հարվածը նրա խոսքը կտրեց:

— Սա հանքերն են,— հարցրեց Ետյենը, շենքը ցույց տալով:

Ծերունու սաստիկ հազը խանգարեց նրան պատասխանել: Նա թքեց գետնին. թուրք կրակի կարմրավուն շողի մեջ սև բծի տեսք ունեւր:

— Այո, Վորեղի հանքերն են... Իսկ այնտեղ— բնակարանները,— վերջապես ասաց նա, պարզելով ձեռքը խավարի մեջ չերևացող կտուրներին:

Սալակներն արդեն դատարկ էլին, դեղին ձին չեա դարձավ, դժվարութամբ քաշելով նրանց ուղիների վրայով: Ծերուկը հետևեց նրան: Նա քայլում էր ծանր, հողացավից կուշ լեկած վոտները հաղիվ շարժելով:

Ետյենը դեռ կանգնած էր կրակի մոտ ու տաքացնում էր արնոտված ձեռքերը: Նրա առաջ արդեն պարզ նշմարվում էլին շենքի բոլոր մասերը— փայտե սեացած սրահը, հանքահորի վիշկան, բարձրացնող մեքենայի կամերան:

Ամբողջ այս ցածրիկ աղյուսե շենքը, վոր նստել էր ձորահովտի խորքում, լեղջուրի նման վեր ցցված ծխնելույզով— նմանվում էր մի տեսակ գիշատիչ կենդանու, վոր դարան մտած՝ սպասում է իր զոհին:

Յերիտասարդը կուցավ, վոր գետնից վերցնի իր կապոցը, չերբ հեռվից լսեց ծերուկի հազը: Նա դանդաղ բարձրանում էր ձիու ուղեկցութամբ, վորը դարձյալ քաշում էր վեց լիքը սալակներ:

Լանտյեն, ըստ չերեւելի, դուր էր չեկել ծերուկին, նա զըրուցելու նշաններ ցույց տվեց:

— Յես Մոնսուեցի չեմ,— ասաց նա,— անունս Բոնմոր (բարի մահ) ե:

— Ձեր մականունն է,— զարմանքով հարցրեց Ետյենը:

Ծերուկն ինքնագոհ ծիծաղեց, հանքահորը ցույց տալով:

— Այո, այո... Ինձ չերեք անգամ այնտեղից դուրս են հանել կիսամեռ դրության մեջ: Առաջին անգամ չես ամբողջովին այրվեցի, չերկրորդ անգամ բողազս լցվեց հողով, իսկ չերրորդ անգամ գորտի պես լողում ելի ջրում: Այդ որվանից ընկերներս տեսան, վոր չեմ ուզում սատկել, անունս դրին Բոնմոր:

Նա նորից ծիծաղեց: Նրա ծիծաղը նման էր ժանգոտած դռան խզողի, վորից հետո նորից սկսվեց սաստիկ հազը: Բոցը լուսավորում էր այժմ նրա ցանցառ ձերմակած մագերով մեծ գլուխը և կապտած, գունատ չերեսը:

Նա կարճահասակ էր, խոշոր վզով, ծուռ վոտքերով ու չերկար ձեռքերով, վորոնց լայն վոսկորները հասնում էլին մինչև ծնկները:

Իր ձիու նման, վոր կանգնել էր քարե արձանի պես անշարժ, նա վոչ ցուրտն էր զգում, վոչ ել ականջներում սուրող սուր քամին:

Յերբ նրա կոկորդը քրքրող հազը դադարեց, ծերուկը թքեց ու նրա խորխոր, ինչպես և առաջ, սև բծի պես ընկավ գետնին:

— Վաղո՞ւց ե, ինչ աշխատում եք ածխահորերում,— հարցրեց Ետյենը, նայելով նրա խորխորին:

— Այո, վաղուց,— պատասխանեց Բոնմորը,— դեռ ութ տարեկան չկայի, վոր ի՞նչ աչս հորը, իսկ հիմա հիսունութ տարեկան եմ: Հաշվեցեք: Ի՞նչ ասես, վոր չեմ արել աչտեղ: Առաջ, փոքր վախտս՝ ընդունող ելի, հետո, չերբ մի քիչ մեծացա՝ դարձրին սալակը հետ քշող, այնուհետև, ամբողջ տասնութ տարի, հանքափոր ելի: Դրանից հետո, անիծված վոտքերիս պատճառով, ինձ հողի գործ տվին: Լցնում ու նորոգում ելի գետնի տակի անցքերը, մինչև վոր ինձ դուրս հանեցին լույս աշխարհ, վորովհետև բժիշկն ասաց, թե եստեղ կմեռնեմ: Յեվ անա հինգ տարի չե, ինչ աշխատում եմ ձիաքարշի վրա... ե, ի՞նչ կասեք, լավ ծառայություն չե: Հիսուն տարի ածխահանքում, դրանից քառասունհինգ տարին— գետնի տակ:

Սոսակցության ամբողջ ժամանակ խարուչիլի բոցն արշուճում շողով լուսավորել էր նրա չերեսը:

— Վարչությունը խորհուրդ ե տալիս ինձ հանգստանալ,— շարունակեց նա,— իսկ չես հանգիստ չեմ ուզում: Ինձ եմ, ինչ ե: Մի չերկու տարի չե քարշ կտամ, վաթսուն տարիս կլրանա, ինձ կենսաթոշակ կտան— հարյուր ութսունսուն ֆրանկ: Իսկ չեթե հիմա հեռանամ— հարյուր հիսունից ավել չեմ ստանա: Գալերը խո-

բամանկ են: Յես գեռ վոչինչ, պինդ եմ... վտաքերս միայն... Կաշ-
վիս տակ ջուր ե անցել: Յերեմն աչնպես ե ծակում, վոր առանց
ճողոցի չեմ կարող թաթա շարժել:

Նա նորից հաղաց:

— Հագն ել հանքում եք ձեռք բերել, — հարցրեց Նույնը:

Ծերուկը գլխով բացասական նշան արեց:

— Ձե, անցած ամսին մրսեցի... Առաջ յերբեք չեյի հագում,
իսկ հիմա չեմ կարողանում ազատվում: Ու շարունակ թքում եմ,
թքում...

Նա կոկորդովը մեկ խոխոաց ու սև խորխոր նորից թքեց:

— Այս ինչ ե, արյուն, — վճռեց, վերջապես, հարցնել Նույնը:

— Ածուխ ե, — պատասխանեց Բոնմորը, բերանը սրբելով: —
Ներսս սրանից ինչքան ասես կա... Պառավ հասակիս տաքանալու
պաշար ունեմ... Չնայած վոր հինգ տարի չե, ինչ ածխահորը չեմ
իջել... Լավ պաշար ե... Վոչինչ, ածուխը մարդուս լավ ե պահում:

Տիրեց լուսթյուն: Ածխահորի խորքից լսվում եյին մուրճի հա-
մաշափ դարկերը, քամին շարունակում եր իր տխուր յերգը, կար-
ծես թե սոված, տանջված մարդկանց բողոքն եր, վոր գալիս եր
հեռու խավարից: Վառարանների բոցը դողում եր ու որորվում,
կարծես ինչ-վոր մի բանից վախեցած:

Ծերուկը նորից սկսեց բըթմնջալ. — Այն, վաղուց ե, վոր նրանք
սկսել են այս ծանր աշխատանքը. — համարյա հանքահորի բացման
առաջին օրից: Իսկ հանքահորն արդեն հարյուր վեց տարի չե, ինչ
կա: Նրա պապի պապը՝ Հիլյոմ Մագեն, նա այն ժամանակ տաանը-
հինգ տարեկան եր, Ռեկիլյարեյում գտավ ածխաշերտերը: Ընկերու-
թյունն այնտեղ շինեց առաջին ածխահորը, վորն անվանեցին «Հիլյոմի
ածխահոր»: Հիմա նա վաղուց թողնված ե: Նա իր պապին չի հի-
շում: Ասում են, ուժեղ մարդ եր: Վաթսուն տարեկան մեռավ:
Հայրը, Նիկալայ Մագեն, մնաց հանքահորի փլվածքի տակ: Մարմի-
նը նույնիսկ չգտան: Դրանից հետո յերկու հորեղբայրը և յերեք
յեղբայրները նույնպես զոհվեցին այստեղ: Իսկ նա, Վինցենտ Մա-
գեն, դուրս յեկավ հորից համարյա թե վողջ, միայն վտաքերը մի քիչ
փառավել են, այդ պատճառով ել նրան համարում են ճարպիկ...

Ինչ արած, պետք ե աշխատել: Այստեղ գործը մի գլուխ,
արհեստի նման, հորից անցնում ե տղային: Նրա տղեն ել, Տուսսեն,
Մագեն, թոռներն ել, ամբողջ ազգականները մաշվում են աշխա-
տանքից ու պիտի մաշվեն այս ածխահորերում... Նրանք բոլորն ել
ապրում են այնտեղ, զիմացը...

Հարյուր վեց տարվա մեծերի ու փոքրերի սպանդանոց և միշտ

նույն տիրոջ մոտ: Յերեմի շատ քիչ բուրժուա այս տեսակ պատ-
մություն կունենա:

— Գոնե մարդ կուշտ լինեք, — շնչաց Նույնը:

— Յես ել եզ եմ ասում, յեթե ունես մի կտոր հաց — կապրես:

Բանվորը լռեց, աչքերը յերևացող շենքերի վրա ուղղելով:
Տեղ-տեղ ձրագներն սկսում եյին վառվել: Մոնսուլի զանգակատան
ժամացույցը խփեց չորսը: Ցուրտն ուժեղանում եր:

— Հարձուստ ե ձեր ընկերությունը, — հարցրեց Նույնը:

Ծերուկն ուսերը բարձրացրեց ու նորից իջեցրեց, կարծես թե
վոսկու ծանրության տակ:

— Շատ հարուստ ե: Միլիոններ ե բանացնում: Պարզ ե...

Տասնինը ածխահորեր, տաս հազար բանվոր, որական մինչև հինգ
հազար տոնն ածուխ ե դուրս գալիս... Բոլոր հանքերն իրար հետ
կապված են յերկաթուղով... Բանի-քանի գործարաններ, արհես-
տանոցներ: Այն փողը բոլ ե:

Լավեց սալակների դղրդուներ, ձին ականջները սրեց: Հանքա-
հան մեքենան, ըստ յերևույթին, նորոգել եյին, ու բանվորները նո-
րից անցան գործի:

Ծերուկն սկսեց ձին լծել ու, նրա պարանոցը շոյելով, ասաց
փաղաքշանքով.

— Ինչ ես վավազնում, ծնւյլ պառավ: Ախ, մեկ իմանար
պարոն Գենեբոն, թե դու ինչո՞վ ես զբաղված աշխատանքի փոխարեն:

— Այս հանքերը պարոն Գենեբոյին են պատկանում, — հարցրեց
Նույնը:

— Վոչ, պարոն Գենեբոն միայն գլխավոր կառավարիչն ե:

Նրան նույնպես ոռճիկ են վճարում, ինչպես և մեզ, մեղավոր-
ներին:

— Բա ում ե պատկանում այս բոլորը:

Բոնմորը չկարողացավ պատասխանել, նա քիչ մնաց խեղդվեք
անդուսպ հագից: Վերջապես, թքելով իր սև խորխոր, սրբեց շրթունք-
ներն ու կրկնեց հարցը.

— Այս բոլորն ում ե պատկանում: Ո՞վ գիտե: Ինչ-վոր մարդ-
կանց, յերեկ:

Ու նա ձեռքը մեկնեց տարածության մեջ, ցանկանալով, կար-
ծես, ցույց տալ այն մարդկանց բնակավայրը, վորոնց համար Մա-
գենների ամբողջ տոհմը քաշում ե իր դարավոր լուծը:

Նրա ձախի մեջ նկատվեց անհավատ մի վախ, կարծես թե
խոսքը մի տեսակ արյունաբեռ, չտեսնված աստվածության մասին
եր, վորին իրենք բոլորն ել տալիս եյին իրենց մարմինը, կյանքը և
վորին վոչ-վոք յերբեք չի տեսել:

— Միայն թե մարդ կուշտ լիներ, — չերրորդ անգամ կրկնեց Ետյենը:

— Ե՛րբ, սիրելիս, չեթե աղքատներն ամեն ուր հաց ունենալին — շատ լավ կլիներ, — ասաց ծերուկը, ու կաղալով քալեց իր ձիու հետևից:

Անթափանցելի խավարի մեջ թաղված ածխահորը, գազազած կենդանու նման տնքում եր ու հեռում շնչակտոր, կարծես դժվարությամբ եր մարսում կուլ տված մարդկային մարմինները... Իսկ չերկինքը դժգույն եր, գործարանների վառարաններն ու ծխնելույզներն ելին, վոր լուսավորում ելին նրան հրդեհի չարագուշակ բոցով:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԾԽԱՆՆԵՐԻՆ ՄՂՈՒՄ Ե ԳՈՐԾԱԴՈՒԼԻ

Այն որերը, չերբ վարչությունն աշխատավարձ եր վճարում բանվորներին — Մոնսուսն տոնական տեսք եր ընդունում: Շրջանի բոլոր հանքերից ածխահատները խմբերով հավաքվում ելին այնտեղ: Շատերն սպասում ելին փողոցում, վորովհետև բաժանմունքը, վորտեղ աշխատավարձն եր վճարվում, նեղ եր:

Առևտրականներն ոգավում ելին այդ հանգամանքից ու վրաններ խփում՝ զանազան ապրանքներով: Առանձնապես աշխուժ առևտուր ելին անում գարեջրատները և պանդոկները, ու ածխահատների մեծ մասն սպասում եր աշխատավարձ ստանալու հերթին: Վերջում ել, ոռճիկ ստանալուց հետո, նրանք հավաքվում ելին նույն տեղը՝ ժամանակ անցկացնելու: Ավելի թեթևամիտներն այնտեղից ուղևորվում ելին դեպի «Հրաբուխ»-ը ու թողնում այնտեղ մնացած փողը:

Մագենն ու Ետյենը, առաջ շարվելով, նկատեցին, վոր բանվորներն արտասովոր տրամադրության մեջ են: Այբոխում նկատվում եր խուլ գայլուկ: Նրանց շրթունքներից լսվում ելին սպառնալիքներ. բռունցքները սեղմվում ելին:

Նրանք գնացին դեպի դրամարկղը: Դա մի փոքր բառակուսի սենյակ եր՝ մեջտեղից տախտակով բաժանած: Պատերի չերկարությամբ դրված նստարաններին նստած ելին միքանի ածխահատներ: Յերկաթացանցի մեջ բացված լուսամուտի առաջ կանգնած եր նրանցից մեկը: Գանձապահն ու իր ոգնականը փող ելին վճարում նրան:

Ձախ կողմում, նստարանից վերև, կախված եր դեղին թղթի վրա տպված հայտարարություն: Մրտոված պատի վրա այդ հայտարարությունն առանձնապես աչքի չեր ընկնում: Առավոտվանից ածխահատները խմբվել ելին նրա առաջ: Մի բոպե լուռ կանգնելուց հետո նրանք թափահարում ելին ուսերը և հեռանում կռացած:

Յերբ Մագենն ու Ետյենը մտան դրամարկղը, հայտարարության առաջ կանգնած ելին չերկու ածխահատ: Մեկը չերիտասարդ՝ մեծ քառակուսի գլխով, մյուսը՝ ծեր, ապուշ դեմքով: Վոշ մեկը և վոշ ել մյուսը կարգալ չգիտեր: Յերիտասարդը շարժում եր շրթունքները, տառերը կապելով, իսկ ծերուկն անշարժ կանգնած՝ բութ հայացքով նայում եր հայտարարությանը: Բանվորներից շատերը ներս ելին մտնում այն հաշվով, վոր նայեն հայտարարությանը, ու մի բան չհասկացած, դուրս գան:

— Ապա մի կարդա, — ասաց Մագեն, դիմելով Ետյենին: Նա ևս վարժ չեր գրագիտության մեջ:

Ետյենն սկսեց բարձր կարդալ:

Ընկերությունը հայտարարում եր բանվորներին, վոր դեպի իրենց պարտականություններն անփուլթ վերաբերմունք ցույց տալու պատճառով, այն ե՝ հանքահանքերն ամրացնելու նկատմամբ, վորոշել ե մտցնել վարձավճարի նոր ձև, համոզվելով, վոր առգանքները չեն ազդում նրանց վրա: Այսուհետև ածխահատներն անցքերն ամրացնելու համար ստանալու չեն առանձին վարձ — բանեցրած փայտեղենի խորանարդ մետրի հաշվով: Դրա համեմատ մի սալակ ածուխի վարձը հիսուն սանտիմից իջեցվում ե մինչև քառասուն սանտիմ, նայած ածուխի վորակին ու մշակման վայրի հեռավորությանը:

Այնուհետև բերված եր բավականին անորոշ մի հաշիվ, վորով ընկերությունն աշխատում եր ապացուցել, թե սալակներից պակասեցված տաս սանտիմը միանգամայն լրացվելու չե անցքերի ամրացման վարձատրությամբ:

Վերջում ընկերությունն ավելացնում եր, վոր ցանկանալով բանվորներին ժամանակ տալ լայն չափով ծանոթանալու վարձաչափի նոր ձևերին, — ալգալիսին կիրառվելու չե դեկտեմբերի 1-ից:

— Զի՛ կարելի արդյոք կամաց կարդաք, — բղավեց գանձապահը, — դուք խանգարում եք ուրիշներին:

Ետյենը, առանց ուշադրություն գարձնելու, կարդաց մինչև վերջը: Նրա ձայնը դողում եր: Յերբնա վերջացրեց, բոլորը մի առ ժամանակ լուռ նայում ելին հայտարարությանը:

Ձահել և ծեր ածխահատները կարծես թե ելի մի բանի ելին սպասում:

— Այ քեզ ոչին, — շնչաց Մագեն, նստելով:

Ետյենը տեղավորվեց նրա կողքին: Ընկերությունն, ըստ չերեույթին, ծիծաղում ե նրանց վրա: Խեղբի մոտ բան ե, վոր անցքերի ամրացումից ստացված գումարը ծածկի սալակներից պակասեցրած վարձը:

Ամենամեծ վարձը, վոր նրանք կարող են ստանալ ամրացման համար — դա ութ սանտիմից չի անցնի: Այսպիսով ընկերութունը նրանցից կուլ է տալիս յերկու սանտիմ, չհաշված դեռ ժամանակը, վոր կտահանջվի խնամքով աշխատանք կատարելու համար: Սնդիքը պարզ է՝ աշխատավարձի այս նոր ձևը ռոճիկի պակասեցման քողարկված ձև է: Ընկերութունը բանվորներին պլոկելով, ուզում է խնայողութուն անել:

— Գրողը դրանց տանի: Հիմար կլինենք, յեթե համաձայնվենք այդ պայմաններին, — ասաց Մազեն:

Նկատելով, վոր դրամարկղի առաջ մարդ չկա, նա մոտեցավ լուսամուտին: Ժամանակ խնայելու համար, դրամը վճարվում էր այն հանքափորերին, ովքեր աճուրդի ժամանակ իրենց անունով ելին վերցրել հանքաշերտերը, իսկ նրանք իրենց հերթին այդ դրամը բաժանում ելին ընկերներին:

— Մազե և ընկերներ, — ասաց գանձապահի ոգնականը, — ֆիլյոնների շերտը, անցք № 7:

Նա քրքրում էր թերթերը, վորոնք կազմվում ելին բանվորների հաշվեգրքույկների հիման վրա: Վերակացուներն ամեն ուր լրացնում ելին այդ գրքույկները, թե քանի սալակ ածուխ է ստացվել այս կամ այն մշակվող ածխահորից:

— Մազե և ընկերներ, ֆիլյոնների շերտը, անցք № 7, հարյուր յերեսուն հինգ ֆրանկ, — կրկնեց գանձապահը, վճարելով դրամները:

— Ներեցեք... բայց... չե՞ք սխալվում արդյոք, — հարցրեց զարմացած Մազեն:

Նրա գողը բռնեց: Նա ապուշ հայացքով նայում էր դրամներին, չհամարձակվելով վերցնել:

Նա առաջուց զիտեր, վոր պիտի ստանա սովորականից պակաս, բայց սա արդեն չափից դուրս է: Գուցե ինքն է սխալվել: Դրամի մի մասը տալով Ջախարին, Ետյենին ու այն բանվորին, վորը փոխարինել էր Շավալին, իրան, Բոնմորին, Կատերինային ու Ժանյե-նին մնում էր միայն հիսուն ֆրանկ:

— Վե՛չ մի սխալ չկա, — պատասխանեց ոգնականը: — Դուրս գալով յերկու կիրակի և չորս չաշխատած որեր, ձեզ հասնում է միայն ինն որվա աշխատավարձ:

Մազեն սկսեց մտքումը հաշվել՝ ինն որվա աշխատանքի համար վճարում են — Կատերինային տասնութ ֆրանկ, Ժանյենին — իննը և իրեն, Մազեյին — յերեսուն: Բոնմորն աշխատել է միայն յերեք որ, ահուժամենայնիվ, ավելացնելով դրանց վրա Ջախարի և յերկու ընկերների ինսուժ ֆրանկը — գումարը պետք է ավել լիներ:

— Միք մոռանա տուգանքները, — ավելացրեց գանձապահը: — Քսան ֆրանկ անփութ աշխատանքի համար:

Մազեն հուսահատ ձեռը թափ տվեց: Քսան ֆրանկ տուգանք ու չորս որվա բանթողութուն: Այդ դեպքում, իհարկե, հաշիվը ճիշտ է: Ուր են այն որերը, յերեք յերկու շաբաթվա աշխատանքի համար նա տուն էր տանում հարյուր հիսունական ֆրանկ: Այն ժամանակ Բոնմորը դեռ կարող էր աշխատել, իսկ Ջախարն էլ ամուր էր:

— Վերցնում եք, վերջապես, փողը, թե վոչ, — բարկացած բղավեց գանձապահը: — Դուք սպասեցնել եք տալիս մյուսներին... Ձեք ուզում — թող մնա:

Մազեն դողդոջուն բռի մեջ հավաքեց փողերն ու այն է՝ պատրաստվում էր հեռանալ, յերբ գանձապահի ոգնականը կանգնեցրեց նրան:

— Դուք Տուսսեն Մազեն եք: Ձեզ ուզում է տեսնել պ. գլխավոր քարտուղարը: Ներս մտեք, նա մենակ է:

Ապշած, շժմած բանվորն իրեն տեսավ մեծ առանձնասենյակում, կահավորված կարմիր փայտի կահկարասիներով, վոր ծածկված ելին կանաչ ռիպսով:

Թղթելով ծանրաբեռնված գրասեղանի առաջ նստած էր գլխավոր քարտուղարը, մի բարձրահասակ, գունատ պարոն: Նա, առանց կանգնելու և Մազեյին նայելու, սկսեց ինչ-վոր բան ասել: Խոսեց մոտ հինգ րոպե, բայց Մազեյի ականջներն այնպես ելին գոթում, վոր նա փոշինչ չհասկացավ:

Նա հազիվ էր ըմբռնում, վոր խոսքն իր հոր մասին է, վորին ընկերութունն ուզում է ազատ արձակել: Հարգելով նրա հիսուն տարեկան հասակը և քառասուն տարվա աշխատանքը հանքերում — նրան նշանակում են կենսաթոշակ տարեկան հարյուր հիսուն ֆրանկ:

Այնուհետև, քարտուղարը ձայնը բարձրացրեց ու խոսեց խիստ, նկատողութուն անելով Մազեյին այն բանի համար, վոր նա զբաղվում է քաղաքականությամբ, հիշեցրեց Ետյենին, փոխադարձ դրամարկղը ու իր խրոխտ ճառը վերջացրեց, խորհուրդ տալով Մազեյին չընկնել այդ հիմարությունների մեջ: Ընկերութունը նրան համարում է իր լավագույն բանվորներից մեկը: Իզուր է նա իրեն վարկաբեկում...

Մազեն այնպես էր շփոթվել, վոր չկարողացավ բան ասել: Դողդոջուն ձեռքերով նա արորում էր գլխարկը ու, դուրս գալով, կմկմաց:

— Իհարկե, պարոն քարտուղար, Հավատացնում եմ ձեզ, պարոն քարտուղար...

Դուրս գալով փողոց ու տեսնելով իրեն սպասող Նալենին, նա, վերջապես, բռնկվեց.

Յես ապուշ եմ, պետք եր պատասխանել: Խլում են վերջին կտոր հացը ու դեռ հայհոյում: Նրանք չարանում են քեզ վրա, ա- սում են, վոր դու կազմալուծում ես ածխահատներին... Բա ի՞նչ պիտի անել: Ծռել վիզը ու ասել շնորհակալութուն: Դա, իհարկե, խելացի քաջ կլինի նրանց համար:

Մագեն լռեց, խեղդվելով գայլուլթից ու վախից: Նալենը քաշ- լում եր մռայլ, մտածելով:

Նրանք նորից ձեղքեցին փողոցը բռնած բանվորների շարքը: Հուզմունքն, ըստ յերևութի, աճում եր: Դա խելացի, չափա- հաս մարդկանց վրդովմունք եր, առանց կանչվառուցի, առանց ավե- լորդ շարժումների. բայց այդ վրդովմունքն սպառնալից եր իր թվա- ցող հանդարտությամբ:

Գրագետ բանվորներից մեկը հաշվեց՝ այն յերկու սանտիմը, վոր ընկերութունը գողանում եր բանվորներից ամեն մի սալակի հաշվին—աշխատավարձի քողարկված պակասեցում եր: Դա հուզում եր Նույնիսկ ամենահավասարակշռված բանվորներին:

Ջրավորները վրդովվում էին, զգալով գալիք սովը, տուգանք- ներն ու անգործութունը: Մինչև այսօր ել նրանցից վոշ-վոք կուշտ չի յեղել, իսկ ի՞նչ կլինի հետո:

Պանդոկներում ել ավելի ուժեղ էին գոռում, թրջելով չորա- ցած կոկորդները գարեջրով, ու այն չնչին աշխատավարձը, վոր ստացել էին առավոտյան—հոսում եր պանդոկապետների գրպանը: Նալենն ու Մագեն լուռ տուն էին գնում:

— Աչքերս լույս, բացականչեց Մագենի կինը, տեսնելով, վոր ամուսինը տուն է վերադառնում դատարկաձեռն:—Ուր ե սուրճն ու շաքարը: Կարող եյիր հորթի միս ել առնել, չեյինք քանդվի:

Մագեն լուռ եր, աշխատելով գսպել իրեն խեղդող հուզմունքը: Հանկարծ այդ լայն, աշխատանքից կոշտացած յերեսը ծամածովեց ու աչքերից դուրս ցայտեցին տաք արցունքները: Նա սեղանին նետեց ստացած հիսուն ֆրանկը ու, աթոռի վրա ընկնելով, յերեխայի պես հեկեկաց:

— Վերցրո՛ւ... Ահա մեր ամբողջ վաստակը:

Նրա կինը նալեց Նալենին ու, նկատելով, վոր նա կանգնել է լուռ ու հուզված, Նույնպես լաց չեկավ: Միթե տաս հոգի կարող են հիսուն ֆրանկով ապրել յերկու շաբաթ. Ձախարը գնաց: Բոն- մորը չկարողացավ շարժվել: Բոլորն, ուրե՛մն, կոտորվելու յեն: Այ- գիրան ընկավ մոր վզով, Նատելյան, Լենորան ու Անրին վռնում էին: Կարճ ժամանակում ամբողջ հանրակացարանը լցվեց լացի ձայ-

նով: Կանայք դուրս ելին թռչում փողոց, կարծես թե նրանց վիշտը չեր տեղավորվում տան մեջ

Անձրե եր, բայց նրանք այդ չեյին զգում ու մերթ ընդ մերթ վազելով իրար մոտ, ցույց էին տալիս ձեռքերում սեղմած դրամը:

— Տես, այսօր նա ի՞նչ է ստացել: Խղճուկ կոպեկներ:

— Նույնիսկ հացի գին չե:

— Ստիպված եմ վրալիս շապիկը ծախել:

Մագենի կինն ել դուրս յեկավ փողոց:

Լեվակի ընտանիքի շուրջը մի մեծ ամբոխ հավաքվեց: Լևակի կինը բոլորից բարձր եր բղավում: Նրա ամուսինը դեռ չեր վերա- դարձել, բայց կինը նախորոք գիտեր, վոր ինչքան ել ամուսինն ստացած լինի, միևնույն է, պանդոկում ե թողնելու:

Ֆիլոմենան սպասում եր հորը, վոր գոնե մի գումար վերցնի ու տնտեսի:

Պյերոնան եր, վոր պահում եր իրեն բավականին հանգիստ, նրա ամուսինն իր գործը կարողանում եր դրստել: Հայտնի չե, թե ի՞նչ կերպ նրա հաշվեգրքույկում միշտ ավելի սալակներ ելին նշա- նակված լինում, քան ընկերների մոտ:

Լաբրյուլեն ասում եր, վոր դա ստորութունն է ու պաշտպա- նում ճնշվածներին: Նիհար ու փայտի պես ուղիղ կանգնել եր նա ամբոխի մեջ ու սպառնալից բռունցք եր թափ տալիս Մոնսուրի ուղղությամբ:

— Յես իմ աչքերով տեսա, թե ի՞նչպես նրանց խոհարարու- հին անցավ կառքով,—գոռում եր նա գայլուլթով:—Այո, կառքով: Նա, յերևի, գնում եր շուկա ձուկ առնելու:

Ադմուկն ու կանչերը սաստկացան: Կառավարչի այդ խոհարա- րուհին, վոր իր սպիտակ գոգնոցը կապած, կառքով գնում եր շու- կա՝ ձուկ առնելու,—առաջ բերեց ընդհանուր գայլուլթ:

Բանվորները մեռնում էին սովից, իսկ նրանք ձուկ էին ու- տում: Սպասեցեք, կգա ժամանակ, յերբ դուք ել կմնաք սոված: Այն բոլորը, ինչ Նալենն աշխատում եր վերջերս ներշնչել ամբոխին,— այժմ դուրս եր պոռթկում գայլալից կանչերով:

Շուտ կհասնեն արդյոք խոստացած վոսկե դարին, կլինի՞ այն որը, յերբ իրենք ևս աշխարհից կստանան իրենց յերջանկության բաժինը: Յերբ վերջ կլինի նրանց այս աղքատությանը: Շատ մեծ է անիրավութունը, ակամալից ստիպված ես աղաղակել քո իրավունք- ների մասին, յերբ բերանիցդ խլում են մի կտոր հացը:

Առանձին անհամբերութուն էին արտահայտում կանայք: Նրանք պատրաստ էին հենց հիմա գրոհ տալ, վորպեսզի կովով խլեն ի- րենց յերջանկութունը:

Անձրեք շարունակում եր թափվել: Գիշերը վրա հասավ: Փո-
ղոցում աղմուկը դեռ շարունակվում էր, խառնվելով սարսափահար
չեղած չերեխաների լացին:

Յերեկոյան Ավանտաժի պանդոկում յեկան այն համոզման, վոր
գործադուլն անխուսափելի չէ: Ետքներ մի բառով բնորոշեց իրերի
խսկական դրությունը:

— Ընկերությունը գործադուլ է ուզում — և գործադուլը կլինի:

3. ԱԾԽԱՀԱՏՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ածխահատներն իրենց ժողովը նշանակեցին անտառի այն բաց
տեղում, վորտեղ վերջերս ծառերը կտրտում էին: Շրջապատված
բարձր նոճիներով, վորոնց սպիտակ, ուղիղ բները նման էին մար-
մարե սյուների, բացուտը թեթևակի թեքվում եր դեպի անտառի
պուունը: Գետինը, դեռ շատ տեղերում, ընկած էին կտրված վիթ-
խարի ծառեր: մի մասն էլ սղոցված՝ դարսած եր իրար վրա:

Գիշերը սառնամանիքն ուժեղացավ, սառած գետինը վտռերի
տակ ճռճում եր:

Բարձր ծառերի ճյուղերը պարզորոշ նկարվում էին գունառ
յերկնքի վրա: Լուսնի ուժեղ լույսից աստղերը չէին չերևում: Ժո-
ղովին յեկան մոտ յերեք հազար ածխահատներ, չհաշված կանանց
ու յերեխաներին, և բացուտը լեփ-լեցուն եր մարդկանցով, վորոնց
թիֆն ավելանում եր հետզհետե: Խուլ աղմուկը, վոր նման եր փո-
թորկի ազդարարին, տարածվում եր նիրհող անտառում:

Ետքներ թռավ մի ընկած ծառի բնի վրա ու բղավեց:

— Ընկերներ:

Խոսակցությունն իսկույն լռեց:

— Ընկերներ, — կրկնեց բարձր ձայնով Ետքներ:

— Մեզ թույլ չեն տալիս խոսել, մեր դեմ, վորպես ավազակ-
ների, փոստիկաններ են ուղարկում: Ահա, թե ինչու չենք հավաք-
վել այստեղ: Այստեղ, անտառում, մենք մեր տանն ենք, ազատ, վոչ
վոք չի գա այստեղ՝ մեզ լռեցնելու, այնպես, ինչպես չի կարելի
լռեցնել գազաններին ու թռչուններին:

— Այո՛, այո՛, խոսքերը վորոտի նման տարածվեցին ամբոխի
մեջ: — Անտառը մերն է... Խոսիր...

Ետքներ մի բռնեց կանգնեց անշարժ: Լուսինը լուսավորել եր
ծառերի գագաթները միայն, ամբոխն ու ճառախոսը մնացել էին
խավարում:

Բայց ահա նա դանդաղ բարձրացրեց ձեռքը ու սկսեց. խոսեց
պարզ ու զսպված, իբրև բանվորների լիազորը, վոր հաշիվ եր տա-

լիս նրանց իր գործունեության մասին: Նա համառոտ կերպով բա-
ցատրեց գործադուլի ծագման պատճառները՝ վարչության անբարե-
խիղճ վերաբերմունքն ածխահատների հանդեպ, խոսեց սովի մասին,
խորտակված հույսերի մասին և այն մասին, վոր ածխահատներն
արդեն հասել են համբերության ամենավերջին կետին:

— Այդ հիման վրա, — վերջացրեց նա իր ճառը, — չես, ընկեր-
ներ, առաջարկում եմ այսոր գալ վերջին չեզոքակացության՝ ցան-
կանում եք շարունակել գործադուլը: Յեթե այո, ի՞նչ կերպ եք մտա-
դիր հաղթահարել ընկերության համառությունը:

Ամբոխը լռել եր: Լսվում եր միայն բոլոր այդ կրճերի արագ
շնչառությունը, հուսահատության թախիծով ճնշված: Բայց Ետքներ
նորից սկսեց խոսել, և ամբոխի առաջ հանդես չեկավ մի ուրիշ
մարդ: Այդ անգամ արդեն նա վողեկորված ճառախոս եր, առաքյալ,
վոր քարոզում եր լույսի և ճշմարտության մասին: Միթե՞ նրանց
մեջ կճարվեն դավաճաններ, փոքրոգիներ, վորոնք կուրանան իրենց
խոսքը: Միթե՞ նրանց տանջանքներն իզուր կանցնեն, միթե՞ բոլորը
կհնազանդվեն ու նորից, վիզները ծռած, կիջնեն ածխահորերը ճա-
շակելու նախկին զրկանքն ու կարիքը:

Ավելի լավ չե՞ մեռնել հենց հիմա, բայց մեռնել փառավոր կը-
վում, աշխատելով տապալել կապիտալի բռնակալությունը:

Ժամանակը չե՞ արդյոք վերջ տալ այդ բոլորին:

Ու Ետքներն ապացուցում եր, վոր արդյունաբերության մեջ ա-
ռաջացող բոլոր ճգնաժամերն անդրադառնում են բանվորների վրա,
վոր տեղի ունեցող մրցումը հարկադրում է տերերին պակասեցնել
բանվորների աշխատավարձը:

Ետքներ բարձրացրեց ձեռքը դեպի վեր:

Վողեկորված ամբոխն արեկոծվեց, տեղաց բուռն ծափահարու-
թյունների տարափ ու խուլ արձագանքեց անտառում:

— Արդարությունն, մենք խնդրում ենք միայն արդարություն, —
աղաղակում էին ածխահատները:

— Աշխատավարձը, — շարունակեց Ետքներ, — դա ստրկացնելու
մի նոր ձև է: Հանքերը պետք է մեզ պատկանեն, այնպես, ինչպես
ծովը ձկնորսին ու հողը ռանչպարին: Լսում եք, հանքերը պետք է
մեզ պատկանեն, վորովհետև մի ամբողջ դար այդ հանքերում գոհել
ենք մեր կյանքն ու արջունը:

— Այո՛, այո՛, նա իրավացի չէ:

— Հասել է ժամը, չերբ մենք ևս պետք է ոգտվենք աշխարհի
բարիքներին, — շարունակեց նա:

— Ծիշտ է, ճիշտ, — գոռում եր ամբոխը, — հասել է ժամը:

Նայենը հիանում էր հաջողութեամբ և այն բանով, Վոր տիրում էր այդ յերեք հազարանոց ամբոխին, Վորոնց սրտերը բաբախում էին նրա ամեն մի խոսքից։

Ռասսենները հերոսապետներ էին և ուսերը՝ նա առաջնորդում անհատ էր, բայց ընկերութեան կողմից հեռացվել էր գործից՝ գործադուլի մասնակցելու համար։ Ներկայումս նա պանդուկ էր պահում։

— Թույլ կտամ ինձ խոսել, թե վոչ։

— Խոսիր, տեսնենք կլսեն նրանք քեզ, — ասաց Նայենը և իշով ծառի բնից։

Ռասսենները բարձրացավ նրա տեղը ու նշան արավ լուել։ Ամբոխը շարունակում էր աղմկել։

Նրան ճանաչեցին ու չէին ցանկանում, Վոր նա խոսի։ Չնայած ընդհանուր աղմուկին ու ճիչերին, նա սկսեց խոսել, ձգնելով ապագուցել, Վոր մարդիկ չեն կարող աշխարհը դարձնել մի ինչ Վոր մոգական մահակի ուժով, Վոր սոցիալական կատարելագործությունների համար ժամանակ է պետք, — բայց այդ բոլորն իզուր՝ նրան չէին լսում։ Ամբոխը ծիծաղում էր, շվացնում։

Վերջապես, նրա վրա տեղացին սառած մամուռի կտորներ ու մի կանացի ձայն ծղրտաց։

— Կորչի դավաճանը։

— Կորչի դավաճանը, — աղաղակեց ամբոխը, ու նրա գլխի մոտով վզապահին մի քանի քարեր։

Նա գունատվեց, նրա աչքերը լցվեցին արցունքով։

Նա ցած իշով խոցված սրտով։

— Դու ծիծաղում ես, — դիմեց նա Նայենին։ Շատ լավ, կգամիր, յերեք քեզ հետ ել նույնը կլինի, հիշիր խոսքս։

Ու թափահարեց ձեռքը, կարծես ուզում էր ասել, Վոր ապագայի պատասխանատվությունը վերցնում է իր վրայից։

Ռասսենների հեռանալուց անմիջապես հետո ամբոխը նորից խառնվեց իրար։ Ընկած ծառին մոտեցավ Բոնմորը ու ըստ չերեկության, ուզում էր ինչ-Վոր բան ասել։

Ամբոխը լուեց, լսում էր ծերուկին, Վորը լուսնի շողի տակ նրան էր գերեզմանից դուրս չեկածի։ Նա խոսում էր իր ջանքերով, թյան մասին, պատմում էր չերկու հորեղբայրների մահը, Վորոնք մնացել են հանքահորի փլվածքի տակ։ Նա խոսում էր թոքերի բորբոքումից մեռած կնոջ մասին... Ինչ վերաբերում է գործադուլին — դա յերեք չի հաջողվի, քանի Վոր նա իր կյանքում այդպիսի բան չատ է տեսել... Ահա այստեղ, հենց նույն անտառում, մեկ անգամ նրանք հավաքվեցին հինգ հարյուր հոգով։ Նրանք պահանջում էին

կրճատել աշխատանքի ժամերը։ Հավաքվում էին և ուրիշ տեղերում թե ամառը և թե ձմեռը, իսկ մեկ անգամ, աշնանը, մի այնպիսի անձրև տեղաց, Վոր բոլորը փախան տները, առանց խորհրդակցելու։ Յեվ միշտ ել վրա էին համում վոստիկաններն ու ցրում նրանց...

— Մենք բարձրացնում էլինք ձեռքներս... անա այսպես... ու յերգվում, Վոր չենք աշխատի... չես ել ելի յերգվում, քանի անգամ եմ յերգվել...

Ամբոխը լսում էր զարմանքով, նրան տիրել էր մի տեսակ անախորժ զգացմունք։

Նկատելով այդ, Նայենը թռավ ընկած ծառին ու կանգնեց Բոնմորի կողքին։

— Ընկերներ, — գոռաց նա, ցույց տալով Բոնմորին, — ձեր առաջ կանգնած է մեր հին բանվորներից մեկը։ Դուք լսեցիք, թե ինչպես նա պատմեց իր տանջանքների մասին։ Այդ տանջանքներն սպասում են և մեր զավակներին, յեթե մենք ինքներս վերջ չտանք այդ բոլորին։

Նա Բոնմորին առաջ էր քաշում, իբրև վշտի և աղքատության դրոշակ։ Նա խոսեց Մագելի ընտանիքի մասին, Վորը մի ամբողջ դար իր ուժերը նվիրել է ածխահանքերին, այնուամենայնիվ մնացել բաղցած ու աղքատ։ Դրան զուգընթաց նա բերեց հանքատեղերին, բոլոր այդ ճարպակալած հաստափորերին, բոլոր փայտաբերին, Վորոնք ապրում են պորտաբուծների նման, առանց մի աշխատանք կատարելու։ Սարսափելի չէ այս բոլորը։ Մարդկալին ամբողջ սերունդներ կոտորվում են սովից, գետնի տակ մտած՝ քանդում են, Վոր մի բուռ ձրիակերներ ճարպակալեն առանց աշխատելու։

Շուտով կհասունանա ուժեղ քաղաքացիների մի նոր բանակ ու գետնի խորքից դուրս կգա լույս աշխարհ։ Այն ժամանակ աշխատանքը հաշիվ կպահանջի կապիտալից, այդ աներեկութ աստծուց, Վորը թագնվել է իր տաճարի խորքում ու սնվում է իր զոհերի արյունով։

Նայենը լուեց, բայց նրա առաջ պարզված ձեռքը դեռ ցույց էր տալիս հեռվում, տարածության մեջ չեղած թշնամուն։

— Իսկ հիմա, ընկերներ, պատասխանեցեք, ուզում եք արդյոք շարունակել գործադուլը, թե վոչ, — հարցրեց վերջում Նայենը։

— Այո, այո, ուզում ենք, — աղմկում էր ամբոխը։

— Ի՞նչ եք մտադիր անելու։ Մեր գործը կտապալվի, յեթե բանվորներին վորեք մեկն իջնի ածխահորը։

— Մահ դավաճաններին, — աղաղակեցին ածխահատները։

— Դավաճաններին պետք է հիշեցնել իրենց յերդումը, զնանք բոլորս միասին հանքերը և ապացուցենք ընկերությանը, վոր մենք դործում ենք համերաշխ ու պատրաստ ենք ավելի շուտ մեռնել, բան հնազանդվել:

— Դեպի հանքերը, դեպի հանքերը, — գոռաց ամբոխը:

4. ԱԾԽԱՀԱՏՆԵՐԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒՄԸ

Հորում բոլոր մուտքերը փակված էին:

Վաթսուն զինված զինվորներ պահպանում էին միակ բաց մուտքած դուռը, վոր տանում էր նեղ սանդուխտներով դեպի ընդունա- նարանը, բակը և հսկիչների սենյակը: Կապիտանն իր զինվորներին կանգնեցրեց յերկու շարք՝ պատի յերկարությամբ, վորպեսզի վոչ վոք չկարողանա հարձակվել նրանց վրա թիկունքից:

Բանվորների խումբն իրեն հեռու յեր պահում: Նրանք յերե- սունից ավել չէին և զայրացած խորհրդակցում էին իրար հետ: Մագեչի կինը վազելով մոտեցավ, քնած յերեսան գրկած: Գզգված, գլխի թաշկինակը հապճեպ կապած, նա տենդագին ասաց.

— Վոչ վոքի մի թողնի ներս գնալ ու դուրս գալ: Նրանց բո- լորին պետք է բռնել:

Ամուսինը համաձայնեց նրա հետ:

Ամբոխը հետգհետե շատանում էր: Լեակը, կանգնած իր կնոջ և Բուտլուչի մոտ, կոկորդովը մեկ գոռում էր:

— Մահ բելգիացոց: Թող կորչեն ոտարագզիները: Մահ նը- րանց, մահ:

Ամբոխը շարժվեց առաջ, ետյենը հաղիվ էր զսպում մարդկանց: Նա մոտեցավ կապիտանին, մի 28 տարեկան բարձրահասակ, յերի- տասարդ մարդու և սկսեց ապացուցել, վոր ածխահատների հուզ- մունքն իրավացի չէ: Ինչո՞ւ գործը հասցնել արշունհեղության: Խո- սելու ժամանակ նա հետևում էր կապիտանի դեմքի արտահայտու- թյանը:

Կապիտանը ջղալին ցնցեց ուսը և կտրուկ ասաց.

— Հեռացե՛ք: Միք խանդարի ինձ կատարելու իմ պարտակա- նությունները:

Ետյենը յերեք անգամ մոտեցավ նրան ու միշտ էլ ստացավ նույն պատասխանը:

— Հեռ գառե՛ք, — բարձր ասաց կապիտանը կրկին անգամ իրեն մոտեցող ետյենին, — չես վոչինչ չեմ ուզում լսել... Ինձ կարգադրե- ված է պաշտպանել հանքերը և չես պարտավոր եմ հպատակվել: Ե՛լ, առաջ միք գոռի, — գոռաց նա ամբոխին, — ալապես ստիպված կլի- նեմ կրակել:

Ի պատասխան նրա խոսքերի, լավեցին բացականչություններ.

— Մահ բելգիացոց: Մենք ուզում ենք ինքներս լինել մեր տերը: Ետյենը հուսահատ քաշվեց մի կողմ: Մնում էր միայն կովել ու մեռնել: Նա այլևս չէր զսպում ընկերներին ու ամբոխը խուժեց դեպի զինվորներով պահպանվող հանքահորերի դռները:

Ածխահատների թիվը հասել էր մոտ չորս հարյուրի: Մագեն ու Լեակը կանգնած էին առաջին շարքում:

— Հեռացե՛ք, — շարացած գոռում էին նրանք զինվորներին, — մենք ձեր դեմ վոչինչ չունենք, միայն թե հեռացե՛ք:

— Մեր գործերը ձեզ չեն վերաբերում, — ավելացրեց Մագեչի կինը, — թողե՛ք մեզ:

— Կո՛ւ տանք ձեզ, լի՛նչ ե, վոր կարողանանք անցնել, — ճշում էր Լեակը, — կորեք աչտեղից:

Բեբերն ու Լիդիան նույնպես սողացին առաջ, վերջինս իր բա- րակ ձախով ճղղում էր, ցուլց տալով զինվորների կարմիր շալ- վարները:

— Կարմիր յերշիկներ, կարմիր յերշիկներ:

Կատերինը կանգնել էր հեռու և սարսափահար նայում էր ու լսում:

Ետյենը դիմեց զինվորներին, իբրև ընկերների, հիշեցնելով, վոր նրանք ևս վերցվում են ժողովրդից, հետևապես պարտավոր են պաշտպանել այդ ժողովուրդը՝ նրա նեղիչներից:

Ամբոխն ալեկոծվեց: Հրելով մարդկանց աջ ու ձախ, նրանց մի- ջով առաջ յեկավ մի կին: Դա — Լաբրյուլին էր:

Նիհար, ինչպես կմախք, բաց թևերով ու վզով, գզգզված մա- դերով, վորոնք ծածկել էին յերեսը — նա սարսափելի չէր:

— Յես ել ձեզ հետ եմ, գրո՞ղը տանի, — ասաց նա, հեալով ա- րագ վազելից:

— Ա՛, սրիկաներ, — շարունակեց նա, հարձակվելով զինվորնե- րի վրա: Թուքը վազում էր նրա անատամ բերանից, — դուք սովորել եք միայն լիզել ձեր մեծերի վոտքերը ու կրակել խեղճերի վրա:

Կանաչք միացան նրան, ու հայհոյանքների տարափ տեղաց զին- վորների գլխին:

— Սպալին ածխահորը գցեցե՛ք:

— Քչեցե՛ք զինվորներին

Զինվորները, հանգիստ ու անվրդով, լսում էին հայհոյանք- ներն ու անեծքները:

Ամբոխն էլ ավելի գրոհում էր առաջ և զինվորներին սեղմում պատին:

Կապիտանը, սուրը մերկացնելով, հրամայեց.

— Հրացանները պատրաստ:

Ձինվորները կատարեցին հրամանը ու ամբոխին առան չերկուշարք պսպղացող սվինների մեջ:

— Անպիտաններ, — գոռաց Լաբրյուլեն, հետ նահանջելով:

Բայց մի բուլե տատանումից հետո ամբոխը կրկին առաջ խուժեց, արհամարհելով մահը:

— Դե սպանեցեք, սպանեցեք մեզ, — ձշուժ ելին Մազեն ու Լեակը, — մենք պահանջում ենք մեր իրավունքները:

Լեակը չերկուձեռքով բռնեց սվինը և քաշում էր դեպի իրեն, ջանալով խլել այն զինվորի ձեռքից:

Մազեն քանդեց բաձկոնը, շապիկը չեռ տարավ, ու մերկացնելով իր լայն, մազոտ կուրծքը, գնաց դեպի սուր սվինները:

— Դե շուտ արեք, կողերս խրեցեք, — գոռում էր նա:

Ձինվորներն ակամայից հետ քաշվեցին այդ հանդուգն քաջության առաջ:

— Ա՛ւ, վախկոտներ, չեք համարձակվի, — շարունակեց Մազենը, — իմ հետևում կանգնած են տաս հազար... Սպանեցեք ինձ, սպանեցեք բոլոր տաս հազարին:

Ձինվորների դրուժյունը դժվարանում էր: Նրանց հրամայած էր զենքի գիմել միմիայն ծալրահեղ դեպքում: Հետ նահանջել հնարավոր չէր, վորովհետև ամբոխը նրանց սեղմել էր պատին:

Ընդհարումը, կարծես, անխուսափելի չէր, բայց հանկարծ զինվորների ուսերի հետևից յերևաց վերակացու Ռիշոմի բարի, ալեհեր գլուխը:

— Դրո՞ղը տանի, սա, վերջապես, հիմարություն է, — բղավեց նա, վրդովմունքից դողալով:

— Ընկերներ, լսեցեք ինձ... Յես հին ծառայող եմ և միշտ ել կրծքովս պաշտպանել եմ ձեզ: Յերդվում եմ, վոր կգնամ վարչության մոտ ու կպատմեմ ամբողջ իրողությունը, առանց թաղցնելու: Միայն հանգստացեք: Լավ իմացեք, վոր դուք վոչինչ չեք շահի այս բարի մարդկանց հայտնելով և փորներդ սվիններով ծակելով:

Ռիշոմի բոլոր փորձերը հանգստացնել ամբոխին — ապարդյուն անցան: Նրան այլևս չելին լսում, հրում ելին հետ ու բղավում, վոր նա իշխանության կողմն է պահում:

— Շատ լավ, — հուսահատ պատասխանեց ծերունին, — թե կորչելու չենք — միասին կորչենք: Յես ձեզ մենակ չեմ թողնի, վոր այդքան հիմար եք:

Նա աղերսում էր Ետյենին՝ ոգնել նրան խելքի բերելու ածխահատներին, բայց վերջինս միայն թափահարեց ձեռքը:

— Արդեն ուշ է: Չափազանց դժվար է խելքի բերել հինգ հարյուր գազազած մարդկանց:

Ռեկիլյուրից վազում էր բանվորների նոր խումբ:

Մուկին իսկույն մոտեցավ իր ընկեր Ջախարին, իսկ Մուկետան մտավ ամբոխի մեջ ու միացավ կանանց:

Կապիտանն անել դրուժյան մեջ էր: Նրա փոքրիկ գորախումբը հազիվ էր գտնում ամբոխին:

Նա հրամայեց զինվորներին հրացանները լցնել:

Այդ տեսնելով, ամբոխը քրքշաց:

— Հլա տեսեք: Մեր հիմարները գնում են նշան խփելու, — բղավում ելին Լաբրյուլեն, Լեակն ու մյուսները:

Մազեն, լացող չեբխալին կրծքին սեղմելով, այնպես էր գոռում զինվորների վրա, վոր դասակապեալ հարցրեց, թե ինչո՞ւ չեն նա չեկել այդ փոքրիկի հետ:

— Քո ի՞նչ գործն է, — հարցրեց նա, — կրակիր սրա վրա, չեթե ուզում ես:

Հանկարծ ամբոխի մեջ իրարանցում ընկավ: Կապիտանը հրամայեց ձերբակալել միքանի հոգու:

Լեակին ու չերկու ածխահատներին բռնեցին ու տարան վերակացուների սենյակը:

Նեգրելն ու Դանսարը գոռում ելին կապիտանին, վոր նա իր զինվորներով բարձրանա վերև ու փակվի վերակացուների սենյակում նրանց հետ: Նա հրաժարվեց, պատճառաբանելով, վոր ածխահատները գրոհով կվերցնեն այդ փայտե անակն ու իրենց ել, չեղևի, զինաթափ կանեն:

Ամբոխը պահանջում էր ազատ արձակել ձերբակալվածներին: Մեկը գոռաց, թե նրանց այնտեղ կխեղդեն:

Բոլորը շարժվեցին դեպի աղյուսի պահեստները:

Յերեխաներից ամեն մեկը բերում էր մեկական աղյուս, կանայք լցնում ելին փեշները: Կարճ ժամանակում յուրաքանչյուրի վոտքերի տակ հավաքվեց աղյուսի կույտեր:

Առաջին որինակը տվեց Լաբրյուլեն. նա վերցնում էր աղյուսը, ծնկով կիսում չերկու մասի ու շարտում զինվորների վրա:

Հենց վոր ողի մեջ թռան աղյուսի առաջին կտորները, վերակացու Ռիշոմը նետվեց զինվորների ու ածխահատների մեջ: Նա արցունքոտ աչքերով աղերսում էր մեկին, հանգստացնում մյուսին, բայց աղմուկը խլացնում էր նրա խոսքերը: Նկատելի չէր միայն, թե ինչպես դողում ելին նրա սպիտակ բեխերը:

Քարերի տարափը քանի գնաց — ուժեղացավ: Տղամարդիկ նույնպես սկսեցին:

Մագեն նկատեց, վոր իր ամուսինը մոռալ կանգնել է մի կողմ։

— Այդ ի՞նչ է, — ասաց նա, — վախենում ես։ Ուզում ես, վոր աչքիդ առաջ քո ընկերներին բանտ տանեն։ Ախ, չեթե չերեխաս գրկիս չլիներ, չես նրանց ցույց կտալի։

Նստելու լաց եր լինում, մոր պարանոցը բռնելով։ Ամուսինը, կարծես թե, չեր լսում նրան ու մոռալ նայում եր գլխին։ Կինն սկսեց վտառով աղյուսները մոտեցնել ամուսնուն։

— Վերցնելու չես դրանք, թե չե, գրողը տանի։ Գուցե ուզում ես, վոր բոլորի մոտ յերեսիդ թքեմ։

Մագեն կարմրեց և սկսեց աղյուսներ նետել զինվորների վրա։ Կինը հետևում եր նրան, խրախուսում, ասելով, վոր նա մասհացու հարվածներ հասցնի։ Նա ջղաձգումներով սեղմում եր յերեսին, խեղդում նրան կրծքի վրա։

Մագեն մեքենայորեն շարժվում եր առաջ և շուտով իրեն տեսավ հենց հրացանի առաջ։

Կապիտանը յերկու անգամ եր, ինչ բերանը բաց եր անում, վոր հրամայի՝ «կրակիր» ու կանգ եր առնում։

Վերջապես նա վճռեց ու հենց ուզում եր կրակելու հրաման արձակել, չերբ հանկարծ կրակոցներ լսվեցին — առաջ յերեք հատ, հետո — հինգ, իսկ վերջում — մի ամբողջ զարկ։

Ամբոխը քարացավ, չհավատալով, թե իսկապես իրենց վրա յեն կրակում։ Շուտով լսվեցին հառաչանքներ ու անեծքներ։

Սարսափահար ածխահատները հոտի պես ցրվ յեկան։ Առաջին յերեք կրակոցից ընկան Բեբերն ու Լիդիան։ Հետևյալ զարկերն սպանեցին Լաբրյուլեին ու Ռիշոմին։ Վերջինին գնդակը կպավ մեջքից հենց այն ժամանակ, չերբ նա համոզում եր ընկերներին հանգստանալ։ Նա ընկավ ծնկների վրա, իսկ հետո պառկեց կողքին։ Նրա աչքերը լի էին արցունքով։ Լաբրյուլեն ընկավ անշարժ, գնդակի հարվածն ստանալով կոկորդից։ Նա մի խուրձ խոտի նման պառկեց ու մահվան խռիռոցով վերջին անեծքը մրմնջաց։

Հետևյալ համազարկը գիպավ մի խումբ հետաքրքիրների։ Գրեդակը մտավ Մուկեյի բերանը, նա ջարդված գանգով ընկավ Ջախարի և Ֆիլոմենի վտառների տակ, շաղաղելով յերեսաներին արյունով և ուղեղով։

Նույն րոպեյին Մուկեյի փորից վիրավորվեց յերկու գնդակով։ Նա նկատել եր, թե ինչպես զինվորները նշան են բռնում ու թռավ գեպի Կատերինան, վոր նախազգուշացնի նրան։ Աղջիկը ճշաց ու ընկավ յերեսի վրա։ Նայենը վրա հասավ և ուզում եր բարձրացնել, բայց նա ձեռքով նշան արավ — ուշ է արդեն։ Հոգեվարժի

մեջ Մուկեյի տան ժպտադեմ նայում եր Նայենին ու Կատերինային, կարծես ուրախանում եր, վոր նրանք միասին են։

Կարծես ամեն ինչ վերջացավ։ Կրակոցների վորոտը լռեց, բայց հանկարծ լսվեց ելի մի ուշացած կրակոց։

Մագեն, գնդակը սրտում, շուռ յեկավ և ընկավ ցեխի մեջ։ Նրա կինը խելագարի աչքերով նայում եր նրան։

— Վեր կաց, ա՛յ մարդ, — ասաց նա, կռանալով ամուսնու վրա, — հասարակ բան է, չէ։

Նա յերեսին դրեց կռան տակ ու ամուսնու գլուխը դարձրեց իր կողմը։ Մեռածի աչքերը ապակու նման անշարժ էլին, բերանից արյունոտ փրփուրն եր վազում։ Նստած ամուսնու մոտ, կինն անմիտ նայում եր դիակին։

Կապիտանը ջղային շարժումով հանեց քարով պատռված գլխարկը ու նորից դրեց գլուխը։ Զինվորները հանգիստ կերպով լըցնում էին հրացանները։

Բռնմորն անշարժ կանգնել եր հանրակացարանի մուտքի առաջ, ձեռնափայտին հենված։ Նա ձեռքը դրեց ճակատին, վոր տեսնի, թե ի՞նչ է կատարվում շուրջը։

Վիրավորները անքում էլին։ Մեռածները քարացել էլին ու փնացել ափսոս, ինչպես վոր մահը գրկել եր նրանց։

ՅԵՐԿԱԹԵ ԿՐՈՒՆԿԸ

Ա.

ՊԱՐԱԳԼՈՒԽԸ

ՁԵԿ—ԼՈՆԴՈՆ

Երեսուստ եվերգարդի¹⁾ հետ առաջին անգամ ծանոթացա 1912 թվի փետրվարին իմ հոր տանը. հայրս այն ժամանակ Սան-Ֆրանցիսկոյի համալսարանում Ֆիզիկայի պրոֆեսոր էր։ Իմ առաջին տպավորություններն այնքան էլ լավ չէին։ Մեզ մոտ ճաշի հրահանգափ թափթփված տեսք ուներ։ Հագուստն այնքան էլ լավ չէր նստում նրա վրա։ Նրա թուխ կտորե կոստյումը պարկի նման կախվել էր, անթիվ ծալքեր կազմելով նրա ուժեղ թիկունքի վրա։ Նրա ծոծրակը կրկեսի ըմբիշի ծոծրակի նման լայն էր ու հաստ։

Ահա այն սոցիալական փրիստիան և նախկին դարբինը, վորին գտել էր իմ հայրը, — մտածեցի յես։ Նա իր հուժկու շղերով և յեզան վզով իսկապես վոր դարբնի յեր նման։

Բարեկիս նա ձեռքդ սեղմում էր պինդ և ուժեղ, և նրա սեւ աչքերի հայացքը թվում էր հանդուգն, նույնիսկ չափազանց հանդուգն, — ինչպես վոր կարծեցի այն պահին։

Յես բարեկիրթ օրիորդ էի և այն ժամանակ դեռ լիովին գրտնվում էի դասակարգային նախապաշարմունքների ազդեցության տակ։

Ճաշի առաջին մասը բավականին ձանձրալի անցավ։ Հյուրերի մեծ մասը տերտերներ էին, վորոնցից մի քանիսը մոդային քարոզիչներ, և նույնիսկ մի յեպիսկոպոս կար. — մի հավաքույթ, վոր այնքան էլ հաճելի չէր Երեսուստին։ Սա լուռ էր և ցրված։ Սակայն ճաշի վերջում իմ հոր կատակներից աշխուժացավ։

Յեվ ահա նրա ու հոգևոր հայրերի միջև բռնկվեց մի սաստիկ վեճ։ Երեսուստը պնդում էր, վոր ժամանակակից քրիստոնեական յե-

կեղեցին վաղուց արդեն հլու գործիք և դարձել տիրող դասակարգի ձեռքին։

Բոլոր տերտերները հուզվեցին և մեկը մյուսի խոսքը կտրելով՝ աշխատում էին հակաձառել։ Բայց Երեսուստին հաղթել՝ այնքան էլ հեշտ չէր։ Նա խոսում էր խիստ համոզեցուցիչ և յերկաթե տրամաբանությամբ։

Թվում էր, վոր բոլորովին անկարելի յե շեղել կամ շփոթեցնել նրան։ Իր հակառակորդներից նա պահանջում էր փաստերի վրա հիմնված ապացույցներ, և վերջիվերջո նրանց պատին սեղմեց։ Նրանք մնացին չափազանց անբավական, և յերևում էր, վոր Երեսուստին համարում էին տգեա ու կոպիտ, չնայած վոր նա վոչ մի վիրավորական խոսք չասաց։ Յերբ հյուրերը ցրվեցին, հայրս բազկաթուռի մեջ ընկավ ու անկեղծ ծիծաղեց. նա չափազանց սիրում էր այդ տեսակի բանավոր մրցություններ։

— Գրագ Կլամ, — բացականչեց նա, — վոր այդ բոլոր պարոններն իրենց կյանքում յերբեք չեն պատահել այս տեսակ հակասությունների։ Նրանք սովոր են բարեկիրթ հոգևոր ուրբ գրույցների։ Դու նկատեցիր, վոր մեր եվերգարդն սկսեց համեստ, ինչպես դուր, իսկ հետո փոխվեց հանկարծ մոնշոդ առուծի։ Նա գերազանցորեն խելք տւնի։ Նա խոշոր գիտնական կդառնար, յեթե վորոշեր իր ուժերն աչդ ուղղությամբ զարգացնել։

Եվերգարդն ինձ չափազանց հետաքրքրեց։ Ինձ վրա շատ ազդեց նրա անձնաւորութունը։ Նրա ձայնի վորոտնդոստ թափն իմ հոգում առաջացնում էր ինչ-վոր անհասկանալի արձագանգ։ Կարճ առած, ինքս էլ չնկատեցի, թե ինչպես մտերմացա նրան։ Հայրս մասնագիտությամբ բնագետ էր և հշանակալից հոշակ ձեռք բերեց այդ ասպարիզում։ Բայց յերբ մեռավ մայրս, վորին հայրս քնքշորեն սիրում էր, գիտությունն արդեն անկարող յեղավ նրա կյանքում առաջացած դատարկութունը լցնել։

Դրա համար նա սկզբում սկսեց փրիստիայությամբ զբաղվել, հետո անցավ քաղաքատնտեսության և հասարակության կյանքն ուսումնասիրող մյուս գիտություններին։

Արգարության զգացմունքը նրա մեջ շատ էր զարգացել, և կարճ ժամանակից հետո նա իր ամբողջ եյությամբ բռնվեց բուռն ցանկությամբ պաշարելու սոցիալական անարգարության դեմ։

Նա վաղուց էր սովորել իր լաբորատորիայում փորձեր կատարել և ահա թե ինչո՞ւ շտապեց մեր սեղանատունը յուրահատուկ փորձերի լաբորատորիայի վերածել։ Այլևս եղ հավաքվում էին բազմատեսակ մարդիկ, գիտնական պրոֆեսորներ, քաղաքագետներ, բանկիրներ, վաճառականներ, սոցիալիստներ և անարխիստներ։

¹⁾ Պատմություն անողն եվերգարդի ապագա կինն է։

Հայրս դրդում եր նրանց վիճելու, վերապահելով դիտողի դերը։
Երեսուտի հետ ծանոթացավ պատահաբար։ Գիշերը նկատեց
նշան փողոցի մեջտեղը, չերբ նա բանվորական ամբոխի առջև, սա-
պոնի ա կղի վրա կանգնած՝ ճառ եր արտասանում։ Սա պատահա-
կան ճառ չեր, վորովհետև Երեսուտն ամերիկական սոցիալիստական
կուսակցության կենտրոնական կոմիտեի հայտնի անդամն էր և սո-
ցիալիզմի տեսության ու պատմության բոլորի կողմից ճանաչված
մասնագետը։ Հայրս կանգ առավ լսելու, իսկուհն հրապուրվեց ու
անմիջապես Երեսուտին ճաշի հրավիրեց։ Նրա անցյալի մասին նա
քիչ բան գիտեր։ Երեսուտը բանվորի զավակ էր. տաս տարեկան
հասակից գործարան մտնելով՝ աշակերտական տարիները վերջաց-
նելուց հետո, դարբին դարձավ։

Ինքնակրթությամբ լրացնելով իր դարգացման պոկասը, առանց
կողմնակի ուզանության ուսումնասիրեց գերմաներեն և ֆրանսերեն,
լեզուները, և այժմ ապրուստի միջոցները հալթալթում եր մի փոք-
րիկ սոցիալիստական հրատարակության համար գիտական և փիլի-
սոփայական գրքեր թարգմանելով և չերբեմն հասարակական հար-
ցերի մասին իր սեփական հոգվածները տալով։

Հետևյալ որերի ընթացքում ուշադիր կարդում էլի հորիցս
ստացած Երեսուտի գովածքները, վորոնց լեզուն, ինչպես և նրա բա-
նավոր ճառերը, առանձնապես պարզ և համոզեցուցիչ էր։ Սակայն
իմ այն ժամանակվա կարծիքով նա չափազանց մեծ վոգեկորությամբ
էր խոսում դասակարգային կռվի և կապիտալի ու աշխատանքի
միջև լեզած շահերի անջնջելի հակասութուններին մասին։

Մի անգամ ճաշից հետո Երեսուտը նորից չեկավ մեզ մոտ։ Վե-
րանդան շատ նեղ թվաց, չերբ ներս մտավ իր կարող կառուց-
վածքով։

— Կարդացի ձեր «Բանվոր դասակարգը», — ասացի չես։

Նրա աչքերն ուրախ փայլեցին։

— Ընթերցանության ժամանակ դուք, իհարկե, ինկատի ու-
նեցաք. թե ինչ շրջանի ընթերցողների համար և այդ գիրքը։

— Հասկանալի չե, — ասացի չես, — և դրա համար ել չեո ձեզ
հետ բոլորովին չեմ կարող համաձայնվել։ Դուք բորբոքում եք դա-
սակարգային առեկռթյունը։ Իմ կարծիքով դա վնասակար է։

— Հանցավոր չեմ, — հակաճառեց նա, — իմ գրքում ամենևին
չկա դասակարգային առեկռթյան բորբոքում։

— Ո, — բացականչեցի չես, և գիրքը վերցնելով՝ բարձր կար-
գացի հարյուր չերեսուն չեկորոգ չերեսի վրա. «Հասարակական
դարգացման ներկա շրջանում դասակարգային կռիվը մղվում է աշ-

խատավոր՝ ստացող դասակարգի և այն վճարող դասակարգի միջև»։

— Այստեղ դասակարգային առեկռթյան ակնարկ անգամ չկա,
ժպտաց նա։

Մի մոռանաք, — ասացի չես, — վոր ձեր նկարագրածի մեջ
չերեում է դրամի միայն մի կողմը։ Բոլոր կապիտալիստները չար
և վայրագ չեն։ Շատ բան արվում է նրանց կամքի և ցանկության
հակառակ։

— Վայրենի հնդիկներն այնքան վայրագ չեն, վորքան կապի-
տալիստների դասակարգը, — կտրուկ պատասխանեց նա։

Այդ ըողեյլն պատրաստ էլի ատել նրան։

— Դուք մեզ չեք ճանաչում, — վիճեցի չես, — մենք բոլորովին
վայրագ չենք։

— Դուք այդ մասին չեք կարող դատել, — ընդհատեց նա ինձ։

— Իմ գործը չե... — սկսեցի չես, բայց Երեսուտը չթողեց, վոր
շարունակեմ։

— Վորքան ինձ հայտնի չե՝ դուք կամ ձեր հայրը, միեկուն չե
և, փողով մասնակից եք Սերբի գործարանային ձեռնարկներին։

— Դա ինչ կապ ունի մեր վեճի հետ, — բացականչեցի չես։

— Վոչ մի — հեզանքով պատասխանեց նա, — չեթե չհաշվել
այն, վոր ձեր չեկամուտներն արյունով են շողախմած։ Կերակուրը,
վոր ուտում եք՝ արյունով է պատրաստված։ Փոքրիկ չերեխաների
ու հասակավորների արյունը կաթում է ձեր առաստաղից։ Բավա-
կան է, վոր փակեմ աչքերս և չես շուրջս կլսեմ արյան միապաղաղ
կաթելը։

Յես խիստ վիրավորանք զգացի. վոչ-վոք ինձ հետ այդպես կո-
պիտ չեր վարվել։ Իմ հայրը սաստիկ ամոթահար էր չեղել և փոր-
ձում էր խոսակցութունը փոխել։ Բայց Երեսուտը հայացքն ինձ մը-
խած՝ վոչ մի խոսք չառաց։ Նրա դեմքը դաժան անհողողություն
էր արտահայտում։

Չգիտեմ թե նա ել ինչ հանդիմանութուն էր ուզ ւմ անել ինձ,
չերբ մեկը պատշգամբ բարձրացավ։ Սա հագնված էր աղքատ, իսկ
մեջքին բարձրանում էր գործած աթոռների ու շիրմաների մի մեծ
կապոց։ Նա անհամարձակ նայում էր շուրջը, ասես թե տատանվում
էջ առաջարկելու մեզ իր ապրանքը։

— Դա Զեկսոնն է, — ասաց Երեսուտը։

— Այդպիսի առողջ մարդը կարող ե աշխատել և վոչ թե թափա-
ռական շարժի դառնալ, — նկատեցի չես։

— Նայեք նրա աջ թևին, — ասաց Երեսուտը։

Յես ուշադիր նայեցի և տեսա, վոր թևը դատարկ էր։

— Այդ թեի արշուները նույնպես կաթում ե ձեր առածաղից, — շարունակեց Երեստը համեստ ձայնով: Նա թեւ կորցրել ե Սերբի գործարանում, և դուք նրան փողոց նետեցիք, ինչպես սատկած անասունի: Դուք՝ այսինքն ձեր կառավարիչը և ադմինիստրացիան, վորոնց մյուս ակցիոներները հետ դուք ընտրել եք ձեր գործարանները կառավարելու: Նրա թեւ կտրեց ատամնավոր անիվը, յերբ նա ցանկանում եր հանել վինտը, վոր ընկել եր ատամների մեջ և սպառնում եր փչացնել մեքենան: Յեւ հազիվ նա դիպավ այդ վինտին, վոր ատամները բռնեցին և ամբողջ թեւ փշրեցին: Այդ պատահեց գիշերը: Ջեկսոնը յերկար ժամեր աշխատել եր անընդհատ, նրա ջղերը թուլացել և կորցրել ելին իրենց առաձգականութիւնը: Իսկ նա ունի կին և յերեք յերեխա:

— Ի՞նչ արեց նրա համար ակցիոներական ընկերութիւնը, — հարցրի յես:

— Գիտե՞ք, թե ինչ խորհուրդ կտամ ձեզ, — Ջեկսոնի գործն ինքներդ հետախուզեք:

— Յես այդ վճռել եմ արդեն — պատասխանեցի սառն:

— Հրաշալի յե, — ասաց նա, — բայց յես սարսափում եմ ձեր տեղ, յերբ մտածում եմ, թե դուք ինչ պիտի գգաք այդ դեպքի հետախուզման ընթացքում:

Այդպիսով յես ընդունեցի Երեստի մարտակոչը: Նա գնաց, թողնելով ինձ բոլորովին վերավորված՝ թե իմ և թե դասակարգիս համար: Այդ մարդն ինձ թվաց իսկական հրեշ: Յես ատում ելի նրան և սփոփվում ելի այն մտքով, վոր նա իրեն հենց այնպես ե պահում, ինչ հատուկ ե հասարակ ժողովրդից դուրս յեկած անհատին:

Բ.

ՅԵՐԿԱԹԵ ԿՐՈՒՆԿԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԱԳԼՈՒԽԸ

Թեազուրկ բանվորի գործը յես այսպես թե այնպես հետախուզեցի: Յեւ հանգեցի ինձ սարսափեցնող յեզրակացութիւն: Ամեն ինչ ճիշտ այնպես եր, ինչպես պատմեց Երեստը, և նրան վոչ մի կերպ չեր կարելի մեղադրել գուցների խտացման մեջ:

Յես գտա Ջեկսոնին և նրանից ստացա բոլոր հիմնավոր տեղեկութիւնները: Նա իսկապես ցանկացել եր մեքենան ջարդվելուց փրկել: Բայց ամբողջ նախորդ գիշերվա աշխատանքից հոգնած՝ նա յեղավ անդգուշ և կորցրեց թեւ: Դրանից հետո նրան անմիջապես արձակեցին: Իզուր նա դիմեց դատարանի պաշտպանութիւնը: Նրա փաստաբանը շատ անճարակ եր, և խեղճն ստիպված եր նույնիսկ

ֆեստները վճարել: Ամենից վատն այն եր, վոր կառավարիչը և յերկու գլխավոր վարպետները դատարանում Ջեկսոնին հակառակ ցուցմունքներ տվին:

Հետազոտութիւնը վերջացնելով՝ ուղևորվեցի հորս լաբորատորիան և Երեստին այնտեղ գտա:

Նա ինձ բարեկեց սովորականի պես: Թվում եր, վոր վերջերս մեր մեջ յեղած խիստ սուր խոսակցութիւնը բոլորովին մոռացվել եր:

— Յես ծանոթացա Ջեկսոնի գործի հետ: Ինչպես յերևում ե՝ նրան վերավորել են անիրավացի կերպով և յես... համարյա թե պատրաստ եմ համաձայնվել, վոր նրա արշուների մի քիչ կաթում ե մեր առաստաղից, — ասացի յես:

— Այո, — ասաց նա, — յեթե Ջեկսոնի և բոլոր մշուսների հետ այդպես դաժան չվարվելին, յեկամուտներն ավելի քիչ կլինեին:

Երեստը հաճախ եր յերևում մեր տանը: Սկզբում յես նրանից խուլս ելի տալիս, բայց հասկանալով, վոր նրա խոսքերը ճշմարիտ և արդար ելին, վերջնականապես մտերմացա նրան:

Նա իմ առաջ պատուում եր ունեւոր հասարակութիւնի դիմակը և ցույց եր տալիս նրա իսկական գծերը՝ զգվելի, դատապարտելի:

Մի յերեկո յես անցկացրի «Գիտութիւն բարեկամներ»-ի ակումբում: Այստեղ հավաքվում եր կապիտալիստ դասակարգի իսկական սերուցքը: Կողմնակի մարդկանց այստեղ ներս չեյին թողնում: Ակումբի վարչութիւնը հոգում եր, վոր վիճաբանութիւնների մանրամասնութիւնները թերթերում չտպվեն: Այդ պատճառով այստեղ կարելի յեր լիովին անկեղծ խոսել, և դրանից ոգտվում ելին շատերը:

— Ձեր հայրը «Գիտութիւն բարեկամներ» ակումբի անդամ ե, և դուք, հասկանալի յե, մուտք ունեք այնտեղ — ասաց Երեստը: Յերեքշաբթի յերեկոյան յեկեք այնտեղ: Խոստանում եմ, վոր դուք կորցրած ժամանակի համար չեք զղշալ: Յես կաշխատեմ կյանքի տերերի ախտավոր կողմը շոշափել: Յես կստիպեմ նրանց գալերի նման ատամները կրճտել: Յես կսպառնամ նրանց քսակին, և դա կսթափեցնե նրանց այնպես, վոր նրանք իրենց իսկական բնութիւնը յերևան հանեն: Դուք կտեսնեք գեղեցիկ կոստյումներով քարանձավների մարդկանց, վորոնք կուվում են վոսկորի համար: Նրանք ինձ կանչել են՝ կտոր-կտոր անելու համար: Այդ միտքը պատկանում ե ակումբի հիմնադիր տիկին Բերնգվուդին: Նա խոստացել ե նրանց համար խեղկատակութիւն յերեկո սարքել, ինչպես սովորաբար անե-

իս ե չեղել, հրավիրելով բանավեճի պարզամիտ և անվտանգ բեֆոր-
միսաներին. տիկին Բրենդվուդը համոզված է, վոր չես բռնված եմ
հորթի վոգևորութամբ և բուժ եմ կովի նման: Նա փորձում եր
ճանաչել ինձ, և իմ անմեղությունը հիացմունք պատճառեց նրան:

Ակումբի նիստը բացվեց նշանակած ժամին: Ընդարձակ ընդու-
նարանում շարված էին բազկաթոռների շարքեր, ուր նստած էին
մոտավորապես գիտություն չերկու հարյուր անդամ, վորոնք լեկել
էին լսելու Երեստին: Նրանց մեծ մասը մեր չերկրի ամբողջ քա-
ղաքական և արդյունաբերական կյանքի ղեկավարներն էին:

Մենք արդեն բռնել էինք մեր տեղերը, չերք տիկին Բրենդ-
վուդը ներս բերեց Երեստին: Նա հագել եր գեղեցիկ սև կոստյում,
վոր նրան շատ եր սագում: Սակայն նրա բոլոր շարժումների մեջ
նկատվում եր վոչ գիտավորչալ ամաչկոտություն: Հռչակավոր փառ-
տաբան Վան-Թիլբերտը, ժողովի նախագահը, վերկացավ և միջանի
խոսքերով, վոր կրում էին թեթև ծաղրանքի բնույթ, Երեստին
ներկայացրեց ունկնդիրներին: Այդ Վան-Թիլբերտը, վոր հայտնի չեր
իր հետադուրյամբ և լավ ծանոթ եր որենքներին, սոցիալական բե-
ֆորմատորներին և բանվոր դասակարգի ղեկավարներին՝ հարուստ
մարդկանց ներկայացնելու ձևը շատ լավ գիտեր:

Ունկնդիրները միշտ ժպտում էին: Դրանից բարկացած՝ չես
նայեցի Երեստին, և նրա տեսքն ինձ ավելի զայրացրեց: Նա նստել
եր համեստ, բուժ և անտարբեր: Մի վայրկյան ինձ թվաց նույնիսկ,
վոր նա ամաչում է աչքան ուժ և հարստություն ունեցող աչք
հասարակությունից:

Վան-Թիլբերտը վերջացրեց: Երեստը վերկացավ և սկսեց խո-
սել: Նա խոսում եր կամաց, զսպված: Նա պատմեց իր բանվորա-
կան ընտանիքում ծնվելու, այն խղճուկ պայմանների մասին, ուր
հոգին և մարմինը չեն կարող զարգանալ ինչպես հարկն է:

Նա խոսեց իր տենչերի ու իգեալների մասին, վորոնք ընդհար-
ման մեջ էին այն դրախտի հետ, ուր ապրում են վերին դասակար-
գերը: Նա ասաց.

— Մի ինչ-վոր տեղում, վերևում, — չես տղպես ելի մտածում,
— վորպես թե կան մաքուր, ազնիվ մտքեր, տիրում ե խիզախ մտա-
վոր կյանք: Տեղեկություններ, վորոնք քաղեցի բուլվարային այն
ոռմաններից, վորոնց մեջ, չեթե չհաշվենք ստոր և թափառաշրջիկ
մարդկանց, բոլոր գործող անձինք գեղեցիկ են մտածում, խոսում
են հրաշալի լեզվով և վսեմ գործեր են կատարում:

Հետո նա պատմեց իր գործարանային կյանքից և սոցիալիստ-
ների հետ ունեցած տեսակցությունների մասին:

Այս վերջինների մեջ նա գտավ հանդուգն և փայլուն գլուխներ:
Հեղափոխականների մեջ չես ձեռք բերի ուժեղ հավատ գե-
պի մարդկությունը, կրակոտ իգեալիզմ, ինքնագոհության սեր:

Այս բառերն արտասանելիս, կարծես նա բոլորովին կերպա-
րանափոխվեց: Նրա գեմքից շողեր էին տարածվում: Սակայն հասա-
րակությունը մնաց անտարբեր:

Հարուստ Փաբլիկանտ Ուիկսոնը, վոր ինձանից հեռու չեր նըս-
տած, կիսաձայն արտասանեց.

— Ուտոպիստ:

Այժմ Երեստն անցավ իր կյանքի այն շրջանին, չերք, բարձ-
րանալով հասարակական սանդուղքով, նա կապեր հաստատեց վե-
րին դասակարգերի հետ:

Հուսախաբությունը կատարվեց անմիջապես, և բոլոր հրապույը-
ները ցնդեցին ինչպես մուխ: Նա խոսում եր կտրուկ և աջալիսի
բառերով, վոր ունկնդիրներին չեր կարող դուր գալ: Նա ասաց,
վոր զարմացել է այդ ճահճի ստորությունից: Նա տեսել է հրեշա-
լին ինքնասիրություն, ամենից ավելի զարմացրել է նրան անկախ
մտավոր կյանքի կատարչալ բացակայությունը: Հեղափոխականների
հետ ունեցած հարաբերություններից ազնվացած՝ նա զզվանք է
զգացել գեպի տիրող դասակարգերի հոգեկան թմրությունը:

Տիրող դասակարգերի ներկայացուցիչները շատ էին ցնդաբա-
նում զանազան փոքրիկ իգեալների մասին և սիրում էին մանր
բարոյական ճշմարտությունների մասին աղմկել, սակայն, իրոք,
նրանք բոլորը համոզված նյութապաշտներ էին բառիս ամենավատ
մաքով և իսկական բարոյականություն մասին վոչ մի գաղափար
չունեին:

— Յես գիտեմ մարդկանց, — ասաց նա, — վորոնք հիշում էին
Քրիստոսին ամեն մի հարմար գեպքում, բայց միևնույն ժամանակ
հրացաններ էին տալիս վարձու պահապանների ձեռքը, գոլ ծաղուլա-
վորների վրա կրակելու համար:

— Յես գիտեմ մարդկանց, վորոնք կրկեսի ըմբշամարտը հա-
մարում էին չափազանց կոպիտ, անարգ տեսարան և վորոնք սա-
կայն նույն ժամանակ մասնակցում էին կենսական մթերքները
խորդախելու գործում վորի պատճառով չուրաքանչյուր տարի
մեռնում են ավելի շատ չերեխաներ, քան թե ինքը Հերովդեսը կկարո-
ղանար մորթել:

— Յես պատահել եմ չքեղ հազնված պարսնների, վորոնք հո-
վանավորելով գիտությունն ու գեղարվեստը և զոհելով մեծ գու-
մարներ՝ քրիստոնեությունը քարոզելու վայրենիների մեջ, քամում

եյին սոված բանվորները բռնաբերուի քաղաքական դործիչներին կաշա-
ռում եյին, խաբէբայութեամբ եյին զբաղվում դատարաններում և
ավագակարար սեփականացնում եյին ուրիշի աշխատանքը:

Երեսնայն յերկար խոսեց այդ մասին, վառ գուններով նա նկարա-
գրեց այն զգվանքը, վոր տիրեց իրեն, յերբ մոտկից ծանոթացավ
հարուստ դասակարգին: Բայց նրա թունավոր ճառը ներկա չեղող-
ները վրա քիչ տպավորութիւն թողեց:

— Իսկ այժմ թույլ տվեք խոսք ասել ապագա հեղափոխու-
թեան մասին, — արտասանեց Երեսնայն:

Նա սկսեց փաստեր տալ պրոլետարիատի հեղափոխական բա-
նակի և զանազան չերկրներում սոցիալիստների ստացած ձախերի
մասին:

Այստեղ առաջին անգամ ժողովականներն անհանգստութիւն
զգացին: Դեմքները լրջացան, և վոմանք անհամբերութիւնից կրծում
եյին շրթունքները: Իսկ հոետորը խոսեց նաև յենթադրվող կռիւի
միջոցների մասին, և ունկնդիրներին ծանոթացրեց սոցիալիստների
միջազգային կազմակերպութեան հետ, վորը Միացյալ Նահանգներում
ունի մեկ ու կես միլիոն, իսկ զանազան չերկրներում քսան և յերեք
միլիոն հինգ հարյուր հազար մարդ:

— Նման բանակը, — գոռաց նա, — պետք է վոր ստիպի տիրող-
ներին մտածել: Մեր նշանաբանն է — կորչի աղքատութիւնը: Մենք
ցանկանում ենք վերցնել մեր ձեռքը պետական իշխանութիւնը և
մարդկութեան բախտը: Կիսինք ձեզնից ձեր ուժը, ձեր պալատները,
ձեր շքեղ փարթամութիւնը: Գնացեք և հաց վաստակեցեք ձեր
ձակատի քրտինքով: Փորձով իմացեք, թե ինչպես են ապրում
տանջված բանվորները քաղաքում և գյուղացիք՝ արտերում:

Այս ասելով, նա ցնցեց իր կորովի ձեռքերը: Նա սպառնալից
էր, ինչպես իր շղթաները խորտակող աշխատանքի մարմնացումն:
Կանանց դեմքն ընդունեց վախի արտահայտութիւն: Բայց այս ժո-
ղովին ներկա տղամարդիկ գործնական մարդիկ եյին և վոչ ծուլ
վաստողներ:

Նրանք նույնպես պալքարել գիտեյին հարկավոր դեպքում:

Բարձրացավ թեթև աղմուկ, բայց շուտով խաղաղվեց: Սա կին-
դանական կատաղի բողոքումի առաջին նախալուրն էր, վորով պի-
տի վերջանար այդ յերեկոն: Յեւ այդ հնչյունների ժամանակ, վոր
նման եյին իրար կրծատող շների հաջոցին, յես ակամա ցնցվեցի:
Վոչ, այս մարդիկ չեն զիջի աշխարհի վրա ունեցած իրենց իշխա-
նութիւնը:

Իսկ Երեսնայն շարունակում էր խոսել և նրանց խոյում էր

բառերով՝ մուրճի հարվածների նման: Նկարագրելով բանվոր դա-
սակարգի խղճուկ դրութիւնը Միացյալ Նահանգներում և հասարա-
կութեան տնտեսական կյանքը կարգավորելու ներկա անընդունակ
դեկավարներին, նա բացականչեց:

— Ձեր դեկավարութիւնը բանի պետք չէ: Դուք խեղդում եք
քաղաքակրթութիւնը: Դուք կույր եք և ազան: Դուք քնացրել եք
ձեր խիղճը գթութեան և հեղութեան խաբէբա իդեալներով: Դուք
պայթելու չափ կուշտ եք իշխանութիւնում ու հարստութիւնում և
հղիացած: Բայց ձեզ կվիճակվի ձրիակեր մեղունների բախտը, վո-
րոնց բանվոր մեղուններն սպանում են մեղրաբլիճների մոտ: Դուք
ապացուցեցիք ձեր անպետքութիւնը և դուք պիտի տապալվեք:
Մեկ և կես միլիոն բանվորներ հայտարարում են ձեզ, վոր նրանք
մտադիր են իրենց շուրջը համախմբել բանվոր դասակարգը և իշ-
խանութիւնը խլել ձեր ձեռքից: Հենց սա յե սոցիալական հե-
ղափոխութիւնը, պարոններ: Կանգնեցրեք այն, յեթե կարող եք:

Նա լռեց և միքանի վայրկյան տիրեց կատարյալ լռութիւն:

Ապա լսվեց խուլ աղմուկ. հանկարծ քսանի չափ մարդիկ տե-
ղերից վեր թռան, խոսք պահանջելով: Նրանց դեմքը կարմրել էր
հուզմունքից, նրանք կատաղութիւնից թափ եյին տալիս բռնացք-
ները, նախազան Վան-Ժիլբերտից սկսած, կատաղել եյին: Նա խո-
սեց առաջինը, մոռանալով իր կոշումը և վոչ-վոքի թուլ չափեց
արտահայտվելու: Բայց դա հռչակավոր փաստաբանի ճառ չէր, ճար-
տասանութեան բոլոր որենքներով: Վոչ, դա չարացած գոռգոռոց և
հայհոյանքների մի տարափ էր Երեսնայնի հասցեյին: Սմբոխը վաչ-
րենի հոհոցով արտահայտեց իր հրճվանքը: Բայց Երեսնայն բոլորո-
վին չկորցրեց իր սառնարյունութիւնը և իր հրաշալի կարճ պա-
տախտանով կատարելապես շախմատեց սանձարձակ փաստաբանին:

Յես հրաժարվում եմ տալ վիճաբանութիւնների հետագա ճիշտ
պատկերը: Տեսարանն իսկապես հրաշալի չէր: Բայց վորքան տա-
քանում եյին հակառակորդները, այնքան ավելի հանգիստ էր Երեսնայն:

Նա ուներ խոշոր ու բազմատեսակ տեղեկութիւններ, սուր և
ձկուն, ինչպես թուր:

Նա իր դեմ դուրս յեկողներին հողին հավասարեցրեց: Նրանց
կատաղութիւնն ավելի ևս ուժեղացավ:

Վիճաբանութիւնների վերջում խոսեց կապիտալիստ Ուիկսոնը:
Միայն նա պահպանեց կատարյալ հանգստութիւն, և Երեսնայն, հա-
կառակ դեպի մշուսներն ունեցած իր վերաբերմունքին, դեպի նա
հարգանքով վերաբերվեց:

— Կարիք չկա պատասխանելու, — ասաց Ուիկսոնը՝ ինչ-վոր

մտածկոտութիւնը, — յետ անց վեճին հետեւեցի զարմանքով և նույնիսկ զգովանքով Ինձ զգովանք ներշնչեցիք դուք, իմ դասակարգիչ պարոնաւք ներկայացուցիչներ: Դուք ձեզ պահեցիք ինչպես հիմար աշակերտներ: Դուք շատ բառեր վատնեցիք: Բայց այդ բոլորը բզզոց են հիշեցնում: Դուք բզզում եիք այնպես, ինչպես մոծակները՝ արջի շուրջը: Պարոններ, ահա արջը — նա ցւց տվեց Երեստին, — և ձեր բզզոցը նրան շատ քիչ վախեցրեց:

— Հավատացե՛ք ինձ, դրությունը լուրջ է:

— Այս արջն իր թաթը մեզ ցուց տվեց: Նա ասաց, վոր Միացյալ Նահանգներում կան մեկ ու կես միլիոն հեղափոխականներ: Դա փաստ է: Նա ասաց, վոր նրանք մտադիր են մեզին խլել իշխանութիւնը, մեր պալատները և մեր հարստութիւնները: Սա չեւ փաստ է: Այո, մեծ հեղաշրջումն անխուսափելի չէ, բայց սխալի հուսանք, վոր հեղաշրջումը կլինի վաղ թե ա՛յն ուղղութիւնը, վորպիսին ցանկալի չէ դասախոսին:

— Արջը ցանկանում է մեզ հաղթել: Ապա չեթե մենք հաղթենք արջին:

Խուլ մռնչումը նորից անցավ դահլիճի միջով: Բոլորը հավատութիւնով դուրսնեցին շարժեցին: Դեմքերն ընդունեցին կատաղի արտահայտութիւն:

— Բայց վա՛ղ թե բզզոցով պիտի հաղթենք արջին, — սառը և առանց կրքոտութեան շարունակեց Ուիլիսոնը. — մենք խոսքերը չենք վատնի: Մեր պատասխանն արճիճը կլինի: Իշխանութիւնը մեր ձեռքն է, վորը բաց չենք թողնի:

Այստեղ նա դարձավ Երեստին և շարունակեց ցայտուն.

— Ահա մեր պատասխանը: Մենք չենք ցանկանում իզուր խոսք վատնել: Յերբ դուք կպարզեք ձեր ուժեղ ձեռքերը դեպի պալատները, ինչպես վոր պարծենալով հավատացնում եք դուք, այն ժամանակ մենք ձեզ ցուց կտանք, թե վորն է իսկական ուժը: Գնդակների սուլոցը և թնդանոթների վորոտը կլինեն մեր պատասխանը: Մենք ձեզ հեղափոխականներից կտրորենք մեր կրակներով և ձեր դիակների վրայով կքայլենք: Աշխարհը մեզ է պատկանում, մենք ենք նրա տերը և մտադիր ենք այդպիսին ել մնալ: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի բանակին՝ բոլոր ժամանակներում նա թափալվում եր կեղտի մեջ: Յես պատմութիւնը բավականին լավ գիտեմ: Յեվ նա կեղտի մեջ կմնա այնքան ժամանակ, վորքան չես, մերոնք բոլորը և նրանք, վորոնք մեզին հետո պիտի գան, իշխանութիւնն իրենց ձեռքում կպահեն: Ահա իսկական խոսքը, բոլոր խոսքերի պսակը: — Վա՛ղ աստված, Մամոնա, — այլ ուժ:

Ձեր բառարանից դուրս ձգեցե՛ք այդ բառը, վորովհետեւ դա ձեր բերանում մի դատարկ սպառնալիք է:

— Յես վերջապես ստացա իմ պատասխանը, — հանգիստ հակաճառեց Երեստը. — այդ ձեր միակ պատասխանն է, վոր դուք կարող եիք տալ: Ուժ: Հենց ուժի նշանակութեան մասին է, վոր մենք ասում ենք բանվոր դասակարգին: Դառն փորձից մենք գիտենք, վոր ճշմարտութեան, իրավունքի և մարդասիրութեան կոչերը ձեր գութը չերբեք չեն շարժել: Ձեր սրտերն ել այնպես ամուր են, ինչպես և ձեր զենքերը, վորոնցից դուք կրակում եք աղքատների վրա: Ահա ինչու դուք քարոզում եք ուժը: Մեր պատասխանն էլ արճիճը կլինի, — բացականչեց Երեստը: Յերբ վոր մենք ընտրութիւնների ժամանակ հաղթանակենք, և դուք հրաժարվեք իշխանութիւնը մեզ հանձնելու, այն ժամանակ մեր պատասխանը դուք կլսեք գնդակների սուլոցների և թնդանոթների վորոտի միջից: Ձեզ համար փրկութիւն չկա: Ճիշտ է, դուք պատմութիւնը լավ գիտեք: Ճիշտ է նույնպես, վոր աշխատանքը պատմական ժամանակներից թափալվում է կեղտի մեջ: Յես համաձայն եմ ձեզ հետ: Բայց չեթե դուք հասկանաք պատմութեան իմաստը, ապա կտեսնեք, վոր ձեր վախճանը միանգամայն անխուսափելի չէ: Կարևորն այն չէ, թե դատեղի կունենա մի տարի, կամ տասնյակ տարիներ հետո. ձեր դասակարգը տապալվելու չէ ուժի ոգնութեամբ: Ձեզ նման մենք կրկնում ենք այդ կտրուկ բառը, վոր անդադար հնչում է մեր ականջին:

— Կեցցե՛ ուժը:

Յեվ «Գիտութեան բարեկամներ» ակումբի չերեկոն այս անգամ վերջացավ մեծ ազմուկով:

Գ.

ՄԵՆՔ ԴԵՌ ԿՊԱՅԳԱՐԵՆՔ

... Հաջորդեցին պաշարի որերը...

Չիկագոյում անցկացրի չերեք որ և այդ ժամանակ տեսա անդեն ամբոխի վոչնչացումը միայն և վիթխարի տների միջև չեղած հրացանաձգութիւնը: Ինչ վերաբերում է մեր ընկերների հերոսական կռվին, այդ տեղի չեր ունենում ուրիշ տեղ, իմ դիտողութեան սահմաններից դուրս: Յես միայն լսում եի ունեւերի և միների պաթիւնը և տեսնում դրանից առաջ չեկած հրգեհներ ծուխը: Սակայն ինձ հաջողվեց ականատես լինել ողբալին կռվին և մեր դասակարգի կրակների հարձակմանը՝ թշնամու Փրոնտի վրա: Այդ տեղի ու-

նեցավ ապստամբութեան յերկրորդ ուրը: Յերեք ապստամբված զորագնդերն արդեն վոչնչացված էլին, մարտկոցները զրավել էին կապիտալիստների վարձկանները: Քամին մեզ ցանկալի ուղղութեամբ եր փչում, և ահա ապստամբներով բռնված տներն մեկի վրա բարձրացավ առաջին ոգապարիկը: Մեր ընկերներից մեկը, զբանից շատ առաջ, հնարել եր ամենաուժեղ պալթոյ ունեւր, և վորովհետեւ հեղափոխականների տրամադրութեան տակ չգտնվեց և վոչ մի կանոնավոր անոթալան, ուստի ստիպված էլին ոգտագործել հնաձև ոգապարիկները, լցնելով նրանց մեջ տաքացրած ու: Դրանք, չնայած վոր շատ անկատարելագործված գործիքներ էլին, բայց կատարեցին իրենց դերը: Առաջին ոգապարիկը թռավ մարտկոցներից հեռու և աներևութացավ հորիզոնի յետեր:

Դրա վիճակի մասին հետագայում իմացանք: Նա արդեն պատրաստ եր իջնելու, յերբ պարզվեց, վոր գտնվում ե յերկաթուղու գծի մոտ, զինվորական աջն գնացքի վերևում, վորն արագութեամբ Զիկագո յեր սլանում: Ռմբաձիգ ընկերները նետել էին իրենց ունեցած բոլոր ունեւրերը լոկոմոտիվի վրա և քարուքանդ արել ճանապարհը, վորի հետևանքով յերկաթուղային հաղորդակցութեւնը դադարել եր շատ որեր:

Մյուս ոգապարիկի թռիչքն աչքան էլ հաջող չեր: Նա շատ ցածր եր թռչում, և զինվորները գնդակահարել էին նրան:

Ռմբաձիգներն էլ էլին վոչնչացել: Դրա փոխարեն յերրորդ ոգապարիկը մեծ հաջողութեւն ունեցավ: Զիշտ ե, նա յեր շատ բարձր չթռավ, բայց բարեբախտաբար վոչ-վորի չհաջողվեց գնդակահարել նրան: Յես այժմ կենդանի կերպով պատկերացնում եմ այդ տեսարանը. հսկայական գունդը բարձրանում եր ողի մեջ, և նրանից կախված եր մի փոքրիկ մարդ: Յես չկարողացա մարտկոցները տեսնել, բայց տան կտուրից կռիվը դիտող ընկերներն ասում էին, վոր գունդը հենց մարտկոցների վրայով եր սլանում:

Յես չնկատեցի, թե ինչպես ընկավ ունեւրը: Բայց իմ աչքերի առաջ գունդն արագ յերկինք սլացավ: Մի ակնթարթ անց ծուխի սուլները յերկինք բարձրացան, և ապա լավեց պալթոյունի վորոտը: Մարտկոցը քարուքանդ եր արված:

... Ամբոխը մոտ տաս քալ հեռավորութեան վրա յեր գտնվում, յերբ թնդանութները վորոտալ սկսեցին: Վոչ մի բան չեր կարող գիմադրել այդ կրակի մրրկին: Ամբոխի հետին շարքերը սեղմում էին, բայց առաջ շարժվել արդեն վոչ վոք չեր կարող:

Մի ակնթարթում մեռած զիակներից բլուրներ կազմվեցին: Մարդիկ ընկնում էին ամբողջ շարքերով: Յերբեմն վիրավորները,

վորոնց հաջողվում եր այդ սարսափելի ալիքների գագաթը յենել, ցած էին գլորվում և ընկնում ավտոմոբիլների անիվների տակ: Զինվորները տեղն ու տեղն սպանում էին նրանց:

Ահա մենապետ մի անգամ տեսա՝ ինչպես մի տղամարդու հաջողվեց վորի յենել և ատամներով զինվորի կոկորդին մեխվել:

Ապա նրանք յերկուսով, թե զինվորը և թե կովոդը, գետին գլորվեցին:

... Կրակոցը վերջացավ: Ամբոխի զրոհը յետ եր մղված: Ավտոմոբիլներն հրաման արվեց մաքրել ճանապարհը: Բայց նրանք չկարողացան առաջ շարժվել զիակների այդ հսկայական լեռների միջով: Զինվորներն սկսեցին մեռածներին մի կողմ քաշել. այդ ժամանակ նրանց համար բոլորովին անսպասելի բան պատահեց: Մեր ընկերներից հարյուր հոգու հաջողվել եր, կտուրից կտուր անցնելով, հասնել այն տեղը, վորի ներքև խիտ շարքերով կանգնել էին զինվորները:

Յեմ ահա հասավ վրիժառութեան ժամը:

Վերևից զինվորների գլխին ունեւրերի մի ամբողջ տարափ թափվեց: Ավտոմոբիլները հրամանատարական կազմի հետ միասին շարդ ու փշուր յեղան: Քիչ հեռու մի ուրիշ տնից նրանց վրա նորից ունեւր տեղադրն: Ամբողջ փողոցը զինվորների զիակներով ծածկվեց:

Մենք, յես և մեր ընկերներից մեկը—Սարտուեյնը, ձեռք-ձեռքի տված փախչում էինք արյան լճեր կազմած փողոցներով, սայթաքելով ու ընկնելով, մինչև վոր մեզ հաջողվեց մի անկյուն հասնել: Այստեղ կանգնեցինք, վոր շունչ քաշենք: Ամբոխը նորից դանդաղ շարժվում եր, մոտենում:

Այդ ժամանակ մենք փախանք հակառակ ուղղութեամբ: Այստեղ փողոցները դատարկ էին ու խաղաղ, բայց ամեն քալափոխում սոսկալի անակնկալներ կարող էին մեզ սպառնալ: Հրեշտին հրդեհի բոցերը բռնել էին յերկնակամարի ամբողջ հարավային մասը: Մենք գիտեցինք, վոր բանվորական թաղամասերն էին այրվում: Յես ուժասպառ փախ ընկա: Սարտուեյնը փշրեց հարևան խանութի ապակին և ինձ ոգնեց ներս մտնել լուսամուտից: Սանութը մտա թե չե, թուլացած ընկա... Դեռ մութ եր: Ապա յերբ մոտեցա փողոց նայող լուսամուտին, հրդեհների փալն աչքան փառ եր, վոր նրա լույսի տակ ազատ կարելի չեր կարգալ: Ինչ-վոր հարևան տեղից լսվում եր ձեռքով նետվող ունեւրերի ձայն: Ե թնդանութի վորոտ:

Ամբողջ յերկինքը պատած եր հսկայական ամպերով, վորոնց միջից յերբեմն յերևում էին կրակի լեզուներ:

Անողնական ծերեր ու պառավներ, հիվանդներ, թուլեր, հաշմանդամներ, բանվոր դասակարգի ամենաղեկալի անդամներին հրդեհը փողոց եր քշել էր վոչինչ չեմ հիշում:

Միայն յերբ աչքս բաց արի, տեսա, վոր մեկն ինձ ամուր գրկում եր: Իսկույն հասկացա, վոր Երնեստն եր դա, և յերկուդով նայեցի նրա խանձոտված մազերին: Բախտավոր պատահականությամբ նա գտել եր ինձ այստեղ:

Յեւ յերբ կատարյալ ուշքի չեկա, Երնեստն ինձ ցած տարավ ու տեղավորեց շինության մեջտեղը գտնվող մի սենյակում: Այստեղ չես քնեցի որվա ամբողջ յերկրորդ մասը և ամբողջ հետևյալ գիշերը: Յերրորդ որը նույնպես այստեղ անցկացրինք, իսկ չորրորդ որը Երնեստին հաջողվեց Ձիկագոյից հեռանալ:

Փողոցներում կռիվները շարունակվում էին: Միքանի թաղամասեր դեռ գտնվում էին մեր ընկերների իշխանության տակ, բայց նրանք շրջապատված էին զինվորական մեծ խմբերով և թաղամասերը վոչնչացման յենթարկվեցին մեկը մյուսի յետևից: Ապստամբությունը ճնշելու գործն անդադար շարունակվում եր: Վոչ-վոք զթություն չեր կարող հուսալ:

Բայց մի անգամ առիթ ունեցանք անցնելու բոլորովին քարուքանդ յեղած տեղով, վոր գտնվում եր հեղափոխականների գրաված յերկու ուժեղ դիրքերի միջև: Կրակոցների ճախրուն աջից ու ձախից լսելի չեր մեզ, յերբ մեր ավտոմոբիլը սլանում եր ծխացող ավերակների միջով:

Տեղ-տեղ փրկվածքներն այնպես կտրել էին ճանապարհը, վոր ավտոմոբիլը մեծ դժվարությամբ եր ուղի հարթում իր համար:

Մենք քաղաքի արվարձանից արդեն հեռու էինք, յերբ ավտոմոբիլը դեմ առավ դիակների ալիքին: Սա մի իսկական ալիք եր ծովի կանգ առած ալիքի պես: Հեշտ եր դիտի ընկնել, թե ինչ եր՝ կատարվել այստեղ: Հենց վոր ամբոխը ծռվել և անկյունի այս կողմը, նրանք սկսել են հնձել թնդանոթներով:

Սակայն զինվորներն էլ քիչ զոհ չեն տվել:

Հավանական ե, վոր զինվորների մեջ հաջող կերպով ուռմբ եր նետված: Ձինվորներն ու հեղափոխականներն ընկած էին խառնի-խուռն, ալլանդակ ու անճանաչելի, փշրված ավտոմոբիլների և փրչացած թնդանոթների միջև:

Մի քիչ ել անց՝ մենք գտնվում էինք կանաչ դաշտերում ու տեսնում ծխով պատած քաղաքը: Ուշացած պալիստենների թնդությունը դեռ հասնում եր մեր ախանջին: Դեմքս Երնեստի կրծքի մեջ թագցրի և լուռ լաց յեղա խորտակված հեղափոխության համար:

Երնեստը քնքշորեն գրկեց ինձ.

— Մենք հաղթված ենք ժամանակավորապես, իմ թանգագին, բայց վոչ ընդմիշտ, — ասաց նա. — Մենք մի ավելորդ դաս ևս առանք: Վաղը հեղափոխությունը նորից կվերածնվի՝ ավելի ուժեղ, ավելի փորձված և ավելի կուռ — կարգապահ:

Նյու-Յորք վերադառնալուց հետո, շաբաթներ անցած, մենք լիովին հասկացանք, թե վորքան մեծ եր հեղափոխության կրած պարտությունը: Շատ տեղերում բռնկել էին բանվորների ապստամբություններ, վորոնք անողորմաբար ճնշվել էին:

Ամեն տեղ տակավին անհամար զնդակահարություններ էին տեղի ունենում: Լեռներն ու անապատները լի էին փախստականներով: Լրտեսները գտան մեր փախստականների տեղերից շատերը, վորոնք ապա քարուքանդ յեղան: Մեր ընկերներից վոմանք հոգեպես բոլորովին ընկճվեցին: Հուսահատության աստիճանին հասած՝ նրանք բռնեցին տերրորի ճանապարհը: Նրանք հեշտությամբ գոհում էին իրենց կյանքը և հաճախ անմիտ քաջությամբ խափանում մեր ապագա ծրագրերը:

Յեւ այս սարսափների միջով սառնասիրտ առաջ եր ընթանում Յերկաթե-Կրունկը իր վարձկանների՝ գաղտնի վոստիկանության հետ: Նա անխնա պատժում եր իր թշնամիներին և վոչ մի կորուստից չեր վախենում: Սակայն, դրա հետ մեկտեղ, տեղի չեր ունենում ուժերի համախմբումը՝ նոր հեղափոխության համար:

Պարտվելով, մենք մտածում էինք նոր հարձակման և նոր հաղթանակի մասին:

Յեւ այդ հաղթանակը հեռու չե...

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՋՈՒՆԻՒԼԻ» ՎԵՊԻՑ

1. ԴԵՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Յուրգիսը լիտվին էր։ Նրա հայրը, պապը և բոլոր նախահայրերը վաղուց ի վեր ապրում էին Բելովեժյան ծածկում։ Այնտեղ գյուղերը միմյանցից հեռու, ցաք ու ցրիվ տարածված էին անտառի խորքում։ Յուրգիսը սիրահարված էր Ունա անունով մի աղջկա վրա, վորի հետ ուզում էր ամուսնանալ, բայց միջոցները չէին ներում։ Աշխատանքը չնչին բան էր տալիս նրան։ Յուրգիսի հարսնացուի մեծ չեղբարը—Իոնասը առաջարկեց միասին Ամերիկա գաղթել՝ ավելի ապահով աշխատանք գտնելու համար։ Նա համոզված էր, վոր իրենք հեշտությամբ կտեղափոխվեն և աջտեղ ավելի լավ կապրեն, քան իրենց հայրենիքում։

Յուրգիսն էլ էր լսել, վոր Ամերիկայում լավ բանվորն որական չերեք ուղբուց ավելի կարող է աշխատել։ Յուրգիսը մտածում էր, վոր Ամերիկա տեղափոխվելով, կկարողանա իրեն ապահովել և ամուսնալ Ունայի հետ։ Ամերիկայի մասին նրան պատմել էին, վոր աջտեղ զինվորական ծառայություն չկա, թե աջտեղ չինովներին կաշառք չեն տալիս, և ամեն վոք ապրում է աջպես, ինչպես ինքն է ցանկանում, առանց ուրիշին գլուխ խոնարհելու, ստորանալու։

Հետևյալ ամառը նրանք ուղևորվեցին։ Իոնասի մի բարեկամը վաղուց տեղափոխվել էր Ամերիկա և ապրում էր Չիկագոյում, ուստի նրանք վճռեցին հենց այդ քաղաքը գնալ։ Նրանք անգլիերեն մի բառ միայն գիտեին՝ Չիկագո, և այս բառը նրանց հասցրեց վորոշված տեղը։ Բայց ոտար քաղաքում նրանք գլուխները կորցրին. ամբողջ ուր թափառում էին փողոցներում, իսկ զիշերելու համար ընկնում էին վոստիկանատուն։ Վերջապես նրանք մի թարգման գտան, վոր նրանց արամվալ նստեցրեց և մի նոր բառ սովորեցրեց— «անասունների բակեր»։

Վագոնում տեղավորվելով, նրանք սկսեցին պատահանից դուրս նայել։ Նրանց առաջ ձգվում էր մի չերկար, անծայր փողոց, վորի նմանը նրանք չերեք չէին տեսել և չէին ել կարող չերեակայել, վորովհետև նրա չերկարությունը հավասար էր հիսուն վերստի։ Փողոցի չերկու կողմը բարձրանում էին չերկհարկանի տգեղ շինություններ։ Այսպես էին նաև մյուս՝ իրար հատող փողոցները։ Վոչ բարձրություն էր չերեում և վոչ կանաչ։ Այստեղ ու աջտեղ դեպի չերկինք էին ձգվում հսկա գործարանների մուսլ շենքերը անհամար պատահաններով ու վիթխարի ծխնելույզներով և շուրջը տարածում մուր ու ծանր հոտ։

Մի ժամ էր մնացել Չիկագո հասնելուն, չերը նրանք նկատեցին մի տարրինակ փոփոխություն— շուրջն ավելի մթնեց, առարկաները մի տեսակ կեղտոտ դուշն ստացան, իսկ շրջապատող բրնությունը դժգուշն էր ու կարծես մեռած։ Յեվ ամեն ինչ մի տարրինակ հոտ էր արձակում։ Ավելի նուրբ հոտառություն ունեցողների համար այս հոտը միանգամայն անտանելի չեր, իսկ սրանց միմիայն տարրինակ թվաց։ Վագոնում նստած՝ նրանք զգում էին, վոր իրենք բոպե ագ բոպե մոտենում են այդ գարշահոտության աղբուրին։ Հոտն ավելի սուր ու խիտ դարձավ։ Ողբ տոգորված էր ինչ-վոր մի հում բանի, դառնություն ու ճարպի հոտով։ Անսովոր հոտից նրանց գլուխները պտտվեցին։ Մեր գաղթականները դեռ գլխի չէին ընկել, թե վորտեղից էր այս ծանր հոտը, չերը վագոնը կանգ առավ, և լավեց մի բարձր ձայն։

— Անասունների բակեր։

Նրանք դուրս չեկան ու սկսեցին շուրջը դիտել։ Աղյուսե անների մեջտեղում բացվում էր մի ընդարձակ տարածություն։ Տները վրա բարձրանում էին վեց հատ հսկա ծխնելույզներ, վորոնցից դեպի վեր էին ձգվում թանձր, սև ծխի սյուներ։ Թվում էր, թե ծուխը դուրս է գալիս ուղղակի գետնի տակից։ Ծխի անվերջ ամպերը դեպի չերկինք էին բարձրանում և սև քողով ծածկում ամբողջ չերկնակամարը։

Հանկարծ Իոնասն ուրախ աղաղակ արձակեց և վագեց դեպի մի խանութ, վորի ճակատին գրած էր. «Յա. Շեգվիլլա։ Գաստրոնոմիա»։ Շեգվիլլան Իոնասի հենց աջն ընկերն էր, վոր վաղուց ի վեր ապրում էր Ամերիկայում։

Այսպես վերջացավ այդ նորեկների ճանապարհորդությունը։ Յերկու ընտանիքների հանդիպումը շատ սրտառու էր։ Վաղուց էր, վոր Յակոբ Շեգվիլլան բախտ չեր ունեցել հայրենակիցներ տեսնելու, Նա անմիջապես սկսեց նրանց ծանոթացնել նոր չերկրի կյան-

քի պայմաններին: Ոգնեց բնակարան վարձելու և բացատրում եր, թե ինչպես անեն, վոր ապրուստն ավելի եժան նստի: Անհրաժեշտ մթերքների գները նորեկներին սարսափի մեջ դրեցին: Միքսնի որ միայն ապրելով այս բարձր աշխատավարձ ունեցող յերկրում, նրանք իսկույն համոզվեցին, վոր Ամերիկան այդ բարձր աշխատավարձի հետ միաժամանակ առասպելական թանգության յերկիր ե: Հասկացան, վոր աղքատներն այստեղ ավելի մեծ կարիքի մեջ են, քան ուրիշ վորեւէ յերկրում:

Յուրդիսի յերազները հարստանալու մասին անմիջապես ցնդեցին: Բայց նա հաստատ վճռեց չկորցնել իր կորովը: Կույսը դրել եր իր և միայն իր ուժերի վրա:

2. ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հետեւյալ որը ժամը յոթին Յուրդիսն աշխատանքի գնաց: Վերահսկիչի նշանի համաձայն նա հագավ բանվորական շորերը, վոր նախորդ որը գնել եր հնավաճառից, և մտավ այն բաժանմունքը, վորտեղ մորթում եյին կոնսերվների համար նշանակված յեղները: Նրա աշխատանքը շատ հասարակ եր. միքանի բուլեյում արդեն վարժվեց: Մի ավել վերցրած, նա պարտավոր եր գնալ յեղան փորտիքը դուրս քաշող մարդու հետքով, ավել փորտիքը և թափել դրա համար շինված հատուկ անցքերի մեջ: Հետո պետք ե արագությամբ իջեցներ խուփը, վոր հատակի վրա սայթաքողը հանկարծ մեջը չընկներ: Յուրդիսը յեկավ թե չե, անասուններին սկսեցին բերել. նա անմիջապես անցավ աշխատանքի:

Հուլիսյան տոթ որ եր: Ամբողջ հատակը ծածկված եր գոլորշիացող տաք արջուկով: Հոտը սարսափելի յեր, բայց Յուրդիսը վոչինչ չեր զգում: Նրա ուրախությանը չափ չկար. — արդեն աշխատանք ե գտել և փող ե վաստակում: Ամբողջ որվա ընթացքում նա հաշվում եր իր աշխատավարձը: Նրան սովորականից շատ վճարեցին. — իր հաշվով ամբողջ տասնյոթ ու կես ցենտ մի ժամում: Իսկ վորովհետեւ այդ որը կարծես թե բախտի բերմամբ շատ աշխատանք կար անելու, նա շարունակեց աշխատել մինչև յերեկոյան ժամի յոթը, ուրեմն նրան հասավ մեկուկես գոլարից ավել:

Տուն դառնալով, նա ուրախ լուրեր ստացավ: Իոնասին և մինչև անգամ ծերունի Անտոնին՝ իր հորը խոստացել եյին գործ տալ: Այս հաջողութունը նրան հույս ներշնչեց: Նախատեսելով, վոր իր ամուսնութունն ավելի շուտ կարող եր տեղի ունենալ, քան կարծում եյին, նա բնակարան վարձեց և սկսեց կահ-կարասիք գնել, մաս-մաս վճարելու պայմանով: Սրա վրա ծախսեց ընտանիքի խնայած գումարի մեծ մասը: Շուտով նա ամուսնացավ Ռնայի հետ:

Յուրդիսն առաջին անգամ փորձով իմացավ, թե ինչպես այստեղ մարդու ամբողջ ուժը շահագործում են աշխատանքի մեջ: Յեթե սպանդանոցի վերին կամարներից դիտենք աշխատանքը, այն ժամանակ վարմանալի կթվա շարժումների արագությունն ու ճշտությունը. մարդիկ կթվան մի անսովոր, բայց ճարպիկ մեքենաներ: Բայց յերբ ինքդ հագնում ես ներքեւում այդ աշխատանքը կատարում, այն ժամանակ միայն հասկանում ես այդ աշխատանքի իսկական ծանրությունը: Աշխատանքի արագությունը պահանջում ե բոլոր ընդունակությունների և ուժերի խիստ լարումն:

Սկսած այն բուլեյից, յերբ մուրճի հարվածից շնամբ վայր ե ընկնում առաջին յեղը, մինչև ճաշվա ընդմիջումը և ապա տասներկուսից մինչև յերեկո, հանգստություն չունեն վոչ ձեռքերը, վոչ վոտքերը և վոչ գլուխը: Շարժման այս արագությունն առաջանում ե շատ պարզ ձևով: Այսպիսի արագություն պահանջող աշխատանքի համար ավելի ուժեղ մարդիկ եյին վարձում, նրանց ավելի շատ եյին վճարում և հաճախ փոխում: Սա նշանակում ե «աշխատանքի քշել»: Իսկ յեթե մեկն ու մեկը համապատասխան ուժ չունենար, նրան անմիջապես դուրս եյին շարտում, վորովհետեւ ամեն որ առավոտները դռնն առաջ խռնված ամբոխի միջից շատերն եյին ցանկանում նրա տեղը բռնել:

Այս բանը Յուրդիսին չեր վախեցնում. նա շատ ուժեղ եր և առանց դժվարությունների հասնում եր ընկերներին: Նա կարող եր ել ավելի արագ աշխատել, յեթե պահանջվեր: Իհարկե, աշխատանքն առանձին հաճույք չեր պատճառում, բայց չե՞ վոր մեկն ու մեկը այս աշխատանքը պիտի կատարեր, իսկ սրա համար լավ եյին վճարում, այնպես վոր զանգառվելու հարկ չկար: Այսպես եր կարծում Յուրդիսը: Բայց յերբ նա փորձում եր այս վոգով խոսել ընկերների հետ, սրանք համարյա թշնամաբար եյին նայում նրան: Շուտով նա գլխի ընկավ, վոր այստեղ բոլորն ել ատում եյին իրենց աշխատանքը, ատում եյին նաեւ այդ աշխատանքի հետ այս կամ այն կերպ կապ ունեցող բաները՝ գործավարներին, գործարանային ամբողջ շրջանը, ամբողջ Չիկագոն: Մինչև անգամ կանայք և յերեխաները պնդում եյին, վոր գործարաններում տեղի չեն ունենում անյերեակալելի զգվելի բաներ:

Քիչ ժամանակից հետո Յուրդիսին առաջարկեցին բանվորական միության մեջ մտնել: Բայց նա չեր կարողանում հասկանալ, թե ինչի՞ յեր հարկավոր այդ բանը: Նրանք բացատրեցին, թե մարդիկ պետք ե համախմբվեն, վոր կարողանան իրենց իրավունքները պաշտպանել:

Յուրդիսի հավատն ամերիկական կյանքի արդարացի լինելու մասին մի քիչ խախտվեց. բայց այդ հավատը բոլորովին խորտակ-

վեց, չեմք հայրը վերջապես տեղ գտավ: Մի չերեկո Անտոն Բուդ-
կուսը տուն դառնալով, սաստիկ վրդովված պատմեց, վոր Դուրգ-
մենի գործարանում նրան մի մարդ մոտեցավ և առաջարկեց աշխա-
տել, չեթե ինքը կհամաձայնի իր աշխատավարձի մի չերրուդ մասը
նրան զիջել: Այս մարդը գործարանի վերահսկիչն էր և իսկապես
կարող էր իր խոստումը կատարել:

Յուրգիսը խորհուրդ տվեց հորը չընդունել այդ առաջարկը, բայց
հայրը չլսեց նրան և հենց նույն օրը գործարանի նկուղում գտնվող
բաժանմունքներից մեկում տեղ ստացավ: Այստեղ սարսափելի խո-
նավ էր, և ամբողջ շենքում չոր անկյուն չկար: Առաջին շաբաթվա
ամբողջ աշխատավարձը ծախսեցին հաստ պաղփղով ճտկավոր կոշիկ-
ներ ձեռք բերելու համար:

Ծեր Անտոնը շատ հանգարտ մարդ էր, բայց նա չէլ չերկու-
որվա աշխատանքից հետո սկսեց անիծել թե գործարանը, թե նրա
տիրոջը: Նրան հանձնարարեցին մաքրել սանդուղքները, վորոնցով
վերին հարկից անպետք մնացորդները ցած ելին թափվում: Տանե-
ցիք բոլորը սարսափեցին, չեմք նա նկարագրեց իր աշխատանքը:

Նա աշխատում էր այն շենքում, վորտեղ կոնսերվների համար
միս ելին պատրաստում: Միսը գտնվում էր քիմիական բաղադրու-
թյուններով լի տակառներում, վորտեղից չերկաթե չեղաններով հա-
նում ելին ու դարսում սալակների վրա և տանում չեփելու բա-
ժանմունքը: Ինչքան վոր կարելի չեր չեղաններով վորսալ՝ հանելուց
հետո, բանվորները շուռ ելին տալիս տակառները և հավաքում ելին
հատակի վրա թափված մնացորդները և լցնում սալակը: Հատակը
ծածկվում էր կեղտի հաստ շերտով, և Անտոնն սպունգով պիտի
հավաքեր այդ կեղտի միջից մնացորդները ու գցեր ավազանը տա-
նող խողովակի մեջ: Ծերունին այս խողովակը միշտ մաքուր պիտի
պահեր, այնտեղ հավաքվող մնացորդները ժողովեր ու գցեր մսով
լի սալակը, վոր հետո պահում ելին կոնսերվների համար:

Սա զգվելի բան էր, բայց այն, ինչի հետ վոր շուտով Յուրգի-
սը պիտի ծանոթանար, ավելի զգվելի դուրս չեկավ: Նա հենց առա-
ջին օրն էր նկատել գործարանում սովորական դարձած սրիկայու-
թյուններից մեկը: Ամեն օր սպանդանոց քշվող անասունների մեջ
շատ հաճախ պատահում ելին հղի կովեր, վորոնց միսն ուտելու հա-
մար անպետք է: Իհարկե կարելի չեր նրանց թողնել, մինչև վոր
կծնեյին, բայց, նոր հոգսերից ու ծախքերից խուսափելու համար,
գործարանատերերի կարգադրությամբ այդ կովերին էլ մյուսների
հետ մորթում ելին: Յուրգիսի պարտականություններից մեկն էլ այն
էր, վոր փորոտիքը հորթի հետ ցածի հարկը թափեր, վորտեղ միսը
և կաշին մշակման ելին չենթարկվում:

Մի անգամ բանվորներից մեկը սալթաքեց, և վորտեղ դուրս ըն-
կավ: Յուրգիսին հրամայեցին նրա տեղը բռնել: Արդեն ուշ էր, հա-
մարյա մթնել էր: Պետական սանիտարական տեսուչը, վոր պար-
տավոր էր մորթած կենդանիների միսը քննել, գնաց, իսկ բանվոր-
ներից մեկին միայն քսան հոգի: Այդ օրը գործարան ելին քշել մի
ամբողջ նախիր, վորի մեջ հաշմանդամ անասուններ շատ կալին:

Միքանիսի վոտներն ելին ջարդված, մյուսների կողքերն ելին
վերքերով ծածկված, իսկ միքանիսն էլ արդեն ընկնում ելին: Սրանց
բանվորները «լեշ» ելին անվանում, և այս «լեշերը» լուծթյան ու
ու մթուժյան ծածկոցի առկ հարկավոր էր ոգտագործել: Մեքենա-
ների միջոցով նրանց բարձրացրին սպանդանոց և սովորական արա-
գուժյամբ մորթոտեցին ու փորոտիքը հանեցին: Յերևում էր, վոր
սա մի սովորական չերեկուժ էր: Յերևու ժամից հետո տակառներն
արդեն դրված ելին սառցարանում: Յուրգիսը բոլորովին ընկճված
տուն վերադարձավ: Նա համոզվեց, վոր իր ունեցած հավատը Ամե-
րիկայի վերաբերմամբ իսկապես ծիծաղելի չեր դառնում:

3. ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒԻՎ

Յուրգիսն արդեն կորցրել էր դեպի մարդիկ տածած իր հավատը:
Նրա համար այժմ պարզ էր, վոր կյանքը վոշ ալ ինչ էր, չեթե
վոշ՝ կռիվ: Դրա համար էլ անհրաժեշտ է ամեն բանի կասկածան-
քով ու ատելությամբ վերաբերվել և ականջները սրած պահել, միշտ
հիշելով, վոր բոլորը և ամեն մեկն էլ խաբում են ու կողոպտում:
Խանութների բոլոր ռեկլամներն անամոթ և ակնհայտի սուտ են:
Ցանկապատերին, լապտերներին, հեռագրասլուկներին փակցրած
աֆիշները սուտ են առաջին խոսքից մինչև վերջինը: Գործարանա-
տերերը սուտ են, խաբում են բանվորներին, գնողներին մատա-
կարարում են կեղծ ապրանքներ, խաբում և կողոպտում են ամբողջ
աշխարհը: Շրջապատը լիքն է ստով և խաբելությամբ:

Անախորժությունները մեկը մյուսին հետևեցին: Ապրելու պայ-
մաններն այնքան ծանր ելին, վոր Յուրգիսի կինն էլ պիտի աշխա-
տանքի գնար: Մի անգամ Ռոան մրսեց և հիվանդացավ, բայց պի-
տի գնար աշխատելու: Նրա բաժանմունքի կին-վերահսկիչը շատ բժա-
խնդիր էր նրա նկատմամբ. նա ատելով ստում էր ամուսնացած
բանվորներին: Ռոանի կրտսեր չեղբայրներն ու քույրերը շարունակ
հիվանդանում ելին: Հայրենիքում — Լիտվայում մորաքույր Ելսբեաը
բույսերով էր բժշկում չերեխաներին: Բույսերն ինքն էր հավաքում,
չորացնում: Իսկ այստեղ զեղերը պիտի գնեյին զեղատնից: Բայց
ինչ կարող ելին անել այդ զեղերը, բանի վոր թեյը, շաքարը, սուր-
ճը և ալյուրը վաճառում ելին զանազան տեսակ ֆլասակաբ խառ-
ճը

նուրդներով, կանաչ սիսեռը պղնձի թթվուտով եր ներկված, մու-
րաբան՝ անիլինով... Յեվ ընդհանրապես խանութներում ծախվող
բոլոր բաները կեղծված ելին: Նրանք ձմեռվա շորեր գնեցին, բայց
դրանք մարմինը չեղին տաքացնում, վորովհետև ապրանքը կեղծված
եր. թանգ գնով գնածն ել միայն գեղեցիկ գույնով ու կարվածքով
եր տարբերվում. ապրանքը նույնն եր դուրս գալիս:

Մեծ վիշտ եր պատճառում ծերունի Անտոնի վիճակը: Խոնավ
նկուղի մեջ աշխատելով, նա սկսեց սաստիկ հազալ: Բացի դրանից,
չնայած վոր ճտկավոր կոշիկները հաստ պաղտոններ ունեւին, աչնու-
ամենայնիվ վոտները սարսափելի ցավում ելին քիմիական ուժեղ
բաղադրութունների պատճառով, վորոնք թափվում ելին նրա ար-
հեստանոցի հատակին: Բժիշկը խորհուրդ տվեց անմիջապես աշխա-
տանքը թողնել, նախազգուշացնելով, վոր հակառակ դեպքում վոտ-
քերը բոլորովին կբրբրվեն, և մատները կթափվեն: Անտոնը համ-
բերությամբ տանում եր և վոտքերին փալաաներ փաթաթելով, հա-
մառորեն շարունակում եր աշխատանքը:

Շուտով նրա կոկորդից սկսեց արյուն հոսել. նա անկողին
մտավ և անմիջապես գործից զրկվեց: Մի առավոտ նրան մեռած
գտան: Թաղումը շատ հասարակ եր: Սա մեծ վիշտ պատճառեց մո-
րաբույր Ելսբետին. իսկ Յուրգիսն ամբողջ կիրակի որը սակարկու-
թյուն եր անում դադաղաժառուի և գերեզմանափորի հետ. վկաներ
ել եր կանչել, վոր ապագայում պայմանավորված գնից ավելի չպա-
հանջեն: Նա արդեն յուրացրել եր ամերիկական կարգ ու կանոնը և
գիտեր, վոր դա անհրաժեշտ ե:

Վրա հասավ ձմեռը բուք ու բորանով: Թոքերի բորբոքումը և
ինֆլուենցիան դաժանորեն տարապծում ելին գործարանային թաղում:
Ծանր եր հատկապես թոքախտավորների դուրսթյունը: Սարսափելի
յեր թվում առանց տաք շորերի աշխատանքի գնալը, բայց մի որ
միայն բացակայել, նշանակում եր կորցնել տեղը, վոր անմիջապես
բռնում եր գործարանի դռների առաջ խմբերով հավաքված անգործ-
ներից մեկը: Վոչ մի չեղանակ չեր կարողանում արգելել այդ գոր-
ծադուրկներին խոնավելու այդտեղ: Նրանք ցրտահար ելին անում
իրենց ձեռքերը, վոտքերը, բայց ամեն որ կանոնավոր կերպով գա-
լիս, հավաքվում ելին: Չէ վոր նրանք ուրիշ վոչ մի տեղ չունեյին
գնալու:

Մի անգամ մի գործարանատեր թերթում հայտարարեց, վոր
յերկու հարյուր հոգի չեն հարկավոր սառուց կոտրոսելու համար. ամ-
բողջ որվա ընթացքում և հետեւյալ ամբողջ գիշերը անտուն, քաղ-
ցած մարդկանց բազմությունը դժվարությամբ ձեղքելով ձյունի խոր
կույտերը, ամեն կողմից գործարան թափվեցին: Նրանք գրավեցին

տրամվայի կայարանը, բոլոր միջանցքները և ընդունարանները, քնում
ելին միմյանց վրա թափված, միայն թե տաքանային: Առավոտյան
դռների մոտ յերեք հազար մարդ հավաքվեց: Նրանց միջից ընտրե-
ցին քսան հոգի միայն և ամենաուժեղներին: Ինչպես պարզվեց, 200
թվանշանը վրիպակ եր:

Կանանց և յերեխաների դուրսթյունն ավելի վատթար եր: Յե-
րեխաներին փաթաթում ելին մինչև քիթը, բայց այդ ել չեր ոգ-
նում: Մի անգամ, փետրվարի սկզբին, մի սարսափելի ցուրտ որ,
Ռնայի փոքր յեղբայր Ստանիսլավի հետ աշխատող յերեխան վոր
մեքենայի ճարպը քամում եր, հանկարծ ցավից սկսեց գոռալ: Նրան
պառկեցրին և սկսեցին ուժով տրորել ականջները, բայց ականջ-
ները ցրտահար ելին յեղել և տրորելուց թափվում ելին: Սրանից
հետո Ստանիսլավն սկսեց ցրաից վախենալ և յերբ առավոտներն
աշխատանքի ելին ուղարկում, գոռում ու լաց եր լինում: Յուրգիսն
ստիպված եր լինում նրան իր հետ տանելու, և յերբ ձյունը խորն
եւ լինում, նրան դնում եր իր ուսին ու դնում: Սպանդանոցի այն
մասը, վորտեղ Յուրգիսն եր աշխատում, չեւին տաքացնում, և աչն-
տեղ ջերմությունն աչնպես եր, ինչպես դուրսը: Յեզների արյունը
սառչում եր մորթողների ձեռքերին: Բանվորները ձեռներն ու վոտ-
ները փաթաթում ելին լրագրներով ու հին մեշկներով, բայց ար-
յունը ծծվում եր նրանց մեջ և սառչում: Հետո կրկին այդ թղթերի
վրա թուղթ ելին փաթաթում, և այդպես շարունակ:

Յերեկոյան մսագործների վոտները կարծես փղի վոտներ լի-
նեյին: Վերահսկիչներից թագուն նրանք վոտների ծայրերը մտցնում
ելին նոր մորթած յեզան փորոտիքի մեջ ու տաքացնում: Ամենից
անտանելին այն եր, վոր մերկ ձեռքերով ելին աշխատում: Մատ-
ների փետանալուց շատ դժբախտ դեպքեր ելին պատահում: Թափ
վող թարմ արյունից և անընդհատ հոսող տաք ջրից թանձր մառա-
խուղ եր կանգնում և միքանի քայլի վրա անկարելի յեր լինում
բան տեսնել: Աշխատանքը կատարվում եր կայծակի արագությամբ,
և ամեն մարդ ձեռքին դանակ ուներ, ուստի զարմանալի չե, թե
ինչպես այստեղ նույն չափով մարդիկ չեւին ընկնում, ինչքան անա-
սուններ:

Այս դաժան ցրտին տանն ել հաճելի չեր: Խոհանոցում մի փոք-
րիկ վառարան եր վառվում միայն, վորի շուրջը հավաքվում ելին
ընտանիքի անդամները յերեկոններին և ափսեները ծնկներին դրած
ընթրում ելին: Ապա պառկում ելին քնելու շորերը հագին: Ինչ վոր
պատահում եր, վրաներն ելին զցում, բայց հաճախ ցուրտը չեր
թողնում քնելու: Իսկ առավոտները վեր ելին կենում մթնով և շտա-
պում աշխատանքի:

Դժբախտութիւնը կատարյալ դարձավ, քերք գործերը վատ գնալու պատճառով գործարաններում ու սպանդանոցներում բանվորներին սկսեցին կրճատել: Վոմանց ուղղակի դուրս արին, շատերի չելաշխատանքի ժամերը կրճատեցին: Շաբաթ եր լինում, վոր Յուրգիսը վեց դուլարից ավելի չեր վաստակում, վորովհետեւ ստանում եր միայն բանած ժամերի համար, իսկ այդպիսի ժամերն որական վեցից չեյին անցնում: Չնայած դրան, նա պարտավոր եր առավոտը վաղ սպանդանոց գնալ և մինչև յերեկո մնալ աշնտեղ, սպասելով անասունների գալուն, վորոնց շատ անգամ ուշ եյին բերում բուք ու բորանի պատճառով:

Բանվորները խնդրում, աղաչում եյին այդ կարգը վերացնել, սակայն գործարանի վարչութիւնն ուշադրութիւն չեր դարձնում, և բանվորներն սպասելով աշխատանքի սկսվելուն, սառչում եյին ցրտից: Յուրգիսը պարտավոր եր ամբողջ ճրագալուցն սպանդանոցում անցկացնել, իսկ ծննդյան առաջին որը սովորականի պէս վաղ պիտի գնար գործարան, սպասելու անասունների գալուն: Բայց ամենաւատն աշն եր, վոր փողի հաշվի ժամանակ բանվորներին անխրդճաբար խաբում եյին: Սպանդանոցում ընդունված և անխախտ կանոն եր, վոր թեկուզ մի բուք ուշացողն ամբողջ ժամի աշխատավարձը կորցնում եր: Իսկ սովորական ժամից շուտ սկսվող աշխատանքի համար չեյին վարձատրվում: Վնչ-լրիվ ժամը հաշվի չեր առնվում, և այդպիսի ժամերի համար բանվորը վարձ չեր ստանում:

Իրա համար փող ստանալը մի տեսակ վիճակախաղ եր դառնում, վերահսկիչների ու բանվորների միջև ակնհայտնի կռիվ եր տեղի ունենում—բանվորներն աշխատում եյին ժամանակը յերկարացնել, վերահսկիչները կրճատում եյին: Սակայն վերահսկիչները մեղավոր չեյին. նրանք իրենց տերերի կամքն եյին կատարում: Յուրգիսն այժմ միայն հասկացավ, վոր բանվորներն իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք ե կռվեն: «Իսկապէս վոր ճիշտ ե,—մտածում եր նա,—բանվորները միանալով կարող են իրենց տերերին հաղթել... Յեւ մի ե առաջին անգամ այս միտքը հղացել»: Այստեղ նրան հասկացրին, վոր Ամերիկայում միշտ այսպէս են վարվում:

Իր անդամակցական նշանը մի առանձին հպարտութեամբ եր կրում, և նրան թվում եր, վոր իր տանջանքների վերջը հասել ե:

Միութեան մեջ մտնելու առաջին հետեանքն այն լեզավ, վոր նրա մեջ ցանկութիւն առաջացավ անգլիներն սովորելու: Նա ցանկանում եր հասկանալ, ինչ վոր կատարվում եր ժողովներում: Նա սկսեց ուշադրութեամբ լսել ու սովորել ինչքան վոր կարող եր. մեծ

մասամբ յերեխաներից եր սովորում, վորոնք արդեն գալրոցում անգլիներն խոսել սովորել եյին: Բացի դրանից, Ունան նրա համար գիրք եր կարգում բարձրաձայն. գիրքը նրան նվիրել եր մի ընկեր: Յուրգիսը վորոշեց կարգաւ սովորել և սկսեց յերեկոյան գալրոց հաճախել:

Ամեն յերեկո նա դասարան եր ստնում թեկուզ կէս ժամով, յեթե ժամանակ չեր լինում: Նա սովորեց գրել կարգաւ և ուրիշ շատ բան ել կսովորեր, յեթե ժամանակը ներեր: Ձմեռվա առաջին կիսին Յուրգիսը բավականին փող ուներ, այնպէս վոր կարողանում եյին առանց սովամահ մնալու ապրել, և մինչև անգամ վերցրած պարտքի մի մասն ել վճարել եր. բայց յերբ շաբաթական աշխատավարձը տասը դուլարից վեց կամ հինգ դուլարի իջավ, նա ալիս չեր կարողանում անենաանհրաժեշտ բաները գնել:

Վերջապէս գարունը յեկավ, և նրանք ազատվեցին սառնամանիքից: Բայց տաքութիւնը նոր տանջանքների աղբյուր դարձավ: Տարվա ամեն յեղանակն իր հատուկ տանջանքներն եր բերում: Գարնան հորդ անձրևներից փողոցները ծածկվեցին անանցանելի ցեխով: Ապա հասավ սարսափելի շոգ ամառը, և սպանդանոցն իսկական դժոխք դարձավ: Որ եր լինում, վոր արևհարութիւնից միջանի մարդ եր ընկնում: Տաք, գոլորշիացող արյան հեղեղը հոսում եր առավոտից մինչև յերեկո, դրանից առաջացած գարշահոտութիւնն սպանիչ եր դառնում: Մորթողներն ամբողջովին տոգորված եյին այս հոտով և ամեն տեղ իրենց հետ տարածում եյին այս հոտը: Մաքրութիւնը պահպանելու ամենաչնչին հնարավորութիւնն անգամ չկար: Ձեռները լվանալու տեղ անգամ չկար: Աշխատանքի ընթացքում վոշ ժամանակ կար, վոշ ել վորեւե բան յերեսը սրբելու համար: Իսկ քրտնքով ծածկված յերեսի վրա հավաքվում եյին ճանճերը, վորոնք ամառն այստեղ իսկական յեղիպտական պատիժ եյին դառնում: Ամառվա ամիսներին աշխատանքն անընդհատ շարունակվում եր ձմեռվա պէս, և բանվորները վոշ մի անգամ չեյին տեսել վոշ մաքուր ող և վոշ թարմ կանաչ: Քաղաքից միջանի վերստ հեռու ծիւղում եյին Միչիգան լճակի կապտավուն կոհակները, բայց սրանք նույնքան անմատչելի եյին թվում բանվորների համար, ինչքան վոր Խաղաղ ովկիանոսի ջրերը: Կիրակի որերը նրանք չափազանց ջարդված եյին զգում իրենց և չեյին կարողանում հեռու գրոսանքներ կատարել, իսկ իր որերը նրանք մի ժամ ազատ չունեյին:

... Յերկար չտեց Յուրգիսի այս դրութիւնն ել: Նա նորից գրկվեց աշխատանքից, նորից մատնվեց քաղցածութեան: Դժբախտութիւնը հաջորդում եր դժբախտութեանը: Հյուծվեց, քամվեց ու

մեռավ նրա կինը, կնոջից հետո նա կորցրեց և իր անտեր մնացած յերեխային: Կորավ և նրա հոգեկան կորովը: Հուսահատության ծայր աստիճանին հասած, նա դիմեց դեպի անկում: Դարձավ վոճրագործ, արբեցող, կաշառվող, բայց մի գեղեցիկ որ բանվորական կոլեկտիվը նրան ուշքի բերեց

4. ԼՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Մոտեցան Միացյալ Նահանգների նախագահի ընտրության ուրբերը: Ամեն տեղ քաղաքական միտինգներ ելին կազմակերպվում: Միտինգների համար դահլիճներ ելին պատրաստված: Յուրգիսը մի այդպիսի դահլիճ մտավ: Դահլիճում վոչ մի զարդարանք չկար, բայց համարյա բոլոր նստարանները բռնված ելին: Յուրգիսն աշխատեց դահլիճի խորքում, ամբիոնից հեռու, պատի մոտ մի տեղ գրավել: Հանկարծ նրա ուշադրությունը գրավեց դահլիճում բարձրացած աղմուկը:

Բոլորը վեր թռան տեղերից և սկսեցին թաշկինակները թափահարել ու վողջունել մեկին: Յերևի հռետորը չեկավ.— մտածեց Յուրգիսը: Յեվ Յուրգիսն առաջին անգամ սկսեց լսել: Նա դեռ վոչինչ չէր հասկանում, բայց նրա հարեանուհու և մյուս ունկնդիրների հուզմունքն անհասկանալի կերպով իրեն ել եր հաղորդվում: Նա զգում էր, վոր իր հոգին զարմանալի կերպով սթափվում ու վողկորվում է:

Բարձրահասակ, վոսկրոտ հռետորի արտաքինն այնքան էլ ազդեցիկ չէր: Նա փոքրիկ, նոսր մորուք ուներ, վոր գծավորում էր յերեսի բոլորքը: Բայց խոր ընկած սև աչքերը փայլում ելին ինչպես ածուխ: Նա խոսում էր ուրախ, վողկորված, յերկար ու բարակ ձեռքերով արտահայտիչ շարժումներ եր անում, կարծես նրանցով ուզում էր ունկնդիրներին գրկել: Նրա ձայնը խորունկ էր և հնչուն, ինչպես յերգեհոնը: Անցավ մի քանի րոպե, մինչև վոր Յուրգիսն սկսեց հասկանալ հռետորի ճառի իմաստը, և այստեղ նրան հանկարծ թվաց, վոր հռետորը մասնավորապես իրեն է դիմում և իր ճառը հատկապես իրեն: Յուրգիսի համար է ասում: Նա զգաց, վոր բռնվել, խճճվում է այդ մարդու ճառի մեջ, ինչպես ցանցի մեջ ընկած թռչունը:

— Այո, — ասում էր հռետորը, — դուք այսօր լսում եք ինձ, բայց վաղը կշարունակեք ձեր ուսերի վրա գրված տաժանակիր աշխատանքը տանել, կգնաք աշխատելու համաշխարհային կապիտալի ոգաին: Անվերջ աշխատել ուրիշների համար, պատսպարվել կեղտոտ, խոնավ նկուղներում, կորցնել առողջությունը փասակար արտա-

դրությունների մեջ, ահա ձեր ներկա վիճակը: Աղքատության ու սովի մշտական սպառնալիքի տակ դուք զոհ եք դառնում ամեն պատահականության: Որ որի վրա կոխվե ավելի կատաղի չե դառնում, աշխատանքն ավելի դժվարին: Ձեզ ճնշում է շրջապատող պայմանների յերկաթյա ձեռքը: Անցնում են ամիսներ, տարիներ և դուք նորից եք գալիս այստեղ, իսկ չես ահա կանգնում եմ այստեղ և հարցնում եմ — բավական չե՞ն ձեր աղքատությունը, վշտերը, չբացվեցի՞ն ձեր աչքերը՝ տեսնելու համար անարդարությունն ու ճնշումը: Յես դիտեմ, վոր ամենադժվար գործն արդեն կատարված է. շահագործողներն արդեն դողում են, յերկյուղից ել չեն հեղնում: Խաբեբայություններն ու սրիկայություններն արդեն բացվել են: մնում է միայն ճշմարտությունն ըմբռնել: Յեվ իմ ձայնը, վոր հնչում է այստեղ ձեր առաջ, միլիոնավոր մարդկանց ձայնն է, վորոնք ուժից վեր աշխատանք են թափում և զուրկ են կյանքի ամենաչնչին բարիքներից անգամ:

— Յես խոսում եմ բոլոր նրանց կողմից, ով վիրավորված է կյանքից, ով ալլևս վոչ մի հույս չունի, ում համար աշխարհը բանտ է: Իմ ձայնն այն փոքրիկ յերեխայի ձայնն է, վոր հենց հիմա վորևե գործարանում ուժից ընկած, հոգնածությունից ու տանջանքից թուլանում է. Իմ ձայնն այն մոր ձայնն է, վոր մի խոնավ նկուղում կամ ցուրտ չարդախում լամպի լուսի տակ հենց այս րոպեյիս կար է անում, կուրանում է աշխատանքից, վորպեսզի մի կերպ իր զավակներին ազատի սովամահությունից: Իմ ձայնն այն մարդու ձայնն է, վոր հենց հիմա մեռնում է կարիքից ու զրկանքներից, վորի մարմինը ծածկված է ծվեններով, իսկ հարազատները նրա մահով իրենց կործանում են տեսնում: Իմ ձայնն այն դեռատի աղջկա ձայնն է, վոր հենց այժմ չափիչփում է այս սոսկալի քաղաքի փողոցները. նա ջարդված, տրորված է, ստիպված է ընտրել իրեն ստորացնող ծանր ճանապարհը կամ կորչել լճի ալիքների մեջ: Յես խոսում եմ զրանց բոլորի կողմից և խնդրում եմ ձեզ, վոր լսեք ինձ, յեթե միայն ուզում եք ազատվել բանտից, ստրկության շղթաները թոթափեք և ձեզքեք դեպի լույսը տանող ճանապարհը:

Հռետորը մի վայրկյան լռեց: Դահլիճում գերեզմանային լուրթյուն էր տիրում, և բոլորն էլ միայն իրենց շնչառությունն էին լսում: Հետո բազմությամբ լցված հսկայական դահլիճը թնդաց հիացմունքի աղմուկով: Յուրգիսը նստած՝ չէր շարժվում. համառությամբ նայում էր հռետորին և ամբողջ մարմնով դողում էր:

Հռետորը ձեռքը նորից բարձրացրեց, և նորից բոլորը լռեցին: Նա շարունակեց.

— Յես դիմում եմ նրանց, ովքեր արդարություն են փնտռում, բայց նախ և առաջ ձեզ, ընկեր բանվորներ։ Դուք ձեր սեփական փորձով իմացել եք կյանքի այն ամբողջ չարիքը, վորի մասին յես խոսում եմ, և ձեզ համար սա դատարկ խոսք չէ։ Դուք, բանվորներ, անգուժ իրականություն առաջին զոհերն եք. նա շրջապատել է ձեզ իր ցանցերով, և դրա համար ել դուք պետք ինձ լսեք։ Դուք, բարձրաշուն աշխատողներ, վոր մշակում եք այս յերկիրը, բայց նրա գործերը վճռելու ժամանակ ձայն չունեք։ Կապիտալն այնպես է տնտրիներ, վոր դուք ցանում եք, բայց ձեր աշխատանքի պտուղներն ուրիշներն են քաղում։ Դուք տանջվում եք, իսկ ուրիշները զվարճանում են։ Ձեզ մոտ եմ գալիս և աղատություն լուր բերում։ Յես գիտեմ ձեր կարիքները, վորովհետև յես ել եմ յեղել ձեր դրություն մեջ և ապրել ձեզ նման։ Վոչ վոր այնպես լավ չգիտե այդ կյանքը, ինչպես յես։ Յես գիտեմ, թե ինչ է նշանակում պատառուտած կողիկներով փողոցները թափառել, չոր հացի փշրանքներով կերակրվել, նկուղներում կամ վագոնների տակ քնել։ յես գիտեմ, թե ինչ է նշանակում ցրտից ատամները կրճրապանել, յուրաքանչյուր բռնի աշխատանքի միրափի յետևից ընկնել ու հանկարծ տեսնել իր լավագույն յերազները հող ու մոխիր դարձած... Յես այն ել գիտեմ, թե ինչ գնով է բանվորը կրթություն ձեռք բերում։ Յես ինքս ձեռք եմ բերել, զրկելով ինձ քնից, կերակրից. տուժել եմ և հոգով և մարմնով, առողջությամբ և կյանքով։ Յես հիմա ձեզ մոտ եմ գալիս ինչպես լրաբեր։ Յես գիտեմ ձեր մեջ հուզվող ուժը։ Մենք արդարություն և աշխատանքի նոր թագավորություն կհիմնենք։ Ձեր աչքերից կապը ցած կընկնի, ձեր վոտները կթոթափեն իրենց ծանրացնող շղթաները, և իբրև ազատ մարդիկ, առաջ շարժվենք լավագույն ապագային դիմավորելու։ Մարդը պետք է ազատ իրեն իր ստեղծած ստրկությունից։ Դուք այլևս կախում չեք ունենալ ուրիշներից։ Շողոքորթությունը ձեզ չի խաբի, սպառնալիքները ձեզ չեն վախեցնի, դուք այնուհետև միշտ առաջ կգնաք։ Սուրբ բարձրացրած դուք կմտնեք ձեր յեղբայրների և ընկերների շարքերը և աշխարհի բոլոր կողմերը կտանեք սոցիալիզմի դրոշակը, վորն այսօր այստեղ ձեզ եմ հանձնում։ Դա մի անգին նվեր է, վոր վոչ ինձ է պատկանում և վոչ ել ձեզ և վորը մարդկության անվթար ժառանգությունն է։

— Ընկեր բանվորներ, բայց արեք ձեր աչքերը, նայեցեք ձեր շուրջը. գոնե մի հայացք գցեցեք այս քաղաքի փողոցների վրա, վորտեղ մենք այսօր միմյանց ենք հանդիպել... և տեսե՛ք՝ ինչեր են կատարվում... Այս գիշեր Ձիկագոյում տասնյակ հազարավոր

տղամարդիկ, չիմանալով թե գլուխները վորտեղ պիտի դնեն, իզուր աշխատանք փնտռելուց հետո պիտի սկսեն վողորմություն խնդրել։ Նրանք սովից թուլանում են և նախատեսելով ցուրտ գիշերվա գալուստը, սարսափում են։ Այսօր յերեկոյան, այստեղ, Ձիկագոյում հարյուր-հազարավոր մայրեր կեղտի ու կարիքի մեջ են ապրում. հարյուր-հազարավոր աշխատանքի անընդունակ ծերունիներ անհամբեր սպասում են մահվան, վորը միայն կարող է նրանց ազատել տանջանքից։ Միլիոնավոր մարդկանց գլխին—տղամարդիկ, կանայք և յերեխաներ—այստեղ ստրկության անեծքն է ծանրացած, վորովհետև նրանց ամբողջ կյանքը կախված է որավարձից, վոր հազիվ է բավականացնում գոյությունը միայն պահպանելու համար։

— Յեվ նրանք մինչև իրենց կյանքի վերջը պիտի տեսնեն միայն ծանր աշխատանք, աղքատություն և սով, ամառվա շոգ և ձմեռվա ցուրտ, կեղտոտություն և հիվանդություններ, տգիտություն և հարբեցողություն։ Սակայն նայեցե՛ք նկարի մյուս յերեսը. ահա մարդիկ—հազարներ են, մինչև անգամ տասնյակ հազարներ. սրանք այս աշխատանքի տերերն են, սրանք տիրում են նրանց աշխատանքի պտուղներին և աշխատանքին ել ուղղություն տալիս։ Վորպեսզի իրենց յեկամուտն ստանան, նրանք չպետք է աշխատեն, նրանց համար ամեն ինչ ինքն իրեն է գալիս, և իշխանության ապահովումը նրանց միակ հոգսն է։ Նրանք չքեղ պալատներում են ապրում, խեղդվում են առատությունից, բավարարում են իրենց բոլոր քմահաճույքները։ Մի գույգ կոշկի, մանյակի, թաշկինակի համար նրանք ավելի շատ են ծախսում, քան այն գումարը, վոր բավական է բանվորական մի ընտանիք մի ամբողջ շաբաթ պահելու համար։ Նրանք միլիոնավոր դոլլարներ են չարտում ձիեր, ավտոմոբիլներ ձեռք բերելու համար. նրանք ելի ուրիշ միլիոններ են ծախսում պալատներ կառուցելու համար, կամ թե փոքրիկ, փալուն քարերի համար, վորոնցով նրանց կանայք զարդարում են իրենց մարմինները։ Նրանց կյանքը մշտական վորկրամոլության և հղփանքի մեջ է անցնում։ Նրանց մշտական հրճվանքի գինն ամբողջ մարդկության արցունքն ու արյունն է։ Ամեն ինչ նրանց է պատկանում։ Ինչպես վոր աղբյուրն առուներին է հնունդ տալիս, առուները գետերն են ընկնում, իսկ գետերը ծովերն են թափվում, այդպես ել ամբողջ հասարակական հարստությունը հոսում է նրանց ձեռքը։ Գյուղացին հողն է մշակում, հանքավորը յերկրի ներսն է փորփրում, ձկնորսն իր ցանցն է չարտում, քարհատը քարերն է ջարդում, իմաստունը գլուտ է անում, գիտնականը հետազոտում է, բանաստեղծն իր յերգերն է հորինում, վերջիվերջո մտավոր ու ֆի-

զիկական աշխատանքի ամբողջ արտադրութիւնը մի ընդհանուր ուժեղ հոսանքի մեջ ե համադրուած, վորպեսզի սա չի իր հերթին ընկնի մեր հասարակութեան վրա տիրողների իշխանութեան տակ: Ամբողջ աշխարհի աշխատանքը նրանցից ե կախված, և նրանք գայլերի նման ամբողջը կլանում են:

— Մարդկութիւնը նրանց համար ե ապրում և նրանց շահի համար ե մեռնում: Նրանք վոչ միայն աշխատանքին են տիրում, այլ և զենքով ու կաշառքով բռնազրավել են բաղադրական իշխանութիւնը: Նրանք ամեն տեղ ոգտվում են իրենց հզորութիւնից, վորպեսզի կարողանան պահպանել և ամրացնել իրենց դրութիւնը, վորպեսզի կարողանան ընդարձակել և խորացնել այն բոլոր աղբյուրներն ու ջրանցքները, վորոնց միջով հոսում և նրանց մոտ ե գալիս ամբողջ աշխարհի հարստութիւնը: Իսկ ձեզ — բանվորներիդ ինչ ե հասնում: Դուք կարծում եք, թե ծնվել եք միմիայն նրա համար, վորպեսզի քարշ տաք ձեր բեռը լծկան անասունների նման, և դրա համար հնարներ եք փնտռում միայն մի կտոր հաց ձեռք բերելու:

— Միթե ձեր մեջ կգտնվի մեկը, վոր այնքան ստորացած ու բրտացած լինի, վոր հավատա, թե կյանքն այսպես շարունակվելու չի անվերջ, և թե մարդկային աշխատանքի արտադրութիւնները մշտապես ծուլերին ու ձրիակերներին են պատկանելու, վորոնք չերկրային բոլոր բարիքները շռայլորեն ու դատարկապորտութեամբ փչացնում են:

— Բայց վո՞րն ե, ընկեր բանվորներ, այն ուժը, վոր չբերեւ պիտի կարողանա այս դրութեանը վերջ տալ: Դուք ե դուք կարծում եք, թե ձեր տերերը կհասկանան իրենց սխալ լինելը և կսկսեն իրենց հարստութիւնը ծախսել ձեր դրութիւնը բարելավելու համար, կսկսեն համալսարաններ շինել, վորպեսզի ձեզ կրթութիւն տան, քաղաքական կուսակցութիւններ կկազմակերպեն, վորպեսզի սրանց միջոցով ձեզ դեպի հաղթանակ տանեն: Բայց միթե դուք չեք տեսնում, վոր դա ձեր խնդիրն ե, և դուք պիտի լուծեք այդ խնդիրը: Բայց հիշեցեք, վոր չեթե դուք ստանձնեք այդ գործը, ունեւորների իշխանութեան կողմից ուժեղ հարվածի կհանդիպեք: Ձեզ կհայհոյեն և կծաղրեն, կատեն ու կհալածեն, ձեզ համար մորակներ, գնդակներ ու բանտեր կպատրաստեն: Ձեր ուսմունքի դեմ առաջ կբերեն կուլերի և կարճամիտ մարդկանց սուտ վարդապետութիւններ և կամ սրիկաների մտացածին խոսքեր: Ահա թե ինչ զենքով պիտի գործեն ձեր դեմ: Ճանապարհը դժվարին ե և չերկար, բայց դուք, բանվորներ, գոյութիւն ունեցող հասարակարգի հարադատ գոհեր, դուք վոչ մի բանից չեք վախենա: Մեր կուսակցութիւնը ձեզ իր մոտ ե կանչում: Մեր ձայնը — շղթաները դեն

շարտող աշխատանքի ձայնն ե: Նա արդեն հնչել ե: Յեւ այդ ձայնից զարթնած հսկան արդեն բարձրանում ե տեղից, ուղղում հզոր ուսերը, վոտքի չե կանգնում և պատրաստվում ե աշխարհը նվաճելու...

Հուզմունքից հոետորի ձայնն ընդհատվեց: Նա կանգնած եր ձեռքերը տարածած և կարծես թե վերս եր թռչում: Բոլոր ունկընդիրները տեղերից վեր թռան: Վոգեւորութեամբ բռնված ինչ-վոր բան ելին գոռում: Յուրգիսն ել նրանց հետ միասին գոռում եր, գոռում եր ամբողջ կոկորդով, չհասկանալով սեփական խոսքերի իմաստը և իր ներսում բռնկած վոգեւորութիւնը չկարողանալով ուրիշ կերպ արտահայտել: Հանկարծ նրա աչքերի առաջ բացվեց փայլուն հորիզոն. նրա անցյալ տխուր կյանքի տեսիլները չքացան, նա իրեն ավելի մեծ, ավելի ուժեղ զգաց, զգում եր, վոր դադարեց սովորական մարդ լինելուց: Տանջալի ուրախութիւնը նրա ամբողջ մարմինը ցնցում եր: Նա սեղմում եր բոունցքները և անկանոն շնչում: Իր անցյալ ամբողջ կյանքի ընթացքում կրածները, բոլորովին ուրիշ գույն առած, անցան նրա աչքերի առաջից: Ինչքան յերկար ե համբերել: Ինչքան սարսափներ ու տանջանքներ ե կրել...

Բայց այժմ այդ բոլորը կարծես մի անդունդի մեջ ե գլորվում. բոլորը մոռանում ե, և այժմ նոր լույս ե փայլում գերեզմանային մթութեան փոխարեն:

Յուրգիսի հոգում բոլոր պատենշներն ընկան: Նրանցից բարձր, թվում ե թե, պարզ և մաքուր չերկինքն ե գտնվում, նա կանգնած եր աչնտեղ, վեր բարձրացրած ձեռքերով. նրա աչքերը փայլում ելին, հուզմունքից չերեսը կարմրում եր. և նա գոռում եր, գոռում, ինչպես խելագար մինչև այն ժամանակ, չերբ նրա ձայնը բոլորովին խզվեց, և նա ուժասպառ ընկավ նստարանի վրա...

Այդ գիշեր Յուրգիսը կոմունիստ դարձավ:

Շ Ա Պ Կ Ի Յ Ե Ր Գ Ը

Մատները թմրած ու մաշված ելին,
աչքի կռկները ուռած ու կարմիր—
հին շորերը հագած՝ հալումաշ մի կին
նստած՝ կարում եր լեռանդուն ու ժիր:
Կարիր ու կարիր...

Հեզ ու չքավոր, խեղճ ու վշտակիր...
վողբազին ձայնով, տխուր ու տրտում՝
մի շապկի մասին նա լերգ եր լերգում:

Վաղ-հավախոսին զարթնում է քնից
և շապիկ կարում մինչև կես-գիշեր.
կիսափուլ իր տան հարկի ճեղքներից
ներս են թափանցում աստղերի շողեր:

Աշխատիր անդուլ, գործիր անտրտունջ,
քանի չի հաղթել քեզ քունը համառ,
աշխատիր անխոնջ, մինչև վերջին շունչ,
քանի աչքերդ չեն մարել իսպառ.

աշխատիր, աշխատիր, աշխատիր,
շուլալիր, ու կարիր, ու կարիր,

մինչ շապկիդ վրա ընկնես քնահար
և քնիդ մեջ ել կարես անդադար:

Դուք, վոր ապրում եք ուրախ շրջանում,
ուռնք մայր ու քույր, կին ու ազգական,—
այն, վոր հագնում եք և անփուլթ մաշում—
վնչ թե կտավ է, այլ չարքաշ մի կյանք:
Կարիր ու կարիր...

Հեզ ու չքավոր, խեղճ ու վշտակիր...
կարում էս ահա շապիկ ու պատան
և ամեն բոպե սպասում մահվան:

Բայց ինչո՞ւ չեմ լես մահից վախենում,
ուզում ե՞ թող գա թեկուզ հենց այսօր.
չե՞ վոր, ինչպես այդ մահվան ժանդ ուրուն՝
մի չոր կմախք եմ—լուկ մորթ ու վոսկոր,
հյուժված մի մարմին, չարատանջ մի կյանք,
կտոր հացից գուրկ, քաղցած որնիրուն.
ախ, ինչո՞ւ, մարդիկ, հացը այդպես թանգ,
իսկ այսպես եժան իմ միսն ու արյուն:

Աշխատիր անվերջ, թափիր ճիգ ու ջանք,
այս ծանր ժամերն, ավաղ, վերջ չունին.
իսկ ինչ է վարձս—չոր հացի փշրանք,
հնամաշ շորեր, հարդե անկողին,
սեղան ու աթոռ՝ հասարակ փայտյա,
հատակ, առաստաղ՝ խարխուլ ու ավեր,
լավ է, վոր գոնե մերկ պատի վրա
գեռ թրթռում է ստվերս լերեր:

Տանջվիր անխնա, ժամե ժամ տքնիր
և միշտ նստակցաց գործիր որավարձ,
վորպես հանցավոր մի տաժանակիր՝
աքսոր ուղարկված անհույս ու անդարձ.

Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
շուլալիր, ու կարիր, ու կարիր,

թեկուզ գլուխդ թեքվի ուժասպառ,
և սիրտդ ու ձեռքդ թուլանան իսպառ:

Կարիր ու կարիր ձմռան որերում,
նույնպես գարնանը—որեր զովարար,
լերը ծիծեռնակը իր բուջնն է հյուսում՝
գարնան գալուստը տոնելու համար,
իսկ ձագուկները կուշտ ու ապահով՝
միշտ ճովողում են իրանց մորը հետ,
կարծես ուզում են ուրախ լերգերով
ինձ ծաղրի բռնել ու հեզնել հավետ:

Ախ, մեկ դուրս գալի դաշտեր բացողյա,
ինչպես բուրում են վարդերն անուշակ...
միայն լերկինքը լինել իմ վրա,
միայն դալար խոտ իմ վոտների տակ.
հ, թե ինձ հիմա վիճակվել մի ժամ
մանկական կյանքիս անհոգ որերից,
լերը վախ չունեցի, թե լես մի անգամ
ազատ ման գալով՝ կզրկվեմ ձաշից:

Ո՛ւր եր՝ գեթ մի ժամ, սրտահույզ իմ ցավ,
ինձ՝ թշվառ գոշիդ՝ թողնելիք հանգիստ.

ախ, միշտ հուսահատ ու սիրո ծարավ՝
դառն ե իմ կյանքը, տխրութիւն ու վիշտ:
լացը գեթ մի քիչ վիշտս կմեղմեր—
բայց, ախ, վոչ մի յելք չկա ինձ համար.
կանգ առեք հիմա, հոսող արցունքներ,
թե չե՛՛ չի՛ լինի կարս միաշար:

Մատները թմրած ու մաշված ելին,
աչքի կողերը ուռած ու կարմիր—
հին շորեր հագած՝ հալումաշ մի կին
նստած՝ կարում եր յեռանդուն ու ժիր:
Կարէր ու կարէր...

Աղքատ ու տնանկ, խեղճ ու վշտակիր...
հեծում եր, յերգում հեգ ու լալաղին—
չեր հասնում սակայն կուշտ հարուստներին
այս կնոջ յերգը մի շապկի մասին...

Ա.ԴԱ ՆԵԳՐԻ

ՅԻԹԵՂԱԳՈՐԾԻ ՄԱՆԸ

Հսկա շինութեան բարձր տանիքին
վաղ առավոտից նա աշխատում եր.
կարիքն ու հոգսը իր ընտանիքի
նրա յեռանդը կրկնապատկում եր:

Յերկար աշխատեց... և արեգակը
մոտ եր կեսորին՝ ճաշելու ժամին.
«Շտապի՛ր, ճաշի չե ժամանակը»—
ասաց նա ուրախ իր հարեանին:

Հանկարծ սալթաքեց բարձր տանիքից,
տապալվեց գետին ջարդված դիակով,
մարդիկ սարսափած այս դժբախտ գեպքից,
կանգնել— դիտում ելին ապուշ հայացքով:

Նոքա համակված կեղծ ցավակցութեամբ,
հետաքրքրված հոսող արցունով,
«Ափսոս» են ասում անամոթութեամբ
ու անցնում, դեպքը մոռացման տալով:

Յեվ միայն կինը ու քաղցած վորդիք
չեն մոռանալու աշխատավորին,
թույն ատելութեամբ պիտի անիծեն
բիրտ ու քարացած խիղճը մարդկային:

Ա.ԴԱ ՆԵԳՐԻ

ՄԻՆՁԻ ՄԱՆ

Ինձ նախատում են՝
— Ինչո՞ւ չես ժպտում ուրախ ու անհոգ.
Ինչո՞ւ քնարդ հնչում ե միայն հառաջ ու բողոք:

Այն ի՞նչ վոգի չե, վոր հետևում ե քեզ որորոցից,
վոր վիճակել ե անհամբուլը, սե բախտ մանուկ հասակից.
դե, պատասխանի՛ր, բանաստեղծուհի, առնական վոգով,
դու ո՞ւր ծնվեցիր, ինչո՞ւ դժգոհ ես ներկա վիճակով:

Պատասխանում եմ՝
— Այնտեղ, ուր մարդիկ խեղճ են ու տղետ,
ուր կեղտն ու մոլթն ե տիրում մշտական,
ուր վիշտ ու հոգսի հոսում ե սե գետ՝
այնտեղ՝ նրանց մեջ չես աշխարհ չեկա:

Յեվ ալ հեղեղով դեպ սիրտս հոսեց
անմեղ արցունք այն հերոսների,
վորոնք կովելով սե բռնութեան դեմ՝
ձգտել են ազատ իրեալներին:

Տեսնում եմ ահա՝ ինչպե՞ս սե հյուղից
դուրս ընկավ գունատ բանվորը քաղցած:

Տեսնում եմ մոռյլ կամարների տակ գործարանների,
ուր սուր աղմուկով բլուր ճախարակներ ճշում են, սուլում,
անթիվ վշտահար թոքեր են մաշվում գործավորների,
թունավոր ոգից թառամում կանաչք ծաղիկ հասակում:

ՆՄԻՒ ՎԵՐՉԱՐՆ

ԲԱՆԿԻՐ

Նամակներով ծածկված գրասեղանի առաջ,
թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մոռյլ,
նա գրում ե ճերմակ թղթիկներ վրա՝
միտքը հեռու հեռուն՝ չերկրի ծալքերն հառած:

Տեսնում ե նա կապը, Յեկոնը ու ծավան,
և ովկիանոսն Հնդիկ, ուր իր նավերն հազար
դեպի չորս կողմն հողի, դեպի հազար կայան,
առաջատները բաց՝ նավարկում են ազատ:

Կայարաններն իրա ու ռելսերը կարմիր,
վոր ուղարկե պիտի անապատներն անթուխպ.

ուր արևն ե միայն շարժվում մեռյալ տոթում--
յեբենոսի, սաթի աշխարհները անծիր:

Իր հանքերը, նավթի շատրվաններն անթիվ,
իր բանկերի մոլի յեռուզեռը հնչուն,
վոր խեղդում ե, լափում, գառանցանքով տանջում
և իր տենդը նետում ովկիանոսից անդին:

Ժողովուրդներ, վորոնց սենատները դահիճ
և որենքները խեղճ հպատակ են իրեն--
նա կարող ե մատնել նրանց հողմին հրե,
թե ոգտակար լինի՝ հաշիվներին դա իր:

Պատերազմներ, արյուն, մոլեգնություն ու վոխ,
վորոնց միակ արքան--ինքը--կրծում ե հար
պաղ թվերի անկիրք ատամներով--հազար
հանգուցյներ ու հարցեր՝ արյունոտ ու ալրող:

Յեվ նա գիտե, վոր հին թիկնաթուղում բազմած,
իր մատչանում յերբ նա խժբծում ե դողդոջ--
իր քաղքենի վոգուն կապում ե կյանքը վողջ,
ուր տիրում ե թախիծ ու սպիտակ սարսափ:

Ո, վոսկին, իր վոսկին, վոր ցանում ե հեռու,
բազմապատկում աշնտեղ--մոլի քաղաքներում,
աշնտեղ--խրճիթներում ու խուցերում տխուր,
ու լուսերում, ողում, ամենուր:

Իր թևավոր վոսկին, հեռուններով հարբած,
իր սավառնող վոսկին, իր գիշատիչ վոսկին,
վոսկին՝ շնչող ու վառ--
վոսկին:

Իր վոսկին, վորով փայլում են բոլր ամեն քամի ու հով,
իր վոսկին, վոր հողն ե ծծում
թշվառություն անթիվ շրթունքներով:
Իր վոսկին՝ հուրհրատող, իր վոսկին՝ խորամանկ, խաբող՝
առանց խոսքի--

հույսի ու արևի բեկոր--իր վոսկին:

Նա չգիտե ինքն ել, թե ինքն ինչի՞ չե տեր,
բայց իր գիզած վոսկին ավելի չե չեթե,
քան բուրգերը հսկա, աշտարակները ցից--
նա սիրում ե խորհել, պաղարյուն ու հանգիստ,
խորը, զգաստ սիրով,
վոր ինքն ունի արդեն, վորպես բարիք ու գտնձ--
խակական ալն հողի՝ զրնգան ու զնգան:

Ամբոխն ատում ե իրեն, բայց պատկանում ե նրան.
նախանձում են բոլորն ել վոսկին պտակն ե նրա:

Ցանկությունը յերկրային, հրդեհումը նրա կեղ
լափում ե սիրտը նրանց, ինչպես իր սիրտը լափեց:
Ինքը--նա չե, վոր տալիս ե ուղածին

դյունթիչ վաստակը հացի:
Ի՞նչ հոգ, վոր նա կեղեքում ե բոլորին--
ով իր դոնից հեռացավ--նա դառնալու չե նորից:
Վորպես հսկա ջրապտույտ, վորպես հորձանք,
թավարվում ե ուժը նրա անեղածայն.
Փրփրում ե, յեռում ու քաշում իր մեջ
տերևներ ու ճյուղեր և քարեր ու սերմեր--
կարողություն, հասուլթ, տնտեսություն ու կյանք
և կոպեկներն անգամ,
վոր խուղերի մթում, գիշերն ամեն ծառա
համարում ե ծածուկ իր ճրագի առաջ:

Այսպես ահա, հսկա իր գեղերով փողի,
թիկնաթուղում թաղված, դողդոջուն ու մոռլ,
նա տիրում ե բոլոր արքաների վրա
ու վճռում բախտը ծովերի ու հողի:

ԵՄԻՆ ՎԵՐՉԱՐՆ

Լ Ո Ն Դ Ո Ն

Այն--Լոնդոնն ե, ցնորք հուզուն ու յերկաթե.
աշնտեղ հեծում ե հանքն ահագնադարկ մուրճից.
աշնտեղից են մեկնում նավերը--սվ գիտե՝
գեպի լինչ անլույս ծովեր ու արկածներ վերջին:

Կայարաններ տխուր, ուր կարոտի բոցում
դողդողում են գազի լապտերները կորգիծ,
ուր ձանձրուլթի անեղ հրեշներ են ճչում
վեստմինիստրյան դաժան ժամացույցի զարկից:

Ու ֆանարներ, Թայմսի յերկայնքն ի վար շարած,
վոր անձրևի կազմած լճակներում լեղի
որորվում են, վորպես ջրահեղձ ու մեռած
նավազների զարհուր ուրվականներ գեղին:

Յեր հարբածի յերգեր, ու պոռնիկի քրքիջ,
ու պանդոկի պատին--բախտանման գրեր--
և հանկարծ--մահն ահա, վորպես մի հյուր անկող...
Այն--Լոնդոնն ե՝ ցնորք, վոր կրում ե իր մեջ:

ԳԼՈՒԽԸ

Գլխատության մոռալ բեմին դու գլուխդ վալը կըբերես,
և զանգերը կըողանջեն, և դաշուլնը կփաղփաղի,
ու մկանունք կաղաղակեն և կլինի շքեղ հանդես,
մեծապալծառ տոն ու հանդես կարմիր արջան ու մետաղի:

Յեվ արևը ծիրանավառ և լերեկոն ծծմբաշունչ,
լերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ
կտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրտունջ,
թե ինչպես լուռ կանչնչանան քո աչքերն ու դեմքը պալծառ:

Սև ամբոխը կրծքում պահած լուկ չարութիւնն ոճագալար,
իր ովկիանը ըմբոստ մահիդ առաջ լուին կխոնարհե,
ու հարազատ մոր պես գթոտ, խանդաղագին ու սիրաբար
քո անշունչ գին արշունաներկ դագաղի մեջ մեղմ կորորե:

Ու թունավոր, վորպես ծաղկանց փթիթը այն մահաշունչ սև,
ուր լեփում է կարմիր թուլնը շողուն, վորպես շանթը պալծառ,
կմնա քո անունն ըմբոստ, անմահ փառքիդ լույսը վսեմ,
վորպես կրծքում մեխված դաշուլն և անսասան, և անխոնարհ:

Գլխատության մոռալ բեմին դու գլուխդ վալը կդնես,
և զանգերը կըողանջեն, և դաշուլնը կփաղփաղի,
և մկանունք կաղաղակեն և կլինի շքեղ հանդես,
մեծապալծառ տոն ու հանդես կարմիր արջան ու մետաղի:

ՈՒՒՏ ՈՒՒՏՄԵՆ

ՅԵՎՐՈՊԱ

Ճորտի խեղդող վորջից
շանթի պես նա թռավ՝ ինքն իրմով հիացած,
վորքերով նա կոխկռտում է մոխիրն ու ցնցոտիները,
իսկ ձեռքերով սեղմում կոկորդն արքաների:

Ո՛, հույս ե սպասում:

Ո՛, տանջանքը քշված ազատասերների, վոր մաքրում են իրենց ըմբոստ
հոգին ոտար հեռաստաններում,

ո՛, վորքան սրտեր կան հիմա տխրութիւնով հիվանդ:

Վերադարձեք այսօր ձեր տները, թող նոր կյանք բացվի ձեզ համար:
Իսկ դուք, վոր վոսկի ելիք առնում, վորպեսզի ժողովրդին արատավորեք,
իմացեք, ստախոսներ և վաշխառուներ, վոր ձեր բոլոր կառափնատների,
ձեր մոլութիւնն,

և նրա համար, վոր դուք, վորպես վորդեր, ծծում ելիք միամիտ
ու բարի մուրացկաններին,

և նրա, վոր, խոստանալով, խաբում ելին շուրթերն արքայական
և, դրժելով չերդումը, քրքջում ելին—
այս բոլորի համար ներումով կպատժե ձեզ ժողովուրդը. նրան
պետք էն ձեր գլուխները.

զգվելի չե նրան դաժան վոխակալութիւնն արքաների:
Բայց հեղ ներողամտութիւնը ծնում է կորուստ անողոր,— և սարսափահար
արքաները ահա դառնում են չեռ—

անցնում են հպարտ ու հանդիսավոր, և ամեն մեկին շրջապատում է
շքախումբը—տերտեր, բռնաբարող,
դահիճ, բանդապետ, դատավոր,
վաճառական, գինվոր ու լրտես:

Իսկ բոլորի չեռից, տես, ինչ-վոր ուրվական է սողում գաղտագողի,
ինչպես մառախլապատ գիշեր.

ամբողջովին կարմիր, ճակատը, գլուխը և մարմինը արնավառ
ծալքերով ծածկած:

Ձեն լերեում վոչ դեմքը, վոչ աչքերը:

Բայց իր այդ ալ-կարմիր գգեստների տակից, վոր վեր են բարձրացվում
ինչ-վոր անհայտ ձեռքով,

ահավասիկ մի մտտ, վոր ցույց է տալիս հեռուն, հորիզոնները—
լերեում է, ինչպես ոճի գլուխ:

Իսկ թարմ գերեզմաններում պառկած են, արնաթաթախ,
լերիտասարդ մարմիններ,

և ձգված են պարանները կախաղանների, և շաչում են տերերի
գնդակները,

և բռնակալները քրքջում են բարձր—բայց այս ամենը կտան պտուղներ,
և առատ կլինի նրանց հունձքը:

Այդ դիերը պատանիների,

այդ նախատակները, ողակներից կախված, գորշ արճիճով ծածկված
այդ սրտերը,—

նրանք անշարժ են և պաղ, բայց և այնպես ապրում են նրանք
հավիտյան, և անհնարին է նրանց սպանելը.

նրանք ապրում են, ո՛ արքաներ, մնացած իրենց պես ջահել սրտերում,
մնացած չեղբայրներում են ապրում նրանք, նրանցում, վոր պատրաստ են
ձեր դեմ կրկին ապստամբելու,

նրանք մաքրվեցին, սրբացան նրանք մահով, մահը մեծարեց նրանց և
իմաստավորեց:

Ազատութիւն համար ամեն մի մեռածի վրա, ամեն մի գերեզմանից կծլի
ազատութիւն սերմը, իսկ նրանից—նորը.

հեռու-հեռու կտանեն քամիները նրան՝ գալիք սերունդների համար,
կզուրգուրեն նրան անձրևներն ու ձյունները:

Ո՛, ամեն մի հոգի, վոր թողել է մարմինը՝ բռնակալ դահիճներից
զարկված—

անտեսանելի ճախրում է աշխարհի վրայով, շնջում է, կանչում, հսկում:
Ազատութիւն. թող հուսալքվեն ուրիշները. չեա չեմ հուսալքվի չերեք:
Ի՞նչ: Այս տունը գամված է. տերը տե՛ղ է գնացել,—

վոչինչ. շուտով նա կգա. սպասեցեք նրան:

Պատրաստվեցեք դիմավորելու նրան.—արդեն գալիս են նրա
համբավաբերները:



Ց Ա Ն Կ

	Եջ
Վ. Ռեյմոնս	3
Վ. Պոլենց	17
Ո. Միքրո	28
Եմիլ Զոլյա	33
Ջեկ - Լոնգոն	54
Ուպսոն Սինկլեր	70
Թոմաս Հուդ	86
Ադա Նեգրի	88
» »	89
Եմիլ Վերհարն	89
» »	91
» »	92
Ուիս Ուիսմեն	92

hpr

ՀՀ Ազգային գրադարան



NL0170919

3 4 5

1	1	1
2	2	2
3	3	3
4	4	4
5	5	5
6	6	6
7	7	7
8	8	8
9	9	9
10	10	10
11	11	11
12	12	12
13	13	13
14	14	14
15	15	15
16	16	16
17	17	17
18	18	18
19	19	19
20	20	20
21	21	21
22	22	22
23	23	23
24	24	24
25	25	25
26	26	26
27	27	27
28	28	28
29	29	29
30	30	30
31	31	31
32	32	32
33	33	33
34	34	34
35	35	35
36	36	36
37	37	37
38	38	38
39	39	39
40	40	40
41	41	41
42	42	42
43	43	43
44	44	44
45	45	45
46	46	46
47	47	47
48	48	48
49	49	49
50	50	50
51	51	51
52	52	52
53	53	53
54	54	54
55	55	55
56	56	56
57	57	57
58	58	58
59	59	59
60	60	60
61	61	61
62	62	62
63	63	63
64	64	64
65	65	65
66	66	66
67	67	67
68	68	68
69	69	69
70	70	70
71	71	71
72	72	72
73	73	73
74	74	74
75	75	75
76	76	76
77	77	77
78	78	78
79	79	79
80	80	80
81	81	81
82	82	82
83	83	83
84	84	84
85	85	85
86	86	86
87	87	87
88	88	88
89	89	89
90	90	90
91	91	91
92	92	92
93	93	93
94	94	94
95	95	95
96	96	96
97	97	97
98	98	98
99	99	99
100	100	100

ОБРАЗЦЫ
ИЗ ЕВРОПЕЙСКОЙ ЛИТЕРАТУРЫ
Сост. Е. Чаренц



ԳԻՆԸ 50 Կ.

Հր. № 878: Գրառեպիտար № 1783 (բ): Տիրաժ 8000

Պետհրատի ազգային տպարանի Վաղարշապատում: Պատվեր № 61: